

# Green Key չափանիշներ և բացատրական ծանոթագրություններ Հյուրատներ

Հունվար 1, 2022-Դեկտեմբեր 31, 2026

## Ներածություն

Green Key հյուրատների չափանիշները կիրառելի են փոքր հյուրանոցների, հոսթելների և հյուրատների, B&B-ների, Էկո-օթյակների, Էկո-ֆերմաների և նմանատիպ այլ հաստատությունների համար, որոնք ունեն առավելագույնը 15 ննջասենյակ:

Green Key-ին դիմելու համար դիմորդ հաստատությունը պետք է պաշտոնապես գրանցված լինի որպես հյուրատուն, իսկ գրանցման վկայականում այս գործառույթը պաշտոնապես պետք է գրանցված լինի որպես հիմնական գործունեության տեսակ:

## Չափանիշներ և բացատրական ծանոթագրություններ

(I)-ով նշված չափորոշիչները պարտադիր չափանիշներ են (Imperative), մինչդեռ (G)-ով նշվածները կոչվում են ուղեցույց չափանիշներ (Guideline):

Հաստատությունը պետք է համապատասխանի բոլոր (I) չափորոշիչներ, և ամեն տարի ավելացնի (G) չափորոշիչների տոկոսը (տե՛ս ստորև ներկայացված աղյուսակը):

Տարի	Ընդհանուր ուղեցույցի չափանիշների տոկոսը
1	0%
2	5%
3	10%
4	15%
5-9	20%
10+	50%

## 1. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ԿԱՌՎԱԿՐՈՒՄ

<p>1.1</p>	<p>Հաստատության ղեկավարությունը պետք է լինի ընգրկված և աշխատակազմից նշանակի բնապահպանական հարցերով պատասխանատու (I)</p>	<p>Համոզվելու համար, որ Green Key-ն պատշաճ կերպով իրականացվում և կառավարվում է, հաստատության ղեկավարությունը պետք է պատասխանատվություն ստանձնի հաստատության աշխատակազմից նշանակել բնապահպանական հարցերով պատասխանատուի:</p> <p>Բնապահպանական հարցերով պատասխանատուն հիմնականում կատարում է կետորոշյալ համապատասխան գործառույթ: Այս պաշտոնը պետք է նշված լինի այդ անձի աշխատանքային պարտականությունների նկարագրության մեջ:</p> <p>Բնապահպանական հարցերով պատասխանատուի հիմնական գործառույթներն են.</p> <ul style="list-style-type: none"> <li>• Բնապահպանական/ կայուն զարգացմանն առնչվող բոլոր հարցերի դեպքում լինել ղեկավարության, աշխատակազմի, մատակարարների և Green Key-ի ազգային/ միջազգային ներկայացուցիչների հետ կոնտակտային անձ</li> <li>• Պատասխանատվություն կրել աշխատակազմի մյուս անդամներին սովորեցնել և աջակցել բնապահպանությանը/ կայուն զարգացմանը վերաբերող հարցերում</li> <li>• Պատասխանատվություն կրել մաքրման, թափոնների, ինչպես նաև գազի, ջրի և էլեկտրականության արդյունավետ օգտագործման վերաբերյալ բնապահպանական տվյալների հավաքագրման, կառավարման և թարմացման համար</li> <li>• Պատասխանատվություն կրել հաստատության բնապահպանական քաղաքականության և գործողությունների ծրագրի մշակման և իրականացման համար</li> <li>• Պատասխանատվություն կրել աշխատակազմից և հյուրերից կայուն զարգացման վերաբերյալ նոր գաղափարների և նախաձեռնությունների հավաքագրման և կազմակերպման համար</li> </ul> <p>Բնապահպանական հարցերով պատասխանատուն վերահսկում է Green Key-ի դիմումի և վերադիմումի հետ կապված հաղորդակցությունը: Հաստատության բնապահպանական հարցերով պատասխանատուի փոփոխության դեպքում հաստատությունը պետք է տեղյակ պահի Green Key-ին:</p>
------------	---	--

		<p>Աուդիտի ընթացքում բնապահպանական հարցերով պատասխանատուն սովորաբար ներկա է գտնվում պատասխանելու հարցերին և ներկայացնելու այն աշխատանքը, որն իրականացվել է հաստատությունում շրջակա միջավայրի խնդիրների և մասնավորապես Green Key-ի չափանիշների հետ կապված:</p>
1.2	<p>Հաստատությունը պետք է ձևակերպի կայունության քաղաքականություն (I)</p>	<p>Հաստատության կայուն զարգացման աշխատանքների ընդհանուր շրջանակն ապահովելու համար կազմվում է կայուն զարգացման քաղաքականություն, որը նաև կոչվում է Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության (ԿՍՊ) քաղաքականություն: Այն նկարագրում է հաստատության Էկոլոգիական, սոցիալական և տնտեսական ազդեցության հետ առնչվող ընդհանուր նպատակներն ու ձգտումները: Կայուն զարգացման քաղաքականությունը պարտավորեցնում է շարունակական բարելավումներ և իրականացնել մշտադիտարկում, սակայն չի անդրադառնում հստակ խնդիրներին կամ դրանց լուծման եղանակներին: Կայուն զարգացման քաղաքականությունը պետք է լինի ավելի հավակնոտ, քան օրենսդրությանը և կանոնակարգերին պարզապես համապատասխանելը: Հաստատության կայուն զարգացման քաղաքականությունը պետք է վերանայվի յուրաքանչյուր երեք տարին մեկ շարունակական բարելավման նպատակով:</p> <p>Կայուն զարգացման քաղաքականությունը պետք է ներառի.</p> <p>ա) հաստատության շրջակա միջավայրի պարտավորությունների և նպատակների ներկայացում,</p> <p>բ) հաստատության սոցիալական/ մշակութային/ տնտեսական/ որակային պարտավորությունների և նպատակների ներկայացում:</p> <p>Շրջակա միջավայրի պարտավորությունը պետք է ներառի.</p> <ul style="list-style-type: none"> <li>• ռեսուրսների սպառում (Էներգիա, ջուր և այլն)</li> <li>• շրջանաձև տնտեսության սկզբունքները կիրառելու միտում</li> <li>• շրջակա միջավայրի աղտոտիչների, օրինակ՝ մաքրման քիմիական նյութերի, օդի աղտոտիչների և պարարտանյութերի/ պեստիցիդների սպառում և մշտադիտարկում</li> <li>• ածխածնային հետքի կրճատում</li> <li>• աջակցություն տեղական կամ միջազգային կենսաբազմազանության պաշտպանությանը</li> </ul> <p>Սոցիալական, մշակութային և տնտեսական պարտավորությունը պետք է ներառի.</p>

- աշխատանքային իրավունքներ և հավասարություն (ներառյալ երեխաների աշխատանքի շահագործման արգելքը)
- անվտանգ և ապահով աշխատանքային միջավայր
- ռիսկերի և ճգնաժամի կառավարում
- հակակոռուպցիոն պայքար
- կոմերցիոն, սեռական կամ ցանկացած այլ ձևի շահագործման կամ ոտնձգության ընդդիմություն, հատկապես երեխաների, ծերերի, կանանց, փոքրամասնությունների և խոցելի այլ խմբերի հանդեպ
- մարդկանց հավասար իրավունքների և վերաբերմունքի աջակցություն
- աշխատանքի ընդունում բոլոր պաշտոններում, այդ թվում՝ ղեկավար (հատկապես տեղաբնակներին / փոքրամասնություններին)՝ առանց տարիքային, ռասայական, գենդերային, կրոնական, հաշմանդամության, սոցիալ-տնտեսական կարգավիճակի և այլ հիմքով խտրականության
- վերապատրաստում, տեղեկատվության ապահովում և իրազեկվածության բարձրացում
- աջակցություն տեղի համայնքին
- աջակցություն հաստատության ներգրավմանը տեղական կայուն զբոսաշրջության ծրագրերի մշակման և կառավարման գործընթացում

Խրախուսվում է, որ կայունության քաղաքականությունը մշակվի աշխատակազմի հետ համագործակցությամբ և ներառի ներդրումներ և՛ ղեկավարության, և՛ աշխատակազմի կողմից: Կայունության քաղաքականությունը սովորաբար ստորագրում է հաստատության գլխավոր ղեկավարը: Մշակումից հետո կայունության քաղաքականությունը հասանելի է հաստատության բոլոր աշխատակիցներին:

Խրախուսելի է յուրաքանչյուր հաստատության՝ սեփական կայունության քաղաքականություն ունենալը, սակայն եթե հաստատությունը հանդիսանում է միջազգային կամ ազգային ցանցի մաս, կարելի է կայունության մեկ միասնական քաղաքականություն կիսել միևնույն շղթայում:

Առողջի ընթացքում հաստատությունը ներկայացնում է կայունության քաղաքականության փաստաթուղթը և հաստատում է դրա հասանելիությունը հաստատության աշխատակազմին: Կիրականացվի ստուգում՝ համոզվելու, որ

		<p>կայունության քաղաքականության վաղեմության եռամյա ժամկետը չի լրացել, և որ այն ընդհանրական փաստաթուղթ է, որը ներառում է բնապահպանական, ինչպես նաև սոցիալ-մշակութային և տնտեսական խնդիրներ:</p>
<p>1.3</p>	<p>Հաստատությունը պետք է ձևակերպի նպատակներ և տարեկան գործողությունների ծրագիր՝ հանուն շարունակական բարելավման (I)</p>	<p>Կայունության վերաբերյալ հաստատության առավել հստակ ծրագիր ապահովելու համար սահմանվում են նպատակներ, և մշակվում է գործողությունների տարեկան ծրագիր: Նպատակները և տարեկան գործողությունների ծրագիրը արտացոլում են կայուն զարգացման քաղաքականության իրականացվելիք ստույգ աշխատանքները և ներառում են հաջորդ 1-3 տարիների նպատակները, ինչպես նաև հստակ գործողություններ, որոնք նախատեսվում է իրականացնել ծրագրավորված նպատակներին հաջորդ տարում հասնելու համար:</p> <p>Որպեսզի կայունության կառավարման երկարաժամկետ համակարգի համար սահմանվեն հաստատության չափին և ծավալին համապատասխան հստակ նպատակներ և գործողություններ, հաստատության նպատակների և գործողությունների ծրագիրը պետք է ներառի բնապահպանական խնդիրներ, ինչպես նաև հղում կատարի սոցիալական, մշակութային, տնտեսական, որակական, մարդու իրավունքների, առողջության, ռիսկերի և ճգնաժամերի կառավարման խնդիրներին: Խիստ խրախուսվում է մշակել կայունության քաղաքականությունը աշխատակազմի հետ համատեղ՝ ներառելով ներդրումներ և՛ ղեկավարությունից, և՛ աշխատակազմից:</p> <p>Ակնկալվում է, որ հաստատությունը կձևակերպի իր գործունեության ոլորտներից գործողության առնվազն երեք կետ: Նպատակների և տարեկան գործողությունների ծրագիրը կազմելիս՝ խրախուսվում է ոգեշնչման համար օգտագործել Green Key չափորոշիչները՝ ինչպես ուղեցույցի դեռևս չկիրառված չափանիշներին համապատասխանելու, այնպես էլ բարելավել ներգրավվածությունն ուղեցույցի արդեն իսկ իրականացված չափանիշներին համապատասխան: Հարկ է նշել, որ Green Key մրցանակը ստանալու հաջորդող տարիների ընթացքում ևս հաստատությունը պետք է համապատասխանի ուղեցույցի ավելացող չափանիշներին: Արդեն իսկ իրականացված նպատակներն ու գործողությունները չեն կարող ավելացվել նոր նպատակներին և տարեկան գործողությունների ծրագրին:</p> <p>Եթե հաստատությունն շղթայի մի մաս է, կարող են համընկնումներ լինել շղթայի ներսում և Green Key-ում ձևավորված նպատակների/ գործողությունների միջև:</p>

		<p>Աուդիտի ընթացքում կատարվում է գալիք տարվա նպատակների և տարեկան գործողությունների ծրագրի փաստաթղթի առկայության, բովանդակության և հաստատության աշխատակազմին դրա հասանելիության վերաբերյալ վարչական ստուգում: Ստուգվում է փաստաթղթում կայունության տարբեր ոլորտներում գործողության առնվազն երեք կետի առկայությունը: Եթե հաստատությունը մեկ տարուց ավել է, ինչ Green Key մրցանակի է արժանացել, կատարվում է նաև նախորդ տարվա նպատակների և տարեկան գործողությունների ծրագրի համար կատարված աշխատանքի գնահատում: Եթե որևէ տեղ նախատեսված գործողությունները չեն իրականացվել, կատարվում է քննարկում, թե ինչու դիմորդ հաստատությունը նախորդ տարում չի կարողացել իրականացնել նախատեսված գործողությունը, և թե ինչ վերականգնողական գործողություն կարելի է կատարել:</p>
1.4	<p>Green Key-ին առնչվող բոլոր փաստաթղթերը պետք է պահվեն թղթապանակում՝ պատրաստ ստուգման: (I)</p>	<p>Որպեսզի ամբողջ տեղեկությունը հեշտ հասանելի լինի, Green Key-ի թղթապանակը սովորաբար դասավորվում է՝ ըստ իր չափանիշների բաժինների և թվերի, և ներառում է յուրաքանչյուր չափանիշին համապատասխանող բոլոր փաստաթղթերը:</p> <p>Green Key-ի թղթապանակը կարող է լինել ֆիզիկական թղթապանակ՝ տարբեր փաստաթղթերի թղթային պատճեններով, կամ կարող է լինել էլեկտրոնային թղթապանակ՝ պանակներում դասավորված փաստաթղթերով (օրինակ՝ որպես հաստատության ներքին ցանցի (ինտրանետի) մաս): Ռեսուրսներ խնայելու նպատակով խորհուրդ է տրվում օգտագործել էլեկտրոնային թղթապանակ:</p> <p>Աուդիտի ընթացքում բնապահպանական հարցերով պատասխանատուն ներկայացնում է Green Key-ի թղթապանակը ստուգման Green Key-ի տարբեր չափանիշներին համապատասխանությունն ապացուցելու համար:</p>
1.5	<p>Հաստատությունը տեղի շահագրգիռ կողմերի հետ հիմնում է ակտիվ համագործակցություն: (I)</p>	<p>Այս չափանիշի նպատակն է ընդլայնել հաստատության ակտիվ դերը շրջակա միջավայրի մասին իրազեկվածությունը բարձրացնելու և գործընկերներին Էկոլոգիապես մաքուր գործելաճ խրախուսելու հարցում:</p> <p>Չափանիշը հիմնականում կենտրոնանում է բնապահպանական խնդիրների շուրջ համագործակցության վրա (օրինակ՝ տեղական կենսաբազմազանության պաշտպանություն), սակայն կարող է անդրադառնալ նաև սոցիալական, մշակութային, կրթական, տնտեսական, որակական, մարդու իրավունքների, առողջության, ռիսկերի և ճգնաժամերի կառավարման խնդիրներին: Հնարավորության դեպքում Green Key-ն հաստատությանը խրախուսում է համագործակցել շահագրգիռ կողմերի հետ, որոնք ներգրավված են տեղի պատմամշակութային, հնագիտական և հոգևոր նշանակության վայրերի ու ավանդույթների պաշտպանության ոլորտում:</p> <p>Շահագրգիռ կողմերը կարող են լինել հասարակական կազմակերպություններ, տեղական համայնքային խմբեր, տեղական իշխանություններ, տեղացի բնակիչներ, դպրոցներ, մատակարարներ, բնության հատուկ պահպանվող տարածքների ղեկավար մարմիններ և այլն:</p>

		<p>Տեղական համագործակցությունը կարող է լինել համայնքային դպրոցների հետ կրթության և/կամ կայունության վերաբերյալ նախաձեռնությունների շուրջ, թանգարանների հետ՝ աջակցելով նրանց խթանել տեղական ժառանգությունը, տեղական մատակարարների հետ (տեղական արտադրանքը գնելուց զատ), տեղական համայնքային խմբերի /զբոսաշրջության կառավարման կազմակերպությունների/ իշխանությունների հետ՝ կայուն զբոսաշրջության պլանավորման և կառավարման, համայնքային ենթակառուցվածքների և համայնքների սոցիալական զարգացման նախագծերի շուրջ (օրինակ՝ ասևիտարական պայմաններ):</p> <p>Տեղական համագործակցությունը, այդ թվում՝ համագործակցությունը կենսաբազմազանության և բնապահպանական նախաձեռնությունների (օրինակ՝ ծառատունկ, Էկոլոգիական վերականգնում, փոշոտողներին անհրաժեշտ միջավայրի ստեղծում, Էկոլոգիական միջանցքներ, բնապահպանություն, ավամաքրման միջոցառումներ և այլն) շուրջ խիստ խրախուսվում է:</p> <p>Որպեսզի համագործակցությունը հաստատվի, այն պետք է լինի երկուստեք ակտիվ համագործակցություն հաստատության և շահագրգիռ կողմերի միջև՝ ի շահ երկու կողմերի:</p> <p>Չյուրատները պետք է տեղի շահագրգիռ կողմերի հետ ունենան առնվազն մեկ (1) ակտիվ համագործակցություն:</p> <p>Առևտրի ընթացքում կստուգվեն տեղական առնվազն մեկ շահագրգիռ կողմի հետ ակտիվ համագործակցությունն ապացուցող փաստաթղթերը:</p>
1.6	<p>Հաստատությունը հաշվարկում է ածխածնային իր հետքը՝ օգտվելով ածխածնի չափման գործիքից: (G)</p>	<p>Այս չափանիշի օգնությամբ հաստատությունը հատկորոշում է ջերմոցային գազերի արտանետման իր աղբյուրները, օգտագործում է իր տարեկան սպառած Էներգիայի հաշվարկը և ջերմոցային գազերի արտանետումների այլ աղբյուրներ՝ գնահատելու ածխածնային իր տարեկան ողջ ոտնահետքը, ինչպես նաև ածխածնային արտանետումը մեկ հյուրի/ գիշերվա կամ մեկ շնչի հաշվով՝ օգտագործելով ածխածնի չափման գործիք: Հաշվարկը կարող է օգտագործվել՝ ստուգելու հաստատության ածխածնային արտանետումների տատանումները որոշ ժամանակահատվածի համար այն նվազեցնելու նպատակով:</p> <p>Կան ածխածնի չափման տարբեր գործիքներ՝ ճշգրտության տարբեր մակարդակներով: Հաստատությունների համար գործիքներից մեկը Չյուրանոցների ածխածնի կառավարման նախաձեռնությունն է (Hotel Carbon Management Initiative (HCMI)), որն ապահովում է հաստատության ածխածնային մոտավոր հաշվարկված ոտնահետքը: Գործիքը կարելի է գտնել <a href="#">Green Key-ի միջազգային կայքէջում</a>:</p>

		<p>Աուդիտի ընթացքում հաստատությունը ներկայացնում է ածխածնի չափման օգտագործված գործիքը և հաշվարկված արդյունքները:</p>
<p>1.7</p>	<p>Հաստատությունը սահմանում է ստույգ թիրախ՝ նվազեցնելու ածխածնային իր հետքը: (G)</p>	<p>Այս չափանիշով հաստատությունն օգտագործում է ածխածնային ոտնահետքի իր հաշվարկը որպես թիրախի ձևավորման հիմք՝ հետագայում նվազեցնելու ածխածնային արտանետումները որոշակի տոկոսով: Հաստատությունը նաև հասկանում է՝ ինչ գործողություններ են անհրաժեշտ թիրախին հասնելու համար, օրինակ՝ Էներգիայի սպառման նվազեցում, արդյունավետության բարձրացման միջոցառումների ավելացում և/կամ տեղում վերականգնվող Էներգիայի համակարգերի տեղադրում:</p> <p>Ածխածնային այն արտանետումները, որոնցից հնարավոր չէ խուսափել, հաստատությունը կարող է փոխհատուցել ածխածնի փոխհատուցման ծրագրի միջոցով: Սա կարող է լինել միջազգային հավաստագրման ծրագրով, օրինակ՝ Gold Standard հավաստագրված ծրագրով, կամ միջազգային/ազգային այլ ծրագրերով, օրինակ՝ Բնապահպանական կրթություն հիմնադրամի (ԲԿՀ) ղեկավարած <a href="#">Global Forest Fund</a>-ի միջոցով: Ածխածնի փոխհատուցումը ծառատունկի միջոցով կարող է կատարվել տեղում հաստատության հարակից տարածքում կամ մեկ այլ վայրում, սակայն ծառատունկը միշտ պետք աջակցի տեղական բնիկ բուսական և կենդանական աշխարհին:</p> <p>Աուդիտի ընթացքում հաստատությունը ներկայացնում է ածխածնի նվազեցման թիրախը և գործողությունները: Սա կարող է ներառվել տարեկան գործողությունների ծրագրում (տես չափանիշ 1.3): Եթե հաստատությունը արտանետումները փոխհատուցում է ծրագրի միջոցով, ապա պետք է ապահովի հավաստող փաստաթղթեր:</p>
<p>1.8</p>	<p>Հաստատությունը հաստատել է ածխածնային չեզոքություն՝ համաձայն Ձերմոցային գազերի արձանագրության 1-ին և 2-րդ ստանդարտի: (G)</p>	<p>Այս չափանիշով հաստատությունը երրորդ կողմի վավերացմամբ հավաստում է, որ իր գործունեությունը ծավալում է ածխածնային չեզոքությամբ:</p> <p>Հաստատությունից պահանջվում է կատարել ածխածնային ոտնահետքի ամենամյա հաշվարկ՝ ներառյալ սեփական կամ իր վերահսկողության տակ գտնվող աղբյուրների ուղիղ արտանետումները (1-ին շրջանակի արտանետումներ) և գնված Էլեկտրաէներգիայից գեներացվող անուղղակի արտանետումները (2-րդ շրջանակի արտանետումներ): Խորհուրդ է տրվում, բայց չի պահանջվում, որ հաստատությունը նաև հաշվի առնի մյուս բոլոր անուղղակի արտանետումները, որոնք տեղի են ունենում հաստատության արժեքային շղթայում (3-րդ շրջանակի արտանետումներ):</p>



		<p>Այս չափանիշին համապատասխանելու համար հաստատությունը պետք է համոզվի, որ.</p> <ul style="list-style-type: none"> <li>• ածխածնային ոտնահետքի հաշվարկները վավերացված են երրորդ անկախ հաստատողի/ աուդիտորի կողմից՝ համաձայն Greenhouse Gas (GHG) Protocol-ի կամ միջազգայնորեն ճանաչված ցանկացած այլ ուղեցույցի և չափանիշների, ինչպիսիք են՝ ISO 14064-ը կամ PAS 2060-ը,</li> <li>• այն իրականացրել է արտանետումների մշտադիտարկման և նվազեցման ռազմավարություն,</li> <li>• առաջին և երկրորդ շրջանակների անխուսափելի արտանետումները փոխհատուցվել են՝ առաջին շրջանակի արտանետումների համար օգտագործելով «Ածխածնի նվազեցման և փոխհատուցման միջազգային դաշինքի» կողմից ճանաչված ստանդարտների ածխածնի փոխհատուցումներ, իսկ երկրորդի համար՝ <a href="#">RECS</a>-ի կողմից ճանաչված էներգետիկ բնութագրի հավաստագիր կամ ածխածնի փոխհատուցումներ:</li> </ul> <p>Աուդիտի ընթացքում հաստատությունը ներկայացնում է ա) ածխածնային ոտնահետքի վավերացման փաստաթուղթ անկախ, հավատարմագրված աուդիտորի կողմից, բ) ածխածնի նվազեցման տվյալ տարվա թարմացված ռազմավարությունը և գ) ածխածնի փոխհատուցումները և/կամ էներգետիկ բնութագրի հավաստագիրը, որը հաստատում է, որ ածխածնային ամբողջական արտանետումները փոխհատուցված են՝ ածխածնի կրեդիտների պատշաճ քանակի և/կամ ճանաչված ռեզիստորների էներգետիկ բնութագրի հավաստագրերի օգտագործմամբ:</p>
1.9	<p>Հաստատությունն իր հյուրերին առաջարկում է իրենց արտանետումները ածխածնի վերահսկման ծրագրի միջոցով փոխհատուցելու հնարավորություն: (G)</p>	<p>Այս չափանիշով հաստատությունն իր հյուրերին առաջարկում է իրենց այցի և/կամ ճամփորդության ընթացքում գեներացրած ածխածնային արտանետումները փոխհատուցելու տարբերակը:</p> <p>Հաստատությունը, հաշվարկելով իր միջին ածխածնային արտանետումը յուրաքանչյուր հյուրի կամ յուրաքանչյուր հյուրի/ սենյակի մեկ գիշերվա համար (տես չափանիշ 1.6), առաջարկում է հյուրերին հնարավորությունն ՝ փոխհատուցելու իրենց կեցության ընթացքում առաջացած ածխածնային արտանետումները: Բացի այդ, հաստատությունը կարող է առաջարկել հյուրերին փոխհատուցելու նաև իրենց ճանապարհորդության ընթացքում հաստատությունն հասնելու և վերադառնալու ընթացքում առաջացած ածխածնային արտանետումները:</p> <p>Փոխհատուցումը պետք է կատարվի ածխածնի փոխհատուցման ծրագրի միջոցով, օրինակ միջազգային հավաստագրում ունեցող ծրագրի, ինչպիսին է Gold Standard-ը, կամ միջազգային/ազգային այլ ծրագրերի, օրինակ՝ Բնապահպանական կրթության հիմնադրամի կողմից ղեկավարվող <a href="#">Global Forest Fund</a>-ը:</p>

		<p>Հաստատությունն առաջարկում է ածխածնի փոխհատուցումը՝ հյուրերի մեջ խթանելով ածխածնի փոխհատուցման ծրագիր և նրանց ապահովելով դրա մասին տեղեկությամբ և հղումով: Որպես այլընտրանք, հաստատությունը կարող է նաև հավաքել հյուրերի ածխածնի փոխհատուցման դրամական միջոցները և դրանք ուղղել ածխածնի փոխհատուցման ծրագրին:</p> <p>Հաստատությունը կարող է ածխածնի փոխհատուցումն առաջարկել կա՛մ անձամբ հյուրերին, կա՛մ այն ընկերություններին, որոնք կազմակերպում են հյուրերի այցը հաստատություն (օրինակ՝ տուր օպերատորներ, խմբային տուրի կազմակերպիչներ, համաժողովի կազմակերպիչներ և այլն):</p> <p>Առողջի ընթացքում հաստատությունը ներկայացնում է տեղեկությունը, որ տալիս է իր հյուրերին ածխածնի փոխհատուցումից օգտվելու և իրենց այցելությունը և/կամ հաստատություն գնալու և այնտեղից վերադառնալու ճանապարհորդությունը հատուցելու համար:</p>
--	--	--

**2. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ**

2.1	<p>Ղեկավարությունը պարբերական հանդիպումներ է կազմակերպում անձնակազմի հետ տեղեկացնելու բնապահպանական ընթացիկ և նոր նախաձեռնությունների մասին: (1)</p>	<p>Հաստատությունում բնապահպանության/կայունության մասին իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով կարևոր է, որ ղեկավարությունը, բնապահպանական հարցերով պատասխանատուն տեղեկացնի աշխատակազմին և նրանց ներգրավեն հաստատության կողմից կազմակերպվող բնապահպանական/կայունության նախաձեռնություններին:</p> <p>Բնապահպանական/կայունության նախաձեռնությունների մասին աշխատակազմին իրազեկելը թույլ է տալիս նրանց ավելի լավ պատկերացում կազմել աշխատանքում սեփական դերի և ազդեցության մասին, ինչպես նաև հյուրերին պատշաճ կերպով տեղեկացնել և պատասխանել թեմայի վերաբերյալ նրանց հարցերին: Աշխատակազմը ոչ միայն տեղյակ է լինում բնապահպանական/կայունության նախաձեռնություններից, այլ նաև հնարավորություն է ունենում նպաստել գաղափարներով և առաջարկներով:</p>
-----	--	---

		<p>Տեղեկությունը ներառում է բնապահպանական կառավարման խնդիրները (օրինակ՝ ջուր, էներգիա, թափոն, մաքրություն, սնունդ և ըմպելիք, ինչպես նաև շրջանաձև տնտեսության սկզբունքներ՝ նվազեցնել, վերօգտագործել, վերամշակել և այլն), կայունությանն առնչվող այլ խնդիրները (օրինակ՝ տեղական կենսաբազմազանության խնդիրներ) և հյուրերի, աշխատակազմի, մատակարարների և շրջապատող համայնքի իրազեկվածության բարձրացման խնդիրները: Green Key-ի վերաբերյալ տեղեկությունը նույնպես պետք է հաղորդել անձնակազմին:</p> <p>Չեռևաբար, հաստատության ղեկավարությունը սովորաբար կազմակերպում է տարեկան առնվազն 1-3 ժողով: Ժողովները պլանավորելիս՝ կարևորվում են սեզոնային աշխատակիցները, որպեսզի հնարավորինս շատ աշխատակիցների մասնակցությունն ապահովվի:</p> <p>Այս չափանիշը հաշվի է առնում ինչպես հաստատության աշխատակիցներին, այնպես էլ արտաքին ընկերության կողմից աշխատանքի ընդունված պայմանագրով աշխատողներին:</p> <p>Առևտրի ընթացքում ներկայացվում են ղեկավարության և աշխատակազմի ժողովների ամփոփագրերը/ նշումները/ մասնակիցների ցանկերը, որոնք ներառում են ներկաների անուններն ու բնապահպանության/կայունության վերաբերյալ քննարկված խնդիրները: Եթե հաստատությունը դիմում է առաջին անգամ, այն պետք է ներկայացնի նախատեսվող հանդիպումների մասին տեղեկատվություն: Եթե աշխատակիցների թիվը հինգից պակաս է, տեղի ունեցած ժողովների մասին տեղեկությունը կարելի է ներկայացնել բանավոր: Առևտրորդ կարող է նաև հարցազրույց անցկացնել աշխատակազմի հետ՝ պարզելու հաստատության բնապահպանական նախաձեռնությունների մասին նրանց իրազեկվածության մակարդակը:</p>
2.2	<p>Աշխատակազմի անդամները պետք է անցնեն բնապահպանությանն ու կայունությանն առնչվող խնդիրների շուրջ</p>	<p>Կարևոր է, որ բնապահպանական հարցերով պատասխանատուն և աշխատակազմի մյուս անդամներն անցնեն հատուկ վերապատրաստում բնապահպանության և կայունության վերաբերյալ խնդիրների շուրջ, որպեսզի հաստատությանը համապատասխան և իրագործելի լուծումները դառնան նպատակ և իրականացվեն:</p> <p>Վերապատրաստումը ներառում է բնապահպանական կառավարմանն առնչվող խնդիրները (ջուր, էներգիա, թափոն, վտանգավոր քիմիական նյութեր, մաքրություն, սնունդ և ըմպելիք, օդի որակ, տեխնիկայի էկոլոգիապես մաքուր կիրառում, շրջանաձև տնտեսության սկզբունքներ՝ նվազեցնել, վերօգտագործել, վերամշակել և այլն), հյուրերի,</p>

<p>ամենամյա վերապատրաստում: (1)</p>	<p>աշխատակազմի, մատակարարների և շրջապատող համայնքի իրազեկվածության բարձրացման և կայունությանն առնչվող այլ խնդիրները, որոնք անդրադառնում են կլիմայի փոփոխությանը, տեղական կենսաբազմազանությանը, սոցիալ-մշակութային, տնտեսական, որակական, մարդու իրավունքների, առողջության, ռիսկերի և ճգնաժամերի կառավարման խնդիրներին: Վերապատրաստումը պետք է տեղեկություն ներառի Green Key-ի մասին, ինչպես նաև կարող է ընդարձակվել՝ տեղեկացնելով հաստատության կամ նրա շրջակայքի այլ խնդիրների (օրինակ՝ կենսաբազմազանության պաշտպանություն) մասին:</p> <p>Վերապատրաստումը կարող է լինել և՛ ներքին, և՛ արտաքին: Արտաքին վերապատրաստումը կարող է լինել խորհրդատուների, փորձագետների, ուղեկցորդների կամ արտադրանքի մատակարարների դասընթացների, ճանաչողական այցերի, սեմինարների մասնակցության, վեբինարների և առցանց այլ դասընթացների ու ցանցերի տեսքով: Որոշ երկրներում Green Key-ի սեմինարներն ու վեբինարները կազմակերպվում են՝ հատկապես կենտրոնանալով Green Key-ի չափորոշիչներին համապատասխանության միտումների և գաղափարների վրա: Այս հանդիպումները կարող են նաև օգտագործվել որպես Green Key վկայական ստացած հաստատությունների միջև կապերի հարթակ: Միջազգային/ ազգային շղթայի անդամ հաստատությունների համար հաճախ ցանցի ներսում կազմակերպվում են բնապահպանության և կայունության թեմաների շուրջ վերապատրաստումներ:</p> <p>Նաև կարևոր է, որ բնապահպանական հարցերով պատասխանատուի կողմից աշխատակազմի համար կազմակերպվեն ներքին դասընթացներ և վերապատրաստումներ, որոնք կսովորեցնեն՝ ինչպես հաստատությունում հասնել բնապահպանական նպատակներին և իրականացնել պլանավորված գործողությունները: Վերապատրաստումից բացի հաստատությունը կարող է առաջարկել ներգրավվել կայունության վերաբերյալ նախաձեռնություններին (օրինակ՝ մրցույթներ) և/կամ աշխատակազմի համար սահմանել պարզևատրման համակարգ:</p> <p>Աշխատակազմի յուրաքանչյուր անդամից սովորաբար ակնկալվում է մասնակցել հաստատության կողմից կազմակերպված տարեկան առնվազն 1-3 վերապատրաստման: Նոր աշխատակիցները սովորաբար պետք է անցնեն վերապատրաստումն աշխատանքի ընդունվելուց հետո առաջին չորս շաբաթվա ընթացքում:</p>
-------------------------------------	---

		<p>Հաստատության անձնակազմ չհանդիսացող, բայց ամենօրյա ռեժիմով աշխատող անձանց (օրինակ՝ արտաքին ընկերության կողմից աշխատանքի ընդունված տնտեսվարողներ) նույնպես խրախուսվում է անցնել բնապահպանության և կայունության վերաբերյալ խնդիրների շուրջ նույն վերապատրաստումը:</p> <p>Առևտրի ընթացքում պետք է ներկայացվի փաստաթուղթ, որը ցույց կտա նախորդ 12 ամիսների ընթացքում տեղի ունեցած ներքին/ արտաքին վերապատրաստումները բնապահպանական կառավարման, իրազեկվածության բարձրացման և կայունությանն առնչվող այլ հարցերում ներգրավման մասին՝ ներառելով մասնակիցների վերաբերյալ տեղեկություն: Եթե հաստատությունը դիմում է առաջին անգամ, այն պետք է ներկայացնի նախատեսվող հանդիպումների ցանկը: Տեղում ստուգման ընթացքում առևտրորդ կարող է հարցել տալ աշխատակազմի անդամներին՝ հաստատելու, որ նրանք անցել են վերապատրաստում:</p>
2.3	<p>Մաքրության աշխատանքներն իրականացնողները պետք է իմանան և ընդունեն սրբիչների և անկողնային պարագաների փոփոխության ընթացակարգը: (I)</p>	<p>Ածխածնային հետքը նվազեցնելու և լվացման ու մաքրման գործընթացների հետ կապված ծախսերը կրճատելու համար կարևոր է, որ համապատասխան աշխատակիցներն իմանան/հասկանան անկողնային պարագաներն ու սրբիչներն ըստ պահանջի փոխելու վերաբերյալ ընթացակարգը և/կամ ցուցադրված նշանները:</p> <p>Բացի հյուրերի համար սրբիչներն ու անկողնային պարագաները (տե՛ս չափանիշ 5.1 և 5.2) վերօգտագործելու տարբերակն ունենալուց, կարևոր է, որ աշխատակիցներն այս գործընթացի մասին տեղեկացված լինեն և ընդունեն այն: Ընթացակարգերը չպահպանելը վնասում է շրջակա միջավայրին և ավելացնում է անհարկի ծախսեր, իսկ եթե հյուրերը տեղեկանան սխալ կառավարման/թերությունների մասին, դա կարող է ազդել ինչպես հաստատության, այնպես էլ Green Key-ի վարկանիշի վրա:</p> <p>Հետևաբար, մաքրության աշխատանքներն իրականացնողների համար նախատեսված տեղեկության և վերապատրաստման մի մասը պետք է ներառի այս ամենի վերաբերյալ հաստատության ընթացակարգերին նրանց ծանոթացնելը: Աշխատակիցների համար պետք է նաև սահմանվեն գործընթացների ստանդարտ ընթացակարգեր (SOP)՝ համոզվելու, որ նրանք հետևում են սրբիչների ու անկողնային պարագաների վերօգտագործման ընթացակարգերին: Եթե աշխատանքներին իրականացվում են արտաքին ընկերության կողմից է, նրանց վերապատրաստումը պետք է լինի ընկերության հետ պայմանագրի մի մաս:</p>

		<p>Առևտրի ընթացքում ստուգվում է, որ սրբիչների ու անկողնային պարագաների վերագտագործման վերաբերյալ ընթացակարգերը գետեղված լինեն SOP-ում:</p>
<p><b>3. ՀՅՈՒՐԻՆ ՏՐԱՍՎԴՐՎՈՂ ՏԵՂԵԿՎՈՒԹՅՈՒՆ</b></p>		
<p>3.1</p>	<p>Green Key մրցանակը պետք է ցուցադրվի տեսանելի վայրում: (I)</p>	<p>Հաստատությունից պահանջվում է Green Key-ի ստանդարտ ցուցատախտակը տեղադրել տարածքի մուտքի մոտ, իսկ Green Key-ի ստանդարտ հավաստագիրը՝ ընդունարանի մոտ:</p> <p>Green Key-ի ցուցատախտակի և հավաստագրի լրացուցիչ պատճենները կարող են գնվել և տեղակայվել ռազմավարական այլ վայրերում (օրինակ՝ աշխատակազմի համար նախատեսված տեղեկատվական տախտակի վրա կամ ճաշարանում): Ցուցատախտակից և հավաստագրից զատ հաստատությունը կարող է նաև գնել Green Key-ի դրոշ:</p> <p>Մրցանակի ցուցադրումը հաստատությունն օգտագործում է որպես մարքեթինգային գործիք՝ ներկայացնելու Green Key մրցանակի արժանացումը և ապահովելու Green Key պիտակի տեսանելիություն:</p> <p>Առևտրի ընթացքում ստուգվում է, որ տվյալ ժամանակահատվածի համար Green Key-ի ստանդարտ ցուցատախտակն ու հավաստագիրը ցուցադրված լինեն: Եթե հաստատությունը նախկինում չի ստացել Green Key մրցանակ, ապա ներկայացվում են ցուցատախտակի և հավաստագրի ցուցադրման համար առաջարկվող վայրերը:</p>
<p>3.2</p>	<p>Green Key-ի մասին տեղեկությունը պետք է հյուրերին տեսանելի և հասանելի լինի: (I)</p>	<p>Հաստատությունն այցելող հյուրերը պետք է կարողանան գտնել տեղեկություն Green Key-ի վկայականը ստանալու համար բոլոր պահանջներին բավարարելու վերաբերյալ:</p> <p>Green Key-ի մասին տեղեկությունը կարող է հասանելի լինել հանրային վայրերում, եթե տեղակայված է տեսանելի վայրում, օրինակ՝ «բնապահպանական անկյուն»-ում, հանրային վայրերի հեռուստատեսությաններին, ընդունարանի տեղեկություններում և այլն: Green Key-ի մասին տեղեկությունը կարող է նաև հասանելի լինել տեղեկատվական թղթապանակներում, հյուրերի/ հանդիպումների սեյակների հեռուստատեսությաններին և/կամ հյուրերի համար</p>

		<p>Նախատեսված ծրագրերում: Green Key տարբերակը (ճիշտ ձևաչափով) սովորաբար ցուցադրվում է՝ որպես տեղեկության մի մաս:</p> <p>Որպես Green Key ծրագրին միանալու պայման՝ հաստատությունը պետք է բոլոր նյութերում և հաղորդակցության մեջ ապահովի հաստատության, իր ծառայությունների և արտադրանքի, այդ թվում՝ կայունությանն առնչվող պնդումների մասին ճշգրիտ, պարզ և դյուրըմբռնելի տեղեկություն և չպետք է խոստանա ավելին, քան կարող է իրականացնել:</p> <p>Առևտրի ընթացքում ստուգվում է, որ Green Key-ի մասին տեղեկատվական նյութը հանրային վայրերում և/կամ հյուրերի/ հանդիպումների սենյակներում լինի տեսանելի և հասանելի: Եթե հաստատությունը նախկինում չի ստացել Green Key մրցանակ, ապա ներկայացվում են տեղեկատվական սևագրային նյութերը և այն վայր(եր)ը, որտեղ դրանք հասանելի կլինեն: Ստուգվում է նաև տեղեկության ճշգրիտ, պարզ և դյուրըմբռնելի լինելը:</p>
3.3	<p>Green Key-ի և բնապահպանական տեղեկությունը պետք է հասանելի լինի հաստատության կայքում: (1)</p>	<p>Հաստատության կայքը պետք է պարունակի Green Key ծրագրի մասին հակիրճ տեղեկություն և արձանագրի հաստատության կողմից մրցանակի ստացման փաստը: Ներառվում են նաև միջազգային Green Key-ի կայքի (<a href="http://www.greenkey.global">www.greenkey.global</a>) և/կամ ազգային Green Key-ի կայքի հղումները: Խրախուսվում է ցուցադրել Green Key-ի տարբերակը (ճիշտ ձևաչափով): Կայքը ցուցադրում է նաև համառոտ տեղեկություն հաստատության բնապահպանական նախաձեռնությունների վերաբերյալ: Տեղեկությունը ներկայացվում է՝ համաձայն հաստատության բրենդինգի սեփական ուղեցույցների:</p> <p>Ի հավելումն հաստատության կայքում զետեղված տեղեկության, հաստատությանը խրախուսվում է նաև Green Key-ի մասին տեղեկություն տեղադրել իր սոցիալական հարթակներում:</p> <p>Որպես Green Key ծրագրին միանալու պայման՝ հաստատությունը պետք է բոլոր հաղորդակցության և նմանատիպ այն նյութերում ապահովի հաստատության, իր ծառայությունների և արտադրանքի, այդ թվում՝ կայունությանն առնչվող պնդումների մասին ճշգրիտ, պարզ և դյուրըմբռնելի տեղեկություն և չպետք է խոստանա ավելին, քան կարող է իրականացնել:</p>

		<p>Աուդիտի ընթացքում ցուցադրվում է Green Key-ի և բնապահպանությանը վերաբերող կայքի տեղեկությունը: Եթե հաստատությունը նախկինում չի ստացել Green Key մրցանակ, ապա ներկայացվում են կայքի տեղեկատվական սևագրային նյութերը: Ստուգվում է նաև տեղեկության ճշգրիտ, պարզ և դյուրըմբռնելի լինելը:</p>
3.4	<p>Հաստատությունը պետք է հյուրերին տեղեկացնի և ներգրավի իր բնապահպանական աշխատանքներին և խրախուսի մասնակցել բնապահպանական նախաձեռնություններին: (I)</p>	<p>Կարևոր է, որ հաստատությունն իր հյուրերին տեղեկացնի իր բնապահպանական նախաձեռնությունների մասին տեղեկատվական նյութերի, հանրային վայրերի, հյուրերի/ հանդիպումների սենյակների հեռուստաէկրանների և/կամ հյուրերի համար նախատեսված ծրագրերի միջոցով:</p> <p>Բնապահպանական նախաձեռնությունների մասին տեղեկությունից բացի, կարևոր է նաև, որ հաստատությունն ավելացնի տեղեկություն այն մասին, թե ինչպես հյուրերը կարող են ներգրավվել և ակտիվորեն մասնակցել հաստատության բնապահպանական նախաձեռնություններին: Ակտիվ մասնակցությունը կարող է ներառել բնապահպանական կառավարում (օրինակ՝ ջրի, էներգիայի խնայում, թափոնների գոյացում/վերամշակում, սևոստանի թափոնի նվազեցում և այլն), սակայն կարող է նաև կենտրոնանալ կայունությանն առնչվող այլ խնդիրների վրա (օրինակ՝ տեղական կենսաբազմազանության պաշտպանություն, սոցիալական բարեգործությունների աջակցություն և այլն):</p> <p>Որպես Green Key ծրագրին միանալու պայման՝ հաստատությունը պետք է բոլոր հաղորդակցության և նմանատիպ այլ նյութերի մեջ ապահովի հաստատության, իր ծառայությունների և արտադրանքի, այդ թվում՝ կայունությանն առնչվող պնդումների մասին ճշգրիտ, պարզ և դյուրըմբռնելի տեղեկություն և չպետք է խոստանա ավելին, քան կարող է իրականացնել:</p> <p>Աուդիտի ընթացքում ներկայացվում է հյուրերին տրվող բնապահպանությանն ու կայունությանն առնչվող նախաձեռնությունների մասին տեղեկությունը՝ խրախուսելով հյուրերին մասնակցել այդ աշխատանքներին: Եթե հաստատությունը նախկինում չի ստացել Green Key մրցանակ, ապա ներկայացվում է հյուրերի համար նախատեսված սևագրային տեղեկությունը: Ստուգվում է նաև տեղեկության ճշգրիտ, պարզ և դյուրըմբռնելի լինելը:</p>
3.5	<p>Հյուրերին դիմավորող անձնակազմը պետք է կարողանա նրանց իրազեկել Green Key-ի և</p>	<p>Հաստատության մուտքի մոտ ցուցադրելով Green Key մրցանակը (ցուցատախտակ և հավաստագիր) և հանրային վայրերում, հյուրերի/ հանդիպումների սենյակներում և հաստատության կայքում Green Key-ի ու բնապահպանությանն ու կայունությանն առնչվող նախաձեռնությունների մասին տեղեկությունը՝ հյուրերի մոտ կարող է առաջանալ Green Key-ի մասին ավելին իմանալու հետաքրքրություն: Այդ դեպքում նրանք կարող են մոտենալ իրենց ընդունող</p>



	<p>հաստատության՝ բնապահպանությանն ու կայունությանն առնչվող ընթացիկ նախաձեռնությունների մասին: (I)</p>	<p>անձնակազմին (օրինակ՝ ընդունարանի աշխատակիցներին), հետևաբար, կարևոր է, որ այդ անձինք կարողանան հյուրերին տեղեկացնել Green Key-ի և հաստատության՝ բնապահպանությանն ու կայունությանն առնչվող ամենակարևոր նախաձեռնությունների մասին:</p> <p>Որպես Green Key ծրագրին միանալու պայման՝ հաստատությունը պետք է բոլոր հաղորդակցության և նմանատիպ այլ նյութերում ապահովի հաստատության, իր ծառայությունների և արտադրանքի, այդ թվում՝ կայունությանն առնչվող պնդումների մասին ճշգրիտ, պարզ և դյուրըմբռնելի տեղեկություն և չպետք է խոստանա ավելին, քան կարող է իրականացնել:</p> <p>Առողիտի ընթացքում հյուրերի ընդունելության համար պատասխանատու անձանցից կպահանջվի տրամադրել տարրական տեղեկություն Green Key-ի և հաստատության՝ բնապահպանությանն ու կայունությանն առնչվող ամենակարևոր նախաձեռնությունների մասին: Ստուգվում է նաև, որ տեղեկությունը լինի ճշգրիտ, պարզ և դյուրըմբռնելի:</p>
3.6	<p>Հաստատությունը տեղեկացնում և խրախուսում է հյուրերին օգտագործել տրանսպորտի կայուն այլընտրանքային տարբերակներ: (I)</p>	<p>Հաստատությունն հյուրերին մեքենաներից և տաքսիներից բացի տրանսպորտի այլ միջոցներից օգտվել խրախուսելու համար, իրագործելի և անվտանգ լինելու դեպքում, հաստատությունը պետք է կարողանա նրանց տեղեկացնել այդ այլընտրանքների մասին:</p> <p>Տրանսպորտի այլընտրանքային միջոցներից են՝</p> <ul style="list-style-type: none"> <li>• տրանսպորտային հանրային/ մասնավոր համակարգերը (ավտոբուս, գնացք, մետրո, տրամվայ, նավ և այլն),</li> <li>• ընդհանուր տաքսիների/ միկրոավտոբուսների համակարգերը,</li> <li>• բնապահպանական քաղաքականություն վարող ընկերությունների տաքսիները, օրինակ՝ Էլեկտրական մեքենաներ, բիովառելիք օգտագործող մեքենաներ,</li> <li>• հաստատության կողմից տրամադրվող երթուղային ավտոբուսներ,</li> <li>• տրանսպորտային այլ միջոցներ, այդ թվում՝ հեծանվային տարբերակներ և քայլելու այլընտրանք:</li> </ul> <p>Էլեկտրական մեքենաներ վարող հյուրերի համար հաստատությունը կարող է ունենալ Էլեկտրական փոխադրամիջոցների լիցքավորման խելացի կայան կամ տեղեկացնել մոտակա կայանների մասին:</p>

		<p>Տրանսպորտային տեղական համակարգերի և այլընտրանքների մասին տեղեկությունն ապահովում է հյուրերին ընդունող անձնակազմը կամ հանրային վայրերում կամ հյուրերի/ հանդիպումների սենյակներում հասանելի տեղեկատվական կայքերը:</p> <p>Որպես Green Key ծրագրին միանալու պայման՝ հաստատությունը պետք է բոլոր հաղորդակցության և նմանատիպ այլ կայքերում ապահովի հաստատության, իր ծառայությունների և արտադրանքի, այդ թվում՝ կայունությանն առնչվող պնդումների մասին ճշգրիտ, պարզ և ոլորդմբռնելի տեղեկություն և չպետք է խոստանա ավելին, քան կարող է իրականացնել:</p> <p>Առողիտի ընթացքում ներկայացվում է տեղի տրանսպորտային համակարգերի և այլընտրանքների մասին հաստատության տրամադրած տեղեկությունը: Ստուգվում է նաև, որ տեղեկությունը լինի ճշգրիտ, պարզ և ոլորդմբռնելի:</p>
3.7	<p>Հաստատությունն իր հյուրերին հնարավորություն է ընձեռում գնահատել իր գործունեությունը՝ ներառյալ, կայունությանն կատարողականը: (G)</p>	<p>Հետադարձ կապի հարցաթերթիկը կարող է հանդիսանալ հյուրերի՝ հաստատության գործունեության գոհունակության ցուցիչ: Ընդհանրական խնդիրներին անդրադառնալուց բացի (ինչպիսիք են՝ որակը, արժեքը, ծառայությունը և այլն), այն պետք է ընդգրկի նաև հաստատության՝ կայունության կատարողականին վերաբերող հարցեր:</p> <p>Եթե գնահատման մեջ հյուրերի նկատառումը պահանջում է ուղղիչ գործողություն, հնարավորության դեպքում հաստատությունն այն պետք է կատարի:</p> <p>Առողիտի ընթացքում հաստատությունը ցույց է տալիս կայունության կատարողականի գնահատման հարցաթերթիկը, ինչպես նաև օրինակներ, թե ինչպես է հյուրի նկատառումը դիտարկվում և օգտագործվում ուղղիչ գործողություններում:</p>
<p><b>4. ՋՈՒՐ</b></p>		
4.1	<p>Ջրի սպառման ամբողջական ծավալը պետք է արձանագրվի առնվազն ամսական մեկ անգամ: (I)</p>	<p>Որպեսզի հաստատությունը նվազեցնի իր էկոլոգիական ոտնահետքն ու կրճատի ծախսերը, առաջին հերթին պետք է ամսական առնվազն մեկ անգամ կանոնավոր արձանագրի ջրի սպառման ամբողջական ծավալը: Հասանելիության դեպքում նշվում է ջրի աղբյուրը, և եթե ջրի մատակարարումը հանրային մատակարարների միջոցով չէ իրականացվում, ստուգվում է, որ ջրի մատակարարումը լինի կայուն և բացասաբար չազդի շրջակա միջավայրի և ջրի տեղական մատակարարման վրա:</p>

		<p>Տվյալները պետք է ենթարկվեն վերլուծության և ակտիվորեն օգտագործվեն ջրի սպառումը նվազեցնելու նպատակով: Խրախուսվում է, որ ջրի սպառման ամբողջական ծավալը արձանագրվի ամսական մեկ անգամից ավելի հաճախ, քանի որ դա կապահովի ավելի մանրամասն տեղեկություն:</p> <p>Եթե ջրի սպառման փոփոխությունները Էականապես ավելանան (հատկապես սպասվածից ավելի սպառման տեսքով), հաստատությունը պետք է ունենա ընթացակարգ՝ անմիջապես ուսումնասիրելու, թե ինչը կարող է լինել ջրի սպառման փոփոխության պատճառ և պետք է կատարի վերականգնողական գործողություններ:</p> <p>Վուդիտի ժամանակ ներկայացվում է ջրի ամսական ընդհանուր սպառման նվազագույն գրանցումը: Հաստատությունը ցույց է տալիս ընթացակարգերը կտրուկ փոփոխությունների դեպքում ջրասպառման ընդհանուր քանակը հետազոտելու և շտկումներ կատարելու համար: Եթե ջուրը մատակարարվում է ոչ հանրային մատակարարի կողմից, հաստատությունը փաստագրում է, որ աղբյուրը կայուն է և բացասաբար չի ազդում շրջակա միջավայրի և տեղական ջրամատակարարման վրա:</p>
4.2	<p>Նոր ձեռք բերված զուգարանակոնքերն ունեն ջրաշման երկակի 3/6 լիտրանոց համակարգ: (I)</p>	<p>Քանի որ ջրի սպառման նվազեցման միջոցով ջրաշման երկակի համակարգ ունեցող զուգարանակոնքերն ապահովում են փոքր Էկոլոգիական ոտնահետք և կրճատում են ծախսերը, հյուրերի սենյակների, հանրային վայրերի և/կամ աշխատակազմի համար նախատեսված տարածքների համար վերջին 12 ամիսների ընթացքում ձեռք բերված զուգարանակոնքերը պետք է ունենան ջրաշման երկակի համակարգ՝ յուրաքանչյուր ջրաշման համար առավելագույնը 3/6 լիտրով (0.79/1.59 ամերիկյան գալոն): Որոշ դեպքերում ջրի սպառումը կարելի է նվազեցնել՝ առանց հյուրերի կամ աշխատակազմի հարմարավետությանը խանգարելու:</p> <p>Յուրաքանչյուր ջրաշման համար առավելագույնը 4.5 լիտր ծավալով նոր ձեռքբերված սենսորային զուգարանակոնքերը նույնպես ընդունելի են:</p> <p>Վուդիտի ընթացքում պետք է ներկայացվեն վերջին 12 ամիսների ընթացքում ձեռք բերված առավելագույնը 3/6 լիտր ծավալով ջրաշման երկակի համակարգ ունեցող զուգարանակոնքերի ստացականները, իսկ դրանց առկայությունը կստուգվի տեղում:</p>
4.3	<p>Աշխատակազմը պետք է ունենա ծորակների ու զուգարանակոնքերի, ինչպես նաև լողավազանների արտահոսքը կանոնավոր կերպով ստուգելու ընթացակարգ: (I)</p>	<p>Հանրային վայրերում, հյուրերի սենյակներում և աշխատակազմի համար նախատեսված վայրերում ծորակներն ու զուգարանակոնքերը կարող են ունենալ արտահոսք, որը ջրի անհարկի սպառման պատճառով բացասաբար է ազդում Էկոլոգիական ոտնահետքի վրա և հանգեցնում է լրացուցիչ ծախսերի:</p> <p>SOP-ը ներառում է ծորակների և զուգարանակոնքերի կանոնավոր ստուգում բացառելու ցանկացած տիպի արտահոսք: Եթե նման դեպքեր են հայտնաբերվում, պետք է իրականացնել ուղղիչ գործողություններ արտահոսքը դադարեցնելու համար:</p>

		<p>Բաց և փակ լողավազաններից արտահոսքը ջրի ավելորդ սպառման պատճառով նույնպես կարող է մեծացնել Էկոլոգիական ոտնահետքը և հանգեցնել լրացուցիչ ծախսերի: Հետևաբար, հաստատությունը նույնպես պետք է ունենա լողավազանների արտահոսքը ստուգելու սահմանված ընթացակարգ: Մշտադիտարկումը կարելի է կատարել լողավազանների շուրջ տեսողական ստուգման միջոցով, սակայն ավելի լավ լուծում է լողավազանների ջրի սպառմանը հետևող առանձին ջրաչափերի կամ ջրի արտահոսքի դետեկտորի տեղադրումը: Խիստ խրախուսվում է, որ այս ստուգումն իրականացվի ամենօրյա ռեժիմով:</p> <p>Առողիտի ընթացքում ներկայացվում են ծորակների, զուգարանակոնքերի ու լողավազանների արտահոսքի դեպքում կանոնավոր ստուգման գործընթացի սահմանված ստանդարտ ընթացակարգերը, ինչպես նաև արտահոսք հայտնաբերելու դեպքում ուղղիչ գործողությունները: Տեղում զննության ընթացքում ստուգվում են ծորակները, զուգարանակոնքերը և լողավազանները:</p>
4.4	Տնցուղների առնվազն 75% - ի ջրի հոսքը չպետք է գերազանցի թույլտված 9 լիտրը: (I)	<p>Ջրի խնայողության միջոցով Էկոլոգիական ոտնահետքը նվազեցնելու և ծախսերը կրճատելու համար հյուրերի սենյակների, հանրային վայրերի, աշխատակազմի համար նախատեսված և այլ տարածքների ցնցուղների առնվազն 75%-ի ջրի հոսքը չպետք է գերազանցի թույլտված 9 լիտրը (կամ 2.38 ամերիկյան գալոնը):</p> <p>Եթե առկա է և՛ ձեռքի, և՛ լոգանքի ցնցուղ, պահանջը գործում է երկուսի համար: Լոգարանի՝ ցնցուղին միացված ծորակի ջրի հոսքը չի ենթարկվում այս պահանջին:</p> <p>Շատ դեպքերում ցնցուղների ջրի հոսքը կարելի է նվազեցնել՝ առանց հյուրերի հարմարավետությանը խանգարելու:</p> <p>Այս չափանիշին համապատասխանելու համար հաստատությունը կարող է ունենալ կամ ջրի սահմանափակ հոսքով ցնցուղներ, կամ փողրակների հիմքում տեղադրված ջրի հոսքը սահմանափակող սարքեր: Ջրի հոսքի նվազմանը հաճախ կարելի է հասնել՝ ջուրն ու օդը ցնցուղի օդափոխիչում միախառնելով: Կարճաժամկետ լուծում է նաև ջրի ճնշման իջեցումը ջրաբաշխման համակարգում:</p> <p>Առողիտի ընթացքում իրականացվում են ջրի հոսքի նմուշ-չափումներ հաստատության տարբեր հատվածներում ընտրված մի քանի ցնցուղներից:</p>

4.5	Ծորակների առնվազն 75% - ի ջրի հոսքը չպետք է գերազանցի թուփում 8 լիտրը: (I)	<p>Ջրի խնայողության միջոցով Էկոլոգիական ոտնահետքը նվազեցնելու և ծախսերը կրճատելու համար հյուրերի սենյակների, հանրային վայրերի, աշխատակազմի համար նախատեսված տարածքների ծորակների առնվազն 75%-ի ջրի հոսքը չպետք է գերազանցի թուփում 8 լիտրը (կամ 2.11 ամերիկյան գալոնը):</p> <p>Շատ դեպքերում ծորակների ջրի հոսքը կարելի է նվազեցնել՝ առանց հյուրերի հարմարավետությանը խանգարելու:</p> <p>Այս չափանիշին համապատասխանելու համար հաստատությունը կարող է ունենալ կամ ջրի սահմանափակ հոսքով ծորակներ, կամ ծորակների վրա տեղադրված ջրի հոսքը սահմանափակող սարքեր: Ջրի հոսքի նվազմանը հաճախ կարելի է հասնել՝ ջուրն ու օդը ծորակի օդափոխիչում միախառնելով: Կարճաժամկետ լուծում է նաև ջրի ճնշման իջեցումը ջրաբաշխման համակարգում:</p> <p>Առողջիտի ընթացքում իրականացվում են ջրի հոսքի նմուշ-չափումներ հաստատության տարբեր հատվածներում ընտրված մի քանի ծորակներից:</p>
4.6	Պիսուարներն ունեն սենսորներ, ջրախնայողության սարքեր կամ գործում են առանց ջրի: (I)	<p>Հաստատության պիսուարները կարող են ջրի սակավ սպառման միջոցով նպաստել Էկոլոգիական ոտնահետքի նվազմանն ու կրճատել ծախսերը: Եթե հաստատությունն ունի պիսուարներ, դրանք կամ պետք է ունենան սենսորային դետեկտորներ, կամ սեղմակոճակներ (թուփում ջրաշման ոչ ավելի, քան 3 լիտր կամ 0.79 ամերիկյան գալոն ծավալով), կամ գործեն առանց ջրի: Յուրաքանչյուր պիսուար ունի իր առանձին սենսորը:</p> <p>Առողջիտի ընթացքում ստուգվում են պիսուարների առանձին սենսորների և սեղմակոճակների առկայությունը, կամ առանց ջրի աշխատանքը:</p>
4.7	Կեղտաջրերը կառավարվում/մաքրվում/վերամշակվում են: (I)	<p>Հաստատության Էկոլոգիական ոտնահետքը նվազեցնելու համար կարևոր է, որ հաստատությունից դուրս եկող կեղտաջրերը բաց չթողնվի առանց համապատասխան մաքրման/վերամշակման աշխատանքների: Հաստատությունը կարող է կամ կցված լինել կոյուղային գործող համակարգի, կամ կեղտաջրերը վերամշակել կոյուղային սեփական համակարգով:</p> <p>Կարևոր է, որ կեղտաջրերն ամբողջությամբ մաքրվեն/կառավարվեն/վերամշակվեն՝ համաձայն ազգային և/կամ տեղական օրենսդրության: Եթե հարցի շուրջ օրենսդրություն չկա, կեղտաջրերը մաքրվում/կառավարվում/վերամշակվում են հաստատության համար հնարավոր առաջատար եղանակով: Վերամշակումից հետո, եթե հնարավոր է, վերամշակված կեղտաջուրը վերօգտագործվում է:</p> <p>Բացառիկ դեպքերում, երբ իշխանությունները չեն առաջարկում միանալ կոյուղային համակարգին, և հաստատությունը չի կարողանում ստեղծել իր սեփական կոյուղահամակարգը, դիմող հաստատությունը կարող է այս պահանջից ազատվելու հայց ներկայացնել:</p>

		<p>Կեղտաջրերի վերօգտագործումը/ ազատ արձակումը պետք է միշտ կատարվի անվտանգ կերպով՝ բացասաբար չազդելով տեղի բնակչության և շրջակա միջավայրի վրա:</p> <p>Առողջիտի ընթացքում ներկայացվում են կեղտաջրերի մաքրման/կառավարման/վերամշակման պահանջներին համապատասխանությունն ապացուցող լիցենզիան կամ համարժեք այլ փաստաթղթեր: Հաստատությունը համապատասխան գերատեսչություններից ներկայացնում է գրավոր հաստատում առ այն, որ վերամշակված կեղտաջրերի ազատ արձակումը չի ունեցել բացասական ազդեցություն տեղի բնակչության և շրջակա միջավայրի վրա: Եթե դիմող հաստատությունը պահանջից ազատման հայց է ներկայացնում, այն պետք է ներկայացնի ապացույց առ այն, որ չի կարող համապատասխանել չափանիշին: Տեղում ստուգման ժամանակ այս չափանիշի ցանկացած անհամապատասխանության դեպք զեկուցվում է:</p>
4.8	<p>Լողավազանը ծածկված է կամ ունի ջրի սպառման նվազեցման այլ համակարգեր: (G)</p>	<p>Բարձր ջերմաստիճան ունեցող երկրներում բաց լողավազանները (ջրի զգալի ծավալի գոլորշացման արդյունքում) հանգեցնում են ջրի ավելի շատ սպառման ու ծախսերի ավելացման՝ այսպիսով ունենալով էկոլոգիական ավելի մեծ ոտնահետք: Հետևաբար, երբ լողավազանը չի օգտագործվում, այն պետք է ունենա ծածկ կամ գոլորշացումը կանխող այլ համակարգ (օրինակ՝ գելային շերտ): Ծածկը կամ այլ համակարգերը պետք է օգտագործվեն լողավազանի գործող ժամերից դուրս և/կամ այն ժամանակ, երբ լողավազանից չեն օգտվում: Բացի այդ, կարող են լինել լողավազանի ջրի վերօգտագործման համակարգեր:</p> <p>Եղանակային պայմաններից կախված՝ որոշ վայրերում և տարվա որոշ ժամանակահատվածում բաց լողավազաններն օգտագործում են տաք ջուր: Այդ դեպքում ծածկի կամ այլ համակարգերի կիրառումը խիստ խրախուսվում է, քանի որ դա ևս նպաստում է էներգախնայողությանը:</p> <p>Առողջիտի ընթացքում ներկայացվում է բաց լողավազանների ծածկի կամ այլ համակարգերի կիրառման փաստաթուղթ և/կամ լողավազանը ստուգվում է տեղում:</p>
4.9	<p>Լողավազանը մաքրվում է քիմիական նյութեր չպարունակող այլընտրանքներով: (G)</p>	<p>Քիմիական վտանգավոր նյութերի օգտագործումը նվազեցնելու համար հաստատությունը մաքրում է իր լողավազանները քիմիական նյութեր չպարունակող այլընտրանքներով, ինչպիսիք են՝ ուլտրամանուշակագույն ճառագայթները, էլեկտրոլիզացված ջրի մաքրումը, բույսերի ֆիլտրացիան և այլն:</p> <p>Քիմիական նյութեր չպարունակող այլընտրանքների կիրառումը պետք է համապատասխանի տվյալ հարցի շուրջ օրենսդրությանը:</p> <p>Առողջիտի ընթացքում ներկայացվում է լողավազանների մաքրման համար քիմիական նյութեր չպարունակող այլընտրանքների կիրառման փաստաթուղթ:</p>
4.10	<p>Ջրի սպառման բարձր մակարդակ ունեցող</p>	<p>Հաստատության տարբեր հատվածների ջրի սպառման ավելի լավ հետևելու համար տեղադրվում են լրացուցիչ/ առանձին ջրաչափեր՝ հատկապես ջրի սպառման բարձր մակարդակ ունեցող տարածքներում (օրինակ՝ խոհանոցներ,</p>

	<p>տարածքներում տեղադրված են առանձին ջրաչափեր: (G)</p>	<p>լողավազաններ և այլն): Որոշ հաստատություններ որոշել են ունենալ առանձին ջրաչափեր յուրաքանչյուր սենյակի համար:</p> <p>Լրացուցիչ/ առանձին ջրաչափերը, ապահովելով ջրօգտագործման մասին ավելի ճշգրիտ տեղեկություն, հաստատությանը հնարավորություն են տալիս ջրի սպառման նվազեցման համար պատրաստել ավելի լավ թիրախավորված ռազմավարություններ և, հետևաբար, նվազեցնում են Էկոլոգիական ոտնահետքն ու կրճատում ծախսերը: Դրանք նաև օգնում են արտահոսքերի հայտնաբերմանը:</p> <p>Ավելի շատ ջրաչափեր տեղադրելով՝ յուրաքանչյուր ջրաչափի սպառումը հավաքագրվում և արձանագրվում է: Լավագույն դեպքում տարբեր ջրաչափերի տվյալները կարողում են ավելի հաճախ, քան ամսական մեկ անգամ, քանի որ դա ապահովում է ավելի ճշգրիտ տեղեկություն:</p> <p>Առողիտի ընթացքում ներկայացվում են տարբեր ջրաչափերի ջրի սպառման նվազագույն ամսական արձանագրումը (նշելով տեղանքը), ինչպես նաև ջրի սպառման հանկարծակի փոփոխությունների ուսումնասիրման ու վերականգնման գործընթացների ստանդարտ ընթացակարգերը (SOP):</p>
4.11	<p>Ծորակների առնվազն 75% - ի ջրի հոսքը չպետք է գերազանցի թուփում 5 լիտրը: (G)</p>	<p>Ջրի խնայողության միջոցով Էկոլոգիական ոտնահետքը նվազեցնելու և ծախսերը կրճատելու համար հաստատության (հյուրերի սենյակների, հանրային վայրերի և աշխատակազմի համար նախատեսված տարածքների) ծորակների առնվազն 75%-ի ջրի հոսքը չպետք է գերազանցի թուփում 5 լիտրը (կամ 1.32 ամերիկյան գալոնը): Շատ դեպքերում ծորակների ջրի հոսքը կարելի է նվազեցնել առանց հյուրերի հարմարավետությանը խանգարելու: Եթե հաստատությունը տեղադրել է սենսորային ծորակներ, դրանք ևս պետք է համապատասխանեն այս չափանիշին:</p> <p>Առողիտի ընթացքում իրականացվում են ջրի հոսքի նմուշ-չափումներ հաստատության տարբեր հատվածներում ընտրված մի քանի ծորակներից:</p>
4.12	<p>Կեղտաջրերը վերամշակվում և վերօգտագործվում են տեղում: (G)</p>	<p>Էկոլոգիական ոտնահետքը և ջրի սպառումը նվազեցնելու համար հաստատությունը վերամշակում է իր կեղտաջրերը և վերօգտագործում տարբեր նպատակներով, ինչպիսիք են՝ դաշտերի, հաստատության կանաչ տարածքների կամ համապատասխան ցանկացած այլ տարածքի պարարտացումը: Վերամշակված կեղտաջրերի վերօգտագործումը պետք է կատարվի անվտանգ կերպով՝ հետևելով ազգային օրենսդրությանն ու բացասաբար չազդելով տեղի բնակչության և շրջակա միջավայրի վրա:</p> <p>Այս չափանիշը վերաբերում է նաև օդորակման համակարգերից հավաքված կեղտաջրերին:</p> <p>Առողիտի ընթացքում ներկայացվում է կեղտաջրերի՝ տեղում վերամշակման և վերօգտագործման մասին փաստաթուղթ, և հաստատությունը հավաստիացնում է, որ վերամշակված կեղտաջրերի օգտագործումը</p>

		բացասաբար չի ազդում տեղի բնակչության և շրջակա միջավայրի վրա (օրինակ՝ համապատասխան տեղական իշխանությունից հարցի վերաբերյալ հաստատման նամակի տեսքով):
4.13	Անձրևաջրերը հավաքվում և օգտագործվում են կիրառելի նպատակներով: (G)	Ջրի ինսյուրության միջոցով Էկոլոգիական ոտնահետքը նվազեցնելու և ծախսերը կրճատելու համար անձրևաջրերը հավաքվում են և օգտագործվում զուգարանների, հաստատության կանաչ տարածքների ոռոգման և այլ կիրառելի նպատակներով: Անձրևաջրերի հավաքը պետք է կատարվի անվտանգ կերպով՝ բացասաբար չազդելով հաստատության հյուրերի և աշխատակազմի, տեղի բնակչության և շրջակա միջավայրի վրա:  Աուդիտի ընթացքում ստուգվում են անձրևաջրերի հավաքման համար տեղադրված համակարգերը, և հաստատությունը հավաստիացնում է, որ հավաքված անձրևաջրերը բացասական ազդեցություն չունեն հաստատության հյուրերի և աշխատակազմի, տեղի բնակչության և շրջակա միջավայրի վրա (օրինակ՝ համապատասխան տեղական իշխանությունից հարցի վերաբերյալ հաստատման նամակի տեսքով):
4.14	Հաստատությունը հավաստիացնում է, որ իրականացվում է ջրի ռիսկերի գնահատում և առաջարկները հաշվի են առնվում: (G)	Համոզվելու համար, որ ջուրը, որպես համընդհանուր ռեսուրս, վերահսկվում է կայուն կերպով, հաստատությունը հավաստիացնում է, որ կատարվում է ջրի ռիսկերի գնահատում հաստատության տարածքում ջրի հետ կապված հավանական ռիսկերի (ինչպիսիք են՝ երաշտը, ջրհեղեղը կամ ջրի աղտոտումը) սահմանման համար:  Ջրի ռիսկերի գնահատումը պետք է կատարվի լիազորված և համապատասխան իշխանության կամ արտաքին ընկերության կողմից:  Եթե գնահատման ընթացքում սահմանվում են ջրի հետ կապված հավանական ռիսկեր, լրացուցիչ ինսամբի և գործողության ձևում նշված առաջարկները պետք է հաշվի առնվեն շահագրգիռ այլ կողմերի հետ համագործակցությամբ: Ավելին իմանալու համար այցելե՛ք <a href="#">WWF's Water Risk Filter</a> .  Աուդիտի ընթացքում հաստատությունը ներկայացնում է ջրի ռիսկերի իր գնահատումը և փաստաթղթեր, որ երրորդ կողմի գնահատման առաջարկները հաշվի են առնվում:
<b>5. ԼՎԱՑՈՒՄ և ՄԱՔՐՈՒՄ</b>		
5.1	Սենյակներում հյուրերի համար պետք է լինի անկողնային պարագաների	Էկոլոգիական ոտնահետքը նվազեցնելու և լվացման ու մաքրման գործընթացների հետ կապված ծախսերը կրճատելու համար սենյակում պետք է լինի անկողնային պարագաներն ըստ ցանկության փոխելու մասին ցուցանակ (ցանկալի է



	<p>փոփոխության գրաֆիկի մասին տեղեկություն: (I)</p>	<p>տեղադրված լինի մահճակալի մոտ): Որպես այլընտրանք՝ տեղեկությունը հյուրերի սենյակներում կարող է ներկայացվել այլ ձևերով, օրինակ՝ հեռուստաէկրանների, հյուրերի տեղեկատվական բրոշյուրների և այլ միջոցներով:</p> <p>Ցուցանակները հյուրերին տեղեկացնում են անկողնային պարագաների փոփոխության հետ կապված հաստատության ստանդարտ ընթացակարգի մասին (օրինակ՝ յուրաքանչյուր երրորդ գիշեր), և կցվում է տեղեկություն այն հյուրերի համար, որոնք ցանկանում են ստանդարտ ընթացակարգից ուշ կամ ավելի հաճախակի փոփոխություն:</p> <p>Տեղեկությունից բացի, հաստատությունը կարող է նաև գրանցման ժամանակ հյուրերին հարցնել անկողնային պարագաների փոփոխության հետ կապված նրանց նախընտրությունը:</p> <p>Առողջի տի ընթացքում տեղում ստուգվում են հյուրերի սենյակներում անկողնային պարագաների փոփոխության վերաբերյալ ցուցանակները/ տեղեկությունը:</p>
5.2	<p>Սենյակներում հյուրերի համար պետք է լինի սրբիչների փոփոխության գրաֆիկի մասին տեղեկություն: (I)</p>	<p>Էկոլոգիական ոտնահետքը նվազեցնելու և լվացման ու մաքրման գործընթացների հետ կապված ծախսերը կրճատելու համար սենյակում պետք է լինի սրբիչներն ըստ ցանկության փոխելու մասին ցուցանակ (ցանկալի է տեղադրված լինի սենյակի սանհանգույցում): Որպես այլընտրանք՝ տեղեկությունը հյուրերի սենյակներում կարող է ներկայացվել այլ ձևերով, օրինակ՝ հեռուստաէկրանների, հյուրի տեղեկատվական բրոշյուրների և այլ միջոցներով:</p> <p>Ցուցանակները հյուրերին տեղեկացնում են սրբիչների փոփոխության հետ կապված հաստատության ստանդարտ ընթացակարգի մասին (օրինակ՝ յուրաքանչյուր երրորդ գիշեր), և կցվում է տեղեկություն այն հյուրերի համար, որոնք ցանկանում են ստանդարտ ընթացակարգից ուշ կամ ավելի հաճախակի փոփոխություն:</p> <p>Տեղեկությունից բացի, հաստատությունը կարող է նաև գրանցման ժամանակ հյուրերին հարցնել սրբիչների փոփոխության հետ կապված նրանց նախընտրությունը:</p> <p>Եթե հաստատությունը չի հատկացնում սրբիչներ՝ որպես ծառայության մի մաս, ապա սրբիչների վերագտագործման վերաբերյալ պահանջները կիրառելի չեն:</p>

		<p>Աուդիտի ընթացքում տեղում ստուգվում են հյուրերի սենյակներում սրբիչների փոփոխության վերաբերյալ ցուցանակները/ տեղեկությունը:</p>
5.3	<p>Ամենօրյա մաքրման քիմիական միջոցների առնվազն 75%-ն ունի ճանաչված Էկո պիտակ: (I)</p>	<p>Էկոլոգիական ոտնահետքը նվազեցնելու համար նվազագույնի է հասցվում քիմիական վտանգավոր նյութեր պարունակող մաքրման միջոցների օգտագործումը: Հաստատությունը պետք է համոզվի, որ իր բոլոր բաժիններում ամենօրյա մաքրման քիմիական միջոցների առնվազն 75%-ն ունի միջազգային/ ազգային ճանաչված Էկո պիտակ՝, ներառյալ հյուրերի սենյակների, համաժողովների տարածքների, ռեստորանների, հանրային վայրերի (բացառությամբ լողավազանների) և աշխատակազմի համար նախատեսված տարածքների (բացառությամբ խոհանոցի և լվացքի համար նախատեսված տարածքների) ամենօրյա մաքրման համար կիրառվող արտադրանքները:</p> <p>Ճանաչված Էկո պիտակները կարող են լինել միջազգային (օրինակ՝ ԵՄ Էկո պիտակ, Սկանդինավյան կարապ, Կանաչ դրոշմ, Cradle2Cradle և այլն) կամ ազգային՝ երրորդ կողմի վավերացմամբ:</p> <p>Էկոպիտակավորված ապրանքների նվազագույն 75%-ը կարելի է հաշվարկել՝ հիմնվելով ամբողջական ծախսերի, ապրանքի քանակի կամ գնված ծավալի վրա:</p> <p>Եթե ձեռնարկությունը ազգային շուկայում չի կարող գնել ամենօրյա մաքրման քիմիական միջոցների առնվազն 75%-ը ճանաչված Էկո պիտակով, այն կարող է դիտարկել մաքրման այլընտրանքային միջոցներ (տե՛ս չափանիշ 5.9): Եթե երկու տարբերակներից ոչ մեկը հնարավոր չէ, ապա կազմակերպությունը կարող է պահանջից ազատման հայց ներկայացնել:</p> <p>Աուդիտի ընթացքում հաստատությունը ներկայացնում է ամենօրյա օգտագործման բոլոր մաքրող քիմիական միջոցների ցանկը՝ ապացույցով, որ ապրանքների առնվազն 75%-ն ունի (միջ)ազգայնորեն ճանաչված Էկո պիտակ: Տեղում գնևորության ժամանակ ստուգումը հաստատում է ամենօրյա օգտագործման մաքրման միջոցների վրա Էկո պիտակների առկայությունը: Եթե հաստատությունը պահանջից հրաժարման հայց է ներկայացնում, ապա պետք է ներկայացնի ապացույց, ըստ որի հաստատությունը փորձել է ձեռք բերել ազգային շուկայում ճանաչված Էկո պիտակով ամենօրյա օգտագործման մաքրող քիմիական միջոցներ և դիտարկել է մաքրման այլընտրանքային լուծումներ:</p>

<p>5.4</p>	<p>Ախտահանիչ միջոցները պետք է կիրառվեն միայն անհրաժեշտության դեպքում և հիգիենայի վերաբերյալ օրենսդրության համաձայն : (I)</p>	<p>Քիմիական ախտահանիչ նյութերն օգտագործվում են միայն այն դեպքերում, երբ միջատները, սնկերը, բակտերիաները կամ վիրուսները առաջացնում են զգալի անհանգստություն կամ առողջությանը սպառնացող վտանգ, իսկ ախտահանիչ միջոցներին այլ մեթոդներ չեն կարողանում փոխարինել: Ձեռքերի ախտահանիչ միջոցները չեն մտնում այս չափանիշի մեջ:</p> <p>Շրջակա միջավայրի և առողջության վրա դրանց հավանական ազդեցության պատճառով ախտահանիչ նյութերի օգտագործումը հասցվում է նվազագույնի, փոխարինվում պակաս վնասակար նյութերով և/ կամ օգտագործվում է միայն խիստ անհրաժեշտության դեպքում:</p> <p>Ախտահանիչ նյութերը պետք է ընդունվեն ազգային իշխանությունների կողմից և կարող են օգտագործվել միայն նյութերի անվտանգության տվյալների թերթիկներում և/կամ տեխնիկական տվյալների այլ թերթիկներում նշված կիրառման տարածքներում: Պարտադիր է խստորեն պահպանել փաստաթղթում նշված կոնցենտրացիան և կիրառման տևողությունը: Ախտահանումը կարող է կատարվել միայն վերապատրաստված անձնակազմի կամ այդ նպատակով լիցենզավորված արտաքին ընկերության կողմից: Կարևոր է նաև, որ հաստատությունն ապահովի ախտահանիչ նյութերի ճիշտ օգտագործումը (տե՛ս չափանիշ 6.6):</p> <p>Եթե ազգային իշխանությունները սահմանում են հիգիենայի ավելի խիստ կամ այս չափանիշին հակասող կանոններ, հաստատությունը հետևում է ազգային պաշտոնական կանոնակարգին և ազատվում է այս չափանիշից:</p> <p>Առողիտի ընթացքում հաստատությունը ներկայացնում է օգտագործվող ախտահանիչ նյութերի անվտանգության տվյալների և/կամ տեխնիկական տվյալների այլ թերթիկները, ինչպես SOP-ը, որը ցույց է տալիս, որ ախտահանիչ նյութերի օգտագործումը համապատասխանում է փաստաթղթի պահանջներին:</p>
<p>5.5</p>	<p>Թղթե սրբիչները, դեմքի խնամքի անձեռոցիկները և զուգարանի թղթերը պետք է պատրաստված լինեն առանց քլորի</p>	<p>Թղթե սրբիչների, դեմքի խնամքի անձեռոցիկների և զուգարանի թղթերի (միջ)ազգայնորեն ճանաչված Էկո պիտակները (օրինակ՝ ԵՄ Էկո պիտակ, Սկանդինավյան կարապ, Կապույտ հրեշտակ, Անտառների պահպանության խորհուրդ (FSC) կամ Անտառների հավաստագրման հաստատման ծրագիր (PEFC)) հանդիսանում են Էկոլոգիապես ավելի մաքուր արտադրանքի միջոցով Էկոլոգիական ավելի փոքր ոտնահետքի ապացույց :</p>

	<p>սպիտակեցված թղթից կամ ունենան էկո պիտակ: (I)</p>	<p>Որպես այլընտրանք կամ հավելում պետք է ստուգվի ապրանքների՝ առանց քլորի սպիտակեցված լինելը, որովհետև ցեյուլոզային մանրաթելերի քլորով սպիտակեցումը նշանակում է էներգիայի և քիմիական նյութերի լրացուցիչ օգտագործում:</p> <p>Պահանջը պարտադիր է բոլոր հաստատությունների համար, սակայն, եթե ապրանքները հաստատությանը հասանելի չեն, կարող է պահանջից ազատում տրվել:</p> <p>Առևտրի ընթացքում տեղում ստուգվում է ձեռք բերված թղթե սրբիչների, դեմքի խնամքի անձեռոցիկների և զուգարանի թղթերի՝ առանց քլորի սպիտակեցված թղթից պատրաստված լինելը կամ էկո պիտակ ունենալը:</p>
5.6	<p>Հաստատությունն օգտագործում է սպասք վանալու էկոպիտակավորված միջոցներ: (G)</p>	<p>Լվացող միջոցների կիրառումը հասցվում է նվազագույնի (կիրառելով ճիշտ չափաբաժինը), իսկ ապրանքներն ունեն (միջ)ազգային ճանաչված էկո պիտակ, քանի որ դրանք ունեն էկոլոգիական ավելի փոքր ոտնահետք, քան էկո պիտակ չունեցողները:</p> <p>Առևտրի ընթացքում տեղում ստուգվում է սպասք վանող միջոցների էկոպիտակավորված լինելը:</p>
5.7	<p>Հաստատությունն օգտագործում է վազքի էկոպիտակավորված միջոցներ: (G)</p>	<p>Լվացքի միջոցների կիրառումը հասցվում է նվազագույնի (կիրառելով ճիշտ չափաբաժինը), իսկ ապրանքներն ունեն (միջ)ազգային ճանաչված էկո պիտակ, քանի որ դրանք ունեն էկոլոգիական ավելի փոքր ոտնահետք, քան էկո պիտակ չունեցողները:</p> <p>Առևտրի ընթացքում տեղում ստուգվում է վազքի միջոցների էկոպիտակավորված լինելը:</p>
5.8	<p>Ամենօրյա մաքրման համար օգտագործվում են մաքրման կոնցենտրացված</p>	<p>էկոլոգիական ոտնահետքը նվազեցնելու համար օգտագործվում են ամենօրյա մաքրման կոնցենտրացված քիմիական նյութեր և տեղում նոսրացվում են ցրով՝ նվազեցնելու պլաստիկ թափոնների քանակը և շրջակա միջավայրի վրա թողած տեղափոխման բացասական ազդեցությունները: Հաստատությունն ունի (նոսրացման) չափաբաժինների ավտոմատ</p>

	<p>քիմիական միջոցներ և չափաբաժինների համակարգ: (G)</p>	<p>համակարգ՝ համոզվելու, որ մաքրող միջոցների ճիշտ չափաբաժին է կիրառվում: Ամենօրյա մաքրման միջոցները ցանկալի է օգտագործել փակ շրջանառու համակարգում՝ կանխելով ուղիղ շփումը քիմիական նյութի հետ, ինչպես նաև նյութի թափվելը:</p> <p>Առողիտի ընթացքում հաստատությունը ներկայացնում է ամենօրյա մաքրման քիմիական միջոցների կոնցենտրացված վիճակով ձեռքբերումն ապացուցող փաստաթուղթ, իսկ տեղում ստուգումը հաստատում է չափաբաժինների ավտոմատ համակարգի առկայությունը:</p>
<p>5.9</p>	<p>Մաքրման համար օգտագործվում է բնական մանրաթելերից պատրաստված մանրաթելային լաթ: (G)</p>	<p>Մաքրման համար մանրաթելային լաթերի կիրառումը թղթի, քրի և լվացող միջոցների (քիմիական նյութերի) քիչ սպառման միջոցով զգալիորեն նվազեցնում է էկոլոգիական ոտնահետքը և կրճատում հաստատության ծախսերը: Մանրաթելային լաթերը պետք է պատրաստված լինեն բնական մանրաթելերից (սինթետիկ կտորների փոխարեն, որոնք քրի մեջ միկրոպլաստիկ են բաց թողնում) :</p> <p>Առողիտի ընթացքում տեղում ստուգվում է մաքրման համար բնական մանրաթելերից պատրաստված մանրաթելային լաթերի կիրառումը:</p>
<p>5.10</p>	<p>Օգտագործվում են մաքրման և ախտահանման՝ քիմիական նյութերից զերծ մեթոդներ: (G)</p>	<p>Էկոլոգիական ոտնահետքը և քիմիական նյութերի կիրառումը նվազեցնելու համար հաստատությունն օգտագործում է մաքրման և ախտահանման՝ քիմիական նյութերից զերծ մեթոդներ:</p> <p>Մաքրման և ախտահանման՝ քիմիական նյութերից զերծ մեթոդների մեջ են մտնում դիոնացված քրի օգտագործումը, բարձրաճնշում քրով մաքրումը և այլն:</p> <p>Այս չափանիշին համապատասխանելու նպատակով հանրային վայրերի, հյուրերի սենյակների և համաժողովների համար նախատեսված տարածքների մաքրման և ախտահանման համար օգտագործվում են քիմիական նյութերից զերծ մեթոդներ, իսկ խոհանոցներն ազատված են այս չափանիշից:</p> <p>Եթե ազգային իշխանությունները սահմանում են հիգիենայի ավելի խիստ կամ այս չափանիշին հակասող կանոններ, հաստատությունը հետևում է ազգային պաշտոնական կանոնակարգին և ազատվում է այս չափանիշից:</p>

		Առողջիտի ընթացքում հաստատությունը ներկայացնում է հանրային վայրերի, հյուրերի սենյակների և համաժողովների համար նախատեսված տարածքների՝ քիմիական նյութերից զերծ մեթոդներով մաքրման և ախտահանման ստանդարտ ընթացակարգը:
5.11	Ըվացման և մաքրման նպատակներով հաստատությունը չի օգտագործում հոտավետ ցողիչներ և օծանելիք: (G)	<p>Էկոլոգիական ոտնահետքը և ալերգիկ ռեակցիաների ռիսկը նվազեցնելու համար հաստատությունը լվացման և մաքրման միջոցների հետ մեկտեղ չի օգտագործում հոտավետ ցողիչներ և օծանելիք:</p> <p>Այս պահանջը գործում է և՛ այն դեպքում, երբ հաստատության անձնակազմն է վերհսկում լվացումն ու մաքրումը, և՛ եթե աշխատանքը հանձնված է երրորդ կողմին:</p> <p>Առողջիտի ընթացքում ստուգվում է լվացող և մաքրող միջոցների՝ հոտավետ ցողիչներից և օծանելիքից զերծ լինելը: Որպես այլընտրանք՝ հաստատությունը լվացող և մաքրող միջոցների մատակարարներից կամ երրորդ կողմից ներկայացնում է հաստատում, որ օգտագործվող միջոցները չեն պարունակում հոտավետ ցողիչներ և օծանելիք:</p>
5.12	Հաստատությունն իր հյուրերին առաջարկում է սենյակների տնտեսվարումից/մաքրումից հրաժարվելու տարբերակ: (G)	<p>Էկոլոգիական ոտնահետքը նվազեցնելու և ջուրը, էներգիան և քիմիական նյութերը խնայելու համար հաստատությունը հյուրերին առաջարկում է սենյակների տնտեսվարումից/ մաքրումից հրաժարվելու տարբերակը:</p> <p>Տարբերակը կարող է առաջարկվել գրանցման ժամանակ, դռան կախիչների կամ մահճակալի վրա դրվող ցուցանակի միջոցով: Հյուրերի մասնակցությունը խրախուսելու համար կարելի է սահմանել պարգևատրում, օրինակ՝ վաուչերի կամ կայունության վերաբեյալ նախաձեռնություններին նպաստելու տեսքով:</p> <p>Եթե ազգային իշխանությունները սահմանում են հիգիենայի ավելի խիստ կամ այս չափանիշին հակասող կանոններ, հաստատությունը պետք է հետևի ազգային պաշտոնական կանոնակարգին:</p> <p>Առողջիտի ընթացքում հաստատությունը ներկայացնում է այս չափանիշին համապատասխանության փաստաթղթեր (օրինակ՝ դռան կախիչներ), որոնք ապացուցում են չափանիշին համապատասխանությունը:</p>
<b>6. ԹՎՓՈՆՆԵՐ</b>		
6.1	Հաստատությունը պետք է թափոնները տեսակավորի ազգային օրենսդրության	Թափոնների վերօգտագործումն ու վերամշակումը խթանելու համար հաստատությունն տեսակավորում է թափոնները՝ համաձայն ազգային (այդ թվում՝ տեղական) օրենսդրության, սակայն առնվազն երեք դասակարգմամբ:

	<p>համաձայն, սակայն առնվազն երեք դասակարգմամբ: (I)</p>	<p>Տեսակավորված թափոնների տեսակների օրինակներն են՝ թուղթ, սովարաթուղթ, մետաղ, պահածոների տարաներ, ապակի, պլաստիկ, վերադարձի ենթակա շշեր, օրգանական/ սննդի թափոններ, այգու թափոններ, կերակրի յուղ և այլն: Ընդհանուր կամ կենցաղային այլ տեսակի թափոնները կատեգորիա չեն համարվում:</p> <p>Բացի թափոնների տեսակավորումից, խրախուսվում է նվազեցնել թափոնների քանակը, օրինակ՝ ունենալով համաձայնագրեր մատակարարների հետ սննդի և ըմպելիքների մատակարարման համար օգտագործվող նյութերի հավաքման և վերօգտագործման վերաբերյալ (տես չափանիշ 6.14):</p> <p>Այս չափանիշին համապատասխանելու համար հաստատությունը պետք է ապահովի, որ հնարավորինս շատ տեսակավորված թափոններ վերամշակվեն/ վերօգտագործվեն տեղում կամ օգտագործված թափոնների ընդունման հաստատության կողմից:</p> <p>Տեսակավորված թափոնները պահվում են ապահով՝ համապատասխան ազգային/ տեղական օրենսդրությանը:</p> <p>Թափոնների տեսակավորումը պետք է հեշտ հասանելի լինեն անձնակազմին: Խոհանոց ունեցող հաստատությունները պետք է, հնարավորության դեպքում, տեսակավորեն թափոնները խոհանոցում»:</p> <p>Եթե կա ազգային/ տեղական իշխանությունների գրավոր հաստատում, որը երաշխավորում է, որ թափոնները տեսակավորվում են հավաքումից հետո, ապա հաստատությունը կարիք չունի տեսակավորելու թափոնները տեղում: Այնուամենայնիվ, հաստատության անձնակազմը պետք է անցնի թափոնների կառավարման սկզբունքների վերաբերյալ վերապատրաստում:</p> <p>Առողիտի ընթացքում հաստատությունը ներկայացնում է հայտարարություն (օրինակ՝ իրավասու տեղական մարմնի կողմից հարցի վերաբերյալ հաստատող նամակի տեսքով), որը ցույց է տալիս իր համապատասխանությունը թափոնների տեսակավորման ազգային և տեղական օրենսդրությանը: Առողիտի (տեսողական մասի) ընթացքում ուսումնասիրվում են նաև թափոնների տեսակավորման օբյեկտները (սվազագույնը երեք դասակարգմամբ թափոնների տեսակավորում):</p>
6.2	<p>Տեսակավորված թափոններով պետք է զբաղվեն թափոնների կառավարման</p>	<p>Կարևոր է, որ հաստատությունը համոզվի, որ տարբեր դասակարգումներով տեսակավորված թափոնները նույնպես առանձին մշակվեն ընդունման ընթացքում և դրանից հետո՝ որպես թափոնների հաջորդական մշակման մաս:</p>

	<p>ազգային/տեղական հաստատությունները, մասնավոր կազմակերպությունները կամ հաստատության սեփական հիմնարկները: (I)</p>	<p>Թափոնների հաջորդական մշակումը ներառում է (որտեղ կիրառելի է) հետագա տեսակավորում/ տարանջատում, վերամշակում և տնօրինում:</p> <p>Տեսակավորված թափոնների ընդունման և հաջորդական մշակման համար հաստատությունը կարող է պայմանագիր կնքել թափոնների կառավարման ազգային կամ տեղական իշխանությունների և/կամ մասնավոր ընկերության հետ:</p> <p>Հաստատությունը կարող է նաև ունենալ իր սեփական հիմնարկները տեսակավորված թափոնների որոշ մասի մշակման համար (օրինակ՝ օրգանական և այգեգործական թափոնների կոմպոստացում): Բացի այդ, հնարավոր է, որ հաստատությունն ունենա տեսակավորված թափոնների ծավալի նվազեցման հարմարություններ, նախքան դրանք թափոնների կառավարման հաստատություններ ուղարկելը, օրինակ՝ սովորաբար սեղմելու սարք:</p> <p>Եթե տեսակավորված թափոնը մշակվում է մասնավոր ընկերության կամ սեփական հիմնարկների միջոցով, հաստատությունը պետք է ներկայացնի ապացույց, որ թափոնների մշակումը կատարվում է Էկոլոգիապես մաքուր եղանակով և չի վնասում մարդու առողջությանը:</p> <p>Առողիտի ընթացքում հաստատությունը ներկայացնում է ընդունման և հաջորդական մշակման առանձին դասակարգումներով թափոնների հետ ճիշտ վարվելակարգի վերաբերյալ թափոնների մշակման՝ պետական և/կամ մասնավոր մարմինների հետ կնքած պայմանագիր(եր)ը: Եթե հաստատությունն ունի տեսակավորված թափոնների մշակման սեփական հարմարություններ, ներկայացվում է գործունեության ստանդարտ ընթացակարգը, իսկ հարմարություններն ստուգվում են տեղում զննության ժամանակ:</p>
6.3	<p>Թափոններն տեսակավորելու և մշակելու ցուցումները պետք է հեշտ հասանելի և հասկանալի լինեն աշխատակազմին: (I)</p>	<p>Թափոնների տեսակավորման համար նախատեսված տարածքն ունի հրահանգներ/ նշաններ, որոնք պարզորոշ կերպով աշխատակազմին ցույց են տալիս՝ ինչպես տեսակավորել թափոնները: Խրախուսվում է կիրառել պատկերանշաններ կամ նկարազարդումներ՝ պարզեցնելու թափոնների տարբեր տեսակների համար նախատեսված թափոնամանների տարբերակումը:</p> <p>Առողիտի ընթացքում ստուգվում են տեսակավորման հաստատությունների ոչլուրմբռնելի հրահանգները/ նշանները: Նաև ստուգվում է հրահանգներին հետևելը (թափոնները տեսակավորված են ճիշտ բաժիններում):</p>
6.4	<p>Նոր գնված պոմպերը և սառնարանային կայանները չպետք է օգտագործեն քլորֆտորածխածին (CFC)</p>	<p>Հաստատության՝ վերջին 12 ամսիների ընթացքում ձեռք բերած Էներգասպառող պոմպերը և սառնարանային կայանները չպետք է պարունակեն CFC (հայտնի նաև ֆրեոն) կամ HCFC միացություններ, քանի որ դրանք ջերմոցային գազեր են և նպաստում են օզոնային շերտի քայքայմանը:</p>



	<p>կամ հիդրոքլորֆտորածխածնային (HCFC) սառնագենտներ: Բոլոր սարքավորումները միշտ պետք է համապատասխանեն սառնագենտների աստիճանական նվազեցման վերաբերյալ ազգային օրենսդրությանը: (I)</p>	<p>Սարքավորումների՝ CFC կամ HCFC պարունակելու մասին տեղեկությունը կարելի է գտնել ապրանքի մանրամասներում կամ տեղեկատվական ձեռնարկում:</p> <p>Շատ երկրներում օրենսդրությունն այլևս չի թույլատրում CFC/HCFC պարունակող արտադրանք, հետևաբար հնարավոր չէ գնել այս միացությունները պարունակող պոմպեր կամ սառնարանային կայաններ: Եթե ազգային կամ տեղական օրենսդրությունն արգելում է քլորֆտորածխածին/հիդրոքլորֆտորածխածին պարունակող արտադրանքը, ապա հաստատությունը պետք է համապատասխանի հարցի վերաբերյալ օրենսդրությանը:</p> <p>Բացի այդ, հիդրոֆտորային անջատի կիրառումը նույնպես չի խրախուսվում:</p> <p>Առողջապահության ներկայացուցիչները, որ վերջին 12 ամիսների ընթացքում ձեռք բերած պոմպերը և սառնարանային կայանները չեն պարունակում քլորֆտորածխածին/ հիդրոքլորֆտորածխածին:</p>
6.5	<p>Մենդիլ/ըմպելիքին առնչվող մեկանգամյա օգտագործման սպասք չպետք է օգտագործվի: (I)</p>	<p>Ռեսուրսների օգտագործման և թափոնների ծավալը նվազեցնելու համար հաստատությունը չի կիրառում մեկանգամյա օգտագործման սպասք, ինչպիսիք են՝ բաժակները, դասակ-պատառաբաղները, ձողիկները, սուրճի խառնիչները և այլն:</p> <p>Մեկանգամյա օգտագործման սպասքը կարող է միայն օգտագործվել բացառիկ դեպքերում, անվտանգության նկատառումներից ելնելով, օրինակ՝ լողավազանի տարածքներում, հատուկ միջոցառումների ժամանակ (անհրաժեշտության դեպքում) կամ սնունդը/ ըմպելիքները գնել-դուրս տանելու (take-away) դեպքում: Եթե ձեռնարկությունը պետք է օգտագործի մեկանգամյա օգտագործման սպասք, խիստ խրախուսվում է օգտագործել կենսաբաշխարկող սպասք՝ պատրաստված թղթից (առանց պլաստիկ ծածկույթի), սովորաբար թղթից, փայտից, եգիպտացորենի օսլայից կամ բուսահեն այլ նյութերից, որոնք պարունակում են կենսաբաշխարկող բաղադրիչներ:</p> <p>Առողջապահության ներկայացուցիչները, որ վերջին 12 ամիսների ընթացքում ձեռք բերած սպասքի՝ ըստ պահանջի կիրառման իր գրավոր քաղաքականությունը, իսկ տեղում զննության ժամանակ ստուգվում է ձեռնարկության՝ այս հարցի վերաբերյալ գրավոր քաղաքականությանը հետևելը:</p>
6.6	<p>Պինդ և հեղուկ վտանգավոր քիմիական նյութերն անվտանգ կերպով պահեստավորվում են: (I)</p>	<p>Քիմիական վտանգավոր նյութերը (այդ թվում՝ վտանգավոր թափոնները), անկախ պինդ կամ հեղուկ վիճակից, անվտանգ կերպով և հավելյալ զգուշավորությամբ պահեստավորվում են՝ խուսափելու շրջակա միջավայրի աղտոտումից և աշխատակազմի առողջությունը վտանգելուց:</p>

		<p>Քիմիական վտանգավոր տեսակավորված նյութերը անվտանգ կերպով պահեստավորվում են՝ համապատասխան ազգային/ տեղական օրենսդրությանը և համաձայն նյութերի անվտանգության տվյալների թերթիկների առաջարկների: Խրախուսվում է, որ վտանգավոր քիմիական նյութերը պահվեն մյուս թափոններից առանձին՝ կողպված սենյակում:</p> <p>Տեսակավորման ենթակա քիմիական վտանգավոր նյութերից են պեստիցիդները, ներկերը, մարտկոցները, շիկացման լամպերը, էլեկտրական սարքերը, մաքրող նյութերը, լողավազանների և այլ տեսակի ախտահանիչները և այլն:</p> <p>Քիմիական վտանգավոր նյութերն առանձին տեղերում անվտանգ կերպով պահելուց զատ, կիրառվում է վտանգավոր քիմիական նյութերի հետ վարվելու անվտանգության կառավարման քաղաքականություն՝ խուսափելու նյութերի հավանական խառնուրդից կամ թափվելուց: Քիմիական վտանգավոր նյութերի պահեստը պետք է պատշաճ կերպով օդափոխվի՝ խուսափելու աշխատակիցների՝ այնտեղ մտնելու դեպքում, առողջությանն ու անվտանգությանը սպառնացող վտանգից:</p> <p>Հաստատությունն ունի հավանական ցանկացած դեպք վերահսկելու ընթացակարգ և հաշվառում է ցանկացած դեպք՝ ներառյալ տեղեկություն այն մասին, թե ինչ է արվել ինդրահարույց դեպքերում՝ պաշտպանելու մարդու առողջությունն ու շրջակա միջավայրը:</p> <p>Վտանգավոր քիմիական նյութերի տեսակավորումից և անվտանգ տեղակայումից զատ խրախուսվում է, որ հաստատությունը նվազեցնի այդ տեսակ նյութերի քանակը կամ (եթե հնարավոր է) փոխարինի շրջակա միջավայրի համար պակաս վտանգավոր արտադրանքով:</p> <p>Աուդիտի ընթացքում ստուգվում են վտանգավոր պինդ և հեղուկ քիմիական նյութերի տարբեր տեսակների համար առանձին տարաները, նյութերի՝ առանձին օդափոխվող սենյակում անվտանգ կերպով պահեստավորված լինելը և վտանգավոր նյութերի տարաների արտահոսք չունենալը:</p>
6.7	<p>Վտանգավոր թափոնները պետք է անվտանգ կերպով տեղափոխվեն լիցենզավորված ընդունող հաստատություն: (I)</p>	<p>Պինդ և հեղուկ վտանգավոր թափոնների անվտանգ առանձնացումից և պահեստավորումից հետո կարևոր է նաև, որ հաստատությունն ապահովի այդպիսի նյութերի անվտանգ տեղափոխվումն ընդունող հաստատություն, որը լիցենզավորված է վտանգավոր թափոնների ընդունման և/կամ վերամշակման համար:</p> <p>Ցանկալի է, որ լիցենզավորված հանրային կամ մասնավոր կառույցները պատասխանատու լինեն վտանգավոր քիմիական թափոնների՝ դեպի մոտակա համապատասխան ընդունող հաստատություն տեղափոխման համար: Որպես այլընտրանք՝ հաստատությունը կարող է վերահսկել վտանգավոր թափոնների տեղափոխումը, եթե դա հնարավոր է</p>

		<p>անել Էկոլոգիապես մաքուր և առողջապահական տեսանկյունից վտանգավոր թափոնների տեղափոխման վերաբերյալ ազգային/ տեղական օրենսդրությանը համապատասխան:</p> <p>Հաստատությունը կարող է նաև համագործակցել այլ հաստատությունների հետ՝ տեղափոխելու տեսակավորված վտանգավոր թափոնները միացյալ ուժերով, եթե դա հնարավոր է անել անվտանգ կերպով և այդպիսի թափոնների հետագա վերամշակման վրա բացասաբար չազդելով:</p> <p>Առևտրի ընթացքում հաստատությունը ներկայացնում է SOP-ը՝ ապացուցելով, որ հաստատության՝ վտանգավոր թափոնների դեպի մոտակա համապատասխան ընդունող հաստատություն տեղափոխումը կատարվում է անվտանգ և ազգային/ տեղական օրենսդրությանը համապատասխան:</p>
6.8	<p>Յուրաքանչյուր սանհանգույց ունի աղբարկղ: (I)</p>	<p>Յուրաքանչյուր սանհանգույց պետք է ունենա աղբարկղ՝ հիգիենիկ թափոնները հավաքելու, որպեսզի դրանք չհայտնվեն զուգարանակոնքում ու կոյուղահամակարգում: Շատ դեպքերում այս և հիգիենիկ այլ արտադրանքներ պարունակում են պլաստիկ, հետևաբար վնասակար են շրջակա միջավայրի համար:</p> <p>Խիստ խրախուսվում է, որ սանհանգույցում կամ հանրային վայրում փակցված լինի ցուցանակ, որ հիգիենիկ թափոնները և նմանատիպ այլ արտադրանքները զուգարանակոնքի փոխարեն պետք է նետել սանհանգույցի աղբարկղը, այլ ոչ զուգարանակոնքի մեջ, ինչը կարող է պատճառել խցանումներ և աղտոտում:</p> <p>Առևտրի ընթացքում սանհանգույցներում ստուգվում է աղբարկղերի և համապատասխան ցուցանակների առկայությունը:</p>
6.9	<p>Առկա սննդի/ ըմպելիքի առավելագույնը հինգ արտադրանք է առանձին փաթեթավորվում մեկ անձի մատուցման համար: (I)</p>	<p>Նպաստելու թափոնների ծավալի նվազեցմանը՝ Էկոլոգիական ոտնահետքը նվազեցնելով ու ծախսերը կրճատելով՝ հաստատության ռեստորանները, աշխատակազմի համար նախատեսված ճաշարանները, բարերը և սննդի մատուցման այլ ծառայությունները մեկ անձի մատուցման համար ունեն սննդի/ ըմպելիքի առանձին փաթեթավորմամբ ոչ ավելի, քան հինգ արտադրանք:</p>

		<p>Սննդի/ ըմպելիքի արտադրանքները ներառում են կաթ/սերուցք, շաքարավազ, կարագ, մեղր, ջեմ, յոգուրտ, պանիրներ, աղ/ պղպեղ և այլն:</p> <p>Խիստ խրախուսվում է մեկ անձի համար փաթեթավորած մատուցումները հնարավորության դեպքում փոխարինել (օրինակ՝ եթե հիգիենիկ նկատառումներից ելնելով օրենքն այլ կերպ չի պահանջում) բազմակի օգտագործման տարաներով, օրինակ՝ փոքր բաժակներով:</p> <p>Առանձին փաթեթավորված արտադրանքի դեպքում խիստ խրախուսվում է փաթեթները վերամշակել:</p> <p>Թեև այս չափանիշը վերաբերում է հաստատության ռեստորաններին, բարերին, աշխատակազմի համար նախատեսված ճաշարաններին և սննդի մատուցման այլ ծառայություններին, այս չափանիշի համապատասխանումը խրախուսվում է նաև կիրառել հյուրերի սենյակներում:</p> <p>Եթե ազգային իշխանությունները սահմանում են հիգիենայի ավելի խիստ կամ այս չափանիշին հակասող կանոններ, հաստատությունը հետևում է ազգային պաշտոնական կանոնակարգին և ազատվում է այս չափանիշից:</p> <p>Առողջի ընթացքում հաստատությունը ներկայացնում է մեկ անձի մատուցման համար սննդի/ ըմպելիքի ոչ ավելի, քան հինգ առանձին փաթեթավորված արտադրանք:</p>
6.10	<p>Հաստատությունը հաշվառում է թափոնների ամբողջական ծավալը: (G)</p>	<p>Կարևոր է իմանալ թափոնների ծավալը, որպեսզի հաստատությունը կարողանա թափոնների նվազեցման, վերամշակման և/կամ վերօգտագործման միջոցով իր էկոլոգիական ոտնահետքը նվազեցնել և համապատասխանաբար ծախսերը կրճատելու պլան մշակել:</p> <p>Հետևաբար, հաստատությունը կատարում է թափոնների ծավալի ամսական հաշվառում՝ ցանկալի է թափոնների տարբեր դասակարգումներով:</p>

		<p>Առողիտի ընթացքում հաստատությունը ներկայացնում է հավաքված թափոնների ամսական ծավալի ամփոփագիրը՝ ցանկալի է ըստ դասակարգման:</p>
6.11	<p>Հիգիենայի պարագաները, ինչպիսիք են՝ օճառը, շամպունը, լոզանքի գելը, տրամադրվում են դիսպենսերով: (G)</p>	<p>Շրջակա միջավայրի վրա ազդեցությունը նվազեցնելու համար՝ նպաստելով թափոնների քանակի կրճատմանը, հաստատությունն օգտագործում է դիսպենսերներ՝ առանձին փաթեթավորված ճանապարհորդական չափսերի տարաների փոխարեն, ինչպիսիք են՝ օճառը, շամպունը և ցնցուղի գելը:</p> <p>Սա վերաբերում է ինչպես հյուրերի սենյակների լոգասենյակներին, այնպես էլ հանրային տարածքների զուգարաններին և աշխատակազմի տարածքների զուգարաններին/ լոգասենյակներին:</p> <p>Եթե դիսպենսերները լիցքավորվում են, ապա դրանք պետք է պարբերաբար մաքրվեն պատշաճ ձևով:</p> <p>Եթե ազգային մարմինները սահմանում են հիգիենայի կանոնակարգեր, որոնք հակասում են այս չափանիշին, հաստատությունը պետք է հետևի պաշտոնական կանոնակարգերին, և այս չափանիշի համար կտրամադրվի բացառություն:</p> <p>Առողիտի ընթացքում ստուգվում է դիսպենսերների առկայությունը:</p>
6.12	<p>Ճամփորդական չափի հիգիենայի պարագաների՝ օճառի, շամպունի, լոզանքի գելի փոքրիկ տարաները վերամշակվում են, պատրաստված են վերամշակված պլաստիկից,</p>	<p>Թափոնների ծավալը կրճատելով՝ Էկոլոգիական ոտնահետքը նվազեցնելու համար հաստատությունն օգտագործում է շամպունի, լոզանքի գելի, օճառի և այլ իրերի առանձին փաթեթավորված փոքրիկ տարաներ/ փաթեթներ, միայն եթե դրանք վերամշակվում են, պատրաստված են վերամշակված պլաստիկից, ունեն Էկոպիտակավորում (օրինակ՝ Անտառների պահպանության խորհրդի պիտակ (FSC) թղթի համար) կամ կենսաբայթայվող են:</p> <p>Արտադրանքի մնացորդները (չօգտագործված ապրանքները), եթե հնարավոր է, պետք է օգտագործվեն աշխատակազմի համար նախատեսված տարածքներում: Թույլատրելի դեպքերում լոզանքի օգտագործված պարագաները կարելի է նաև հավաքել նվիրատվության համար կամ տալ աշխատակիցներին:</p>

	<p>Էկոպիտակավորված են կամ կենսաբայթայվող են: (G)</p>	<p>Եթե փաթեթավորումը վերամշակելի է տվյալ երկրում, այն վերամշակվում է որպեսզի գործունեության ստանդարտ ընթացակարգը երաշխավորի, որ այն առանձնացվում է ընդհանուր աղբից: Դրանից բացի առաջարկվում է, որ հյուրերը դատարկ փաթեթները դնեն աղբարկղի մոտ դրանք մյուս թափոններից ավելի հեշտ առանձնացնելու համար:</p> <p>Առողիտի ընթացքում հաստատությունը ներկայացնում է արտադրանքները, դրանց մնացորդները վերօգտագործելու և փաթեթները վերամշակելու ստանդարտ գործընթացը:</p>
<p>6.13</p>	<p>Չյուրերի հիգիենայի պարագաները, անձնական խնամքի պայուսակները և մեկանգամյա օգտագործման այլ պիտույքները հասանելի են՝ միայն ըստ պահանջի: (G)</p>	<p>Թափոնների ծավալը կրճատելով՝ Էկոլոգիական ոտնահետքը նվազեցնելու համար հաստատությունը հյուրերի սենյակներում չի տրամադրում անձնական խնամքի փաթեթներ կամ մեկանգամյա օգտագործման այլ պիտույքներ, ինչպիսիք են՝ օճառը, շամպունը, լոգանքի գելը, հողաթափերը, կոշիկի լաքը, լոգանքի գլխարկները, սանրերը, եղունգի խարտոցները և այլն: Այս իրերը կարելի է ստանալ ընդունարանից՝ ըստ պահանջի:</p> <p>Առողիտի ընթացքում ստուգվում է, որ հիգիենայի պարագաները, անձնական խնամքի փաթեթները և մեկանգամյա օգտագործման այլ պիտույքները չլինեն հյուրերի սենյակներում:</p>
<p>6.14</p>	<p>Հաստատությունն ունի թափոնների նվազեցման և/կամ վերօգտագործման վերաբերյալ պլան: (G)</p>	<p>Տեսակավորված թափոնների տեսակների ճշգրիտ ծավալների մասին տեղյակ լինելով՝ հաստատությունն ունենում է թափոնների նվազեցման, վերամշակման և/կամ վերօգտագործման միջոցով Էկոլոգիական ոտնահետքը նվազեցնելու և, հետևաբար, ծախսերը կրճատելու պլան, որի նպատակն է թափոնների կտրուկ նվազեցումը/ առաջացման գրոյացումը:</p> <p>Տարբեր դասակարգումներում թափոնների քանակը հաշվառելի օգտագործվում է՝ այդ դասակարգումներում ստացված թափոնների նվազեցման, վերամշակման և/կամ վերօգտագործման նպատակով թափոնների կառավարման պլան ձևավորելիս:</p> <p>Առողիտի ընթացքում հաստատությունը ներկայացնում է թափոնների նվազեցման, վերամշակման և/կամ վերօգտագործման նպատակով կազմված թափոնների կառավարման գրավոր պլանը:</p>
<p>6.15</p>	<p>Չյուրերը և աշխատակազմը կարող են առանձնացնել թափոններն՝ ըստ դասակարգումների, որոնք</p>	<p>Չյուրերին և աշխատակազմին թափոնների առանձնացման և վերամշակման վերաբերյալ իրազեկելու համար հաստատությունը նրանց առաջարկում է առանձնացնել իրենց թափոնները: Տեսակավորված թափոնները հավաքվում</p>

	<p>կմշակեն թափոնների կառավարման հաստատությունները: (G)</p>	<p>և դրվում են թափոնների կառավարման հաստատությունների կողմից տեսակավորված դասակարգումներով տեսակավորման ամաններում:</p> <p>Յյուրերի համար առանձին տեսակավորման ամաններ կարող են տեղադրվել հյուրերի սենյակներում կամ հանրային վայրերում (միջանցք, նախասրահ, ռեստորան, համաժողովների համար նախատեսված տարածքներ, ավտոկայանատեղիներ և այլն): Աշխատակազմի համար տեսակավորման ամաններ կարող են տեղադրվել նրանց համար նախատեսված ճաշարաններում, հանդերձարաններում և այլն: Թափոնների առանձնացումը կարելի է անել տարբեր տեսակների համար առանձին ամաններով կամ տարբեր դասակարգումներ ունեցող մեկ տեսակավորման նամակի միջոցով:</p> <p>Շատ կարևոր է, որ լինեն հստակ հրահանգներ/ ցուցանակներ (ցանկալի է պատկերանշաններ կամ նկարազարդումներ), որոնք ցույց են տալիս տարբեր տեսակի թափոնների տարբեր ամանները/ բաժինները: Ընդհանուր/ խառը/ այլ աղբը վերամշակելի թափոնների մաս չի համարվում: Որպես այլընտրանք՝ հնարավոր է թափոնների առանձնացման համակարգ ունենալ տարբեր վայրերում (օրինակ՝ թուղթը և թերթերը՝ սեղանի վրա, շշերը և թիթեյա տարաներն՝ ամանի կողքին, իսկ ընդհանուր աղբն՝ աղբարկղում):</p> <p>Թափոնների տեսակավորման տարբերակների վերաբերյալ հյուրերը տեղեկանում են հաստատության բնապահպանական նախաձեռնությունների մասին տեղեկատվության միջոցով (հյուրերի համար տեղեկատվական բրոշյուրների, հյուրերի սենյակների և հանրային վայրերի հեռուստատեսայինների, համաժողովների տարածքների տեղեկությունների միջոցով):</p> <p>Որպես «Green Key» ծրագրին միանալու պայման՝ հաստատությունը պետք է բոլոր նյութերում և հաղորդակցության մեջ ապահովի ճշգրիտ, պարզ և դյուրըմբռնելի տեղեկություն:</p> <p>Առողջիտի ընթացքում ցույց է տրվում հյուրերի և աշխատակազմի համար թափոնների առանձնացման համակարգը (դյուրըմբռնելի տեղեկությամբ):</p>
6.16	<p>Օճառների, լոգանքի գելերի և շամպունների առնվազն 75%-ն ունի միջազգային/ ազգային ճանաչված էկո պիտակ:(G)</p>	<p>Օգտագործվող քիմիական նյութերի ծավալը նվազեցնելու միջոցով էկոլոգիական ոտնահետքը փոքրացնելու համար օգտագործվող օճառների, լոգանքի գելերի և շամպունների առնվազն 75%-ն ունի (միջ)ազգայնորեն ճանաչված էկո պիտակ: Էկո պիտակ ունենալուց զատ նաև խրախուսվում է, որ օճառները, լոգանքի գելերը և շամպուններն ունենան «դաժանությունից զերծ» էկո պիտակ (այսինքն՝ դրանք չեն փորձարկվել կենդանիների վրա): Սա վերաբերում է հյուրերի սենյակների սանհանգույցներին, աշխատակազմի համար նախատեսված տարածքներին, ինչպես նաև հանրային վայրերին:</p>

		<p>Աուդիտի ընթացքում հաստատությունը ներկայացնում է կամ գնման իր քաղաքականությունը և/կամ տեղում ստուգմամբ հաստատվում է օճառների, լոգանքի գելերի և շամպունների առնվազն 75%-ի՝ (միջ)ազգայնորեն ճանաչված էկո պիտակ ունենալը:</p>
6.17	<p>Ձեռք բերված առնվազն հինգ արտադրանք կամ փաթեթավորված չեն պլաստիկով, կամ կրում են առնվազն 50%-ով վերամշակված պլաստիկ փաթեթ: (G)</p>	<p>Թափոնների ծավալի նվազեցման միջոցով Էկոլոգիական ոտնահետքը փոքրացնելու համար հաստատությունը ձեռք է բերում պլաստիկ փաթեթավորում չունեցող արտադրանք: Եթե արտադրանքն ունի պլաստիկ փաթեթավորում, ապա այն պետք է պարունակել առնվազն 50% վերամշակված պլաստիկ: Օգտագործումից հետո արտադրանքի փաթեթը պետք է կրկին վերամշակվի:</p> <p>Այս չափանիշին համապատասխանելու համար անվազն հինգ արտադրանք (օրիանկ՝ մաքրող միջոցներ, հիգիենայի պարագաներ, սննդային ապրանքների փաթեթներ և այլն) կամ պետք է փաթեթավորված չլինեն պլաստիկով, կամ կրեն առնվազն 50%-ով վերամշակված պլաստիկ փաթեթ:</p> <p>Աուդիտի ընթացքում հաստատությունը ներկայացնում է փաստաթուղթ, որ առնվազն հինգ արտադրանք կամ փաթեթավորված չեն պլաստիկով, կամ կրում են առնվազն 50%-ով վերամշակված պլաստիկ փաթեթ:</p>
6.18	<p>Օրգանական թափոնները կոմպոստացվում են կամ օգտագործվում այլ նպատակներով: (G)</p>	<p>Օրգանական նյութերից (սննդային մնացորդներ և/կամ այգեգործական թափոններ) ստացվող թափոնները վերօգտագործելու և դրանով իսկ Էկոլոգիական ոտնահետքը նվազեցնելու համար հաստատությունն ունի օրգանական թափոններն առանձնացնելու համակարգ: Օրգանական թափոնները հետագայում կարող են կոմպոստավորվել կամ օգտագործվել այլ նպատակներով, ինչպիսիք են՝ կենսազազի արտադրությունը կամ կենդանիների կերը:</p> <p>Եթե օրգանական թափոնները կոմպոստավորվում են, կարևոր է, որ այն արվի հիգիենիկ ձևով՝ չազդելով հյուրերի, աշխատակազմի և շրջապատող համայնքի վրա:</p> <p>Աուդիտի ընթացքում հաստատությունը ցույց է տալիս կոմպոստի կույտը կամ օրգանական թափոնների տարան: Եթե կոմպոստը հավաքվում է արտաքին ընկերության կողմից կենսազազի, կենդանիների կերակրման կամ այլ նպատակներով, հաստատությունը ներկայացնում է փաստաթղթեր, որ օրգանական թափոնները մշակվում են արտաքին ընկերության կողմից:</p>
<p><b>7. ԷՆԵՐԳԻԱ</b></p>		



7.1	<p>Էներգիայի սպառումը պետք է գրանցվի առնվազն ամիսը մեկ անգամ: (I)</p>	<p>Էներգասպառման նվազեցմամբ Էկոլոգիական ոտնահետքը փոքրացնելու և ծախսերը կրճատելու համար հաստատությունը հաշվառում է իր Էներգասպառման ամբողջական ծավալն ամսական առնվազն մեկ անգամ: Հնարահովորության դեպքում նշվում են Էներգասպառման աղբյուրները:</p> <p>Խրախուսվում է Էներգասպառման ամբողջական ծավալը հաշվառել ավելի հաճախ, քան ամսական մեկ անգամ, քանի որ դա կապահովի ավելի մանրամասն տեղեկություն:</p> <p>Տվյալները պետք է ենթարկվեն վերլուծության և ակտիվորեն օգտագործվեն Էներգասպառման նվազեցման նպատակով: Էներգասպառման խոշոր փոփոխությունների դեպքում (հատկապես սպասվածից ավելի Էներգասպառման դեպքում) հաստատությունն ունի ընթացակարգեր այս փոփոխության պատճառն անմիջապես ուսումնասիրելու և վերականգնողական աշխատանքներ իրականացնելու համար:</p> <p>Առողիտի ընթացքում ներկայացվում են Էներգասպառման ամսական հաշվառումները, ինչպես նաև Էներգասպառման խոշոր և/կամ հանկարծակի փոփոխությունների և վերականգնման հնարավոր ստանդարտ ընթացակարգի վերաբերյալ տեղեկությունները:</p>
7.2	<p>Ջեռուցման, օդափոխման և օդորակման վերահսկման համակարգերը պետք է սահմանված լինեն: (I)</p>	<p>Էներգաօգտագործման նվազեցմամբ Էկոլոգիական ոտնահետքը փոքրացնելու և ծախսերը կրճատելու համար հաստատությունը պետք է սահմանած ունենա ջեռուցման, օդափոխման և օդորակման (ՋՕՕ) վերահսկման համակարգեր:</p> <p>Դա կարող է լինել կենտրոնացված ավտոմատ կամ ձեռքով կառավարվող համակարգչային համակարգ (շենքի ղեկավարման համակարգ), որն անջատում կամ փոխում է ՋՕՕ-ն: Կարող է նաև լինել հաստատության տարբեր հատվածներում աշխատակազմի համար նախատեսված SOP-ում նկարագրված ՋՕՕ-ի ձեռքով կարգավորվող համակարգ: Դրանից զատ կարելի է հաշվի առնել նաև վերահսկումը (շերտա)վարագույրները փակ պահելու միջոցով:</p> <p>Կառավարման համակարգը հաշվի է առնում սեզոնի փոփոխությունը և հաստատության տարբեր հատվածների (չ)օգտագործվելը (հյուրերի, հանդիպումների սենյակներ, ռեստորանային տարածքներ, հանրային այլ վայրեր և այլն):</p> <p>Առողիտի ընթացքում հաստատությունը ներկայացնում է շենքի կառավարման համակարգը և/կամ ՋՕՕ կառավարման համակարգերն ապացուցող SOP-ը:</p>
7.3	<p>Հաստատության բոլոր լամպերի առնվազն 75%-ը Էներգախնայող են և բոլոր</p>	<p>Քանի որ լամպերն են պատասխանատու Էներգասպառման զգալի մասի համար, Էկոլոգիական ոտնահետքը նվազեցնելու համար հաստատությունը համոզվում է, որ լամպերի առնվազն 75%-ը Էներգախնայող են և համապատասխանում են ԵՄ Էներգաարդյունավետության պիտակի երկու ամենաԷներգաարդյունավետ դասին կամ</p>

	<p>լամպերի առնվազն 50%-ը LED են: (I)</p>	<p>EnergyStar վարկանիշին: Պահանջը վերաբերում է հյուրերի սենյակներին, հանրային վայրերին (այդ թվում՝ նախասրահին, ռեստորաններին, համաժողովների համար նախատեսված տարածքներին, դահլիճներին և այլն) և աշխատակազմի համար նախատեսված տարածքներին:</p> <p>Ամենաէներգաարդյունավետ և հետևաբար նախընտրելի լամպերը LED լամպերն են, սակայն էներգաարդյունավետ այլ լամպեր (կոմպակտ լյումինեսցենտային լամպ, CFL) նույնպես կարող են օգտագործվել: Բոլոր լամպերի առնվազն 50%-ը պետք է լինեն LED: Եթե վերջին երեք տարիների ընթացքում ձեռք են բերվել էներգաարդյունավետ այլ լամպեր, հաստատությունը կարող է ազատվել լամպերի առնվազն 50%-ի LED լինելու պահանջից:</p> <p>Մեծ մասամբ էներգաարդյունավետ լամպերը մյուսներից ավելի թանկարժեք են, սակայն արդյունավետության զատ, այս լամպերն ավելի երկարակյաց են և մյուսների նման հաճախակի փոխարինում չեն պահանջում: Երկարաժամկետ հեռանկարում սա կրճատում է ծախսերը և նվազեցնում է լամպերի փոփոխության վրա ծախսվող ժամանակը:</p> <p>Առողջիտի ընթացքում հաստատությունը ներկայացնում է լամպերի ընդհանուր նկարագիրը՝ ցույց տալով, որ հաստատության լամպերի առնվազն 75%-ը էներգախնայող են և դրանց առնվազն 50%-ը LED են: Տեղում զննության ժամանակ հյուրերի ընտրված մի քանի սենյակներում, հանրային վայրերում և աշխատակիցների համար նախատեսված տարածքներում ստուգվում են էներգախնայող լամպերը:</p>
7.4	<p>Օդաքարշի յուղաֆիլտրերը (grease filters) պետք է տարեկան առնվազն մեկ անգամ մաքրվեն: (I)</p>	<p>Խոհանոցի օդաքարշները ավելի շատ էներգիա են սպառում, եթե յուղաֆիլտրերը կանոնավոր չեն մաքրվում: Հետևաբար Էկոլոգիական ոտնահետքը նվազեցնելու համար պահանջվում է մաքրել օդաքարշների յուղաֆիլտրերը տարեկան առնվազն մեկ անգամ, սակայն ցանկալի է ավելի հաճախ:</p> <p>Առողջիտի ընթացքում հաստատությունը ներկայացնում է յուղաֆիլտրերի տարեկան առնվազն մեկ անգամ մաքրման կետ պարունակող SOP-ը (այդ թվում՝ տեղեկություն, թե վերջին անգամ երբ են դրանք մաքրվել):</p>
7.5	<p>Ջեռուցման, օդափոխման և օդորակման վերահսկման համակարգը պետք է տարեկան առնվազն մեկ անգամ ստուգվի և անհրաժեշտության դեպքում վերանորոգվի մշտապես էներգախնայող լինելու համար: (I)</p>	<p>Որպեսզի ջեռուցման, օդափոխման և օդորակման վերահսկման համակարգը (ՋՕՕ) լինի էներգախնայող, այդպիսով նվազեցնելով Էկոլոգիական ոտնահետքը և կրճատելով ծախսերը, այն ստուգվում է տարեկան առնվազն մեկ անգամ :</p> <p>Խիստ խրախուսվում է, որ ՋՕՕ համակարգը ստուգվի արտաքին ընկերության կողմից, սակայն այն կարող է վերահսկվել նաև ներքին կարգով, օրինակ՝ հաստատության գլխավոր ճարտարագետի կողմից: Ստուգումը ներառում է նաև ՋՕՕ համակարգի ֆիլտրերը:</p> <p>Եթե ՋՕՕ համակարգի ստուգումը հայտնաբերում է վերանորոգման (մաքրման կամ նորոգման) կարիք, հաստատությունը պետք է այն ապահովի: Խիստ խրախուսվում է, որ ցանկացած նորոգում արվի անմիջապես, սակայն,</p>

		<p>Եթե դա անհնար է, 200 համակարգի վերանորոգումը պետք է կատարվի կարիքի բացահայտումից հետո 1-2 ամիսների ընթացքում:</p> <p>Առողիտի ընթացքում հաստատությունը ներկայացնում է 200 համակարգի արտաքին կամ ներքին ստուգման SOP-ը: Ներկայացվում է նաև տեղեկություն 200 համակարգի վերջին ստուգման (վերջին 12 ամիսների ընթացքում) և ստուգման վերջնարդյունքի (ներառյալ՝ արված ցանկացած նորոգման ամսաթիվ) վերաբերյալ:</p>
7.6	<p>Սառնարանները, սառնարանային պահեստները, տաքացվող պահարանները և ջեռոցները պետք է հերմետիկ փակվեն: (I)</p>	<p>Սառնարանների, սառնարանային պահեստների, տաքացվող պահարանների և ջեռոցների էներգասպառումը մեծանում է, եթե դրանց դռները հերմետիկ փակված չեն: Սարքերի դռները կարող են ունենալ եզրային ռեզիններ:</p> <p>Դռան եզրային ռեզինները կարող են մաշվել ժամանակի ընթացքում: Հետևաբար անհրաժեշտ է, որ դրանք տարեկան առնվազն մեկ անգամ ստուգվեն, սակայն ցանկալի է ավելի հաճախ: Եթե ստուգման արդյունքում հայտնաբերվում է, որ դրանք վնասվել են, անհրաժեշտ է, որ հաստատությունն անմիջապես նորոգի կամ փոխարինի դրանք:</p> <p>Առողիտի ընթացքում հաստատությունը ներկայացնում է դռան եզրային ռեզինների տարեկան առնվազն մեկ անգամ ստուգման SOP-ը և, անհրաժեշտության դեպքում, նորոգում/ փոխարինումը: Տեղում ստուգումը ներառում է ընտրված սառնարանների, սառնարանային պահեստների, տաքացվող պահարանների և ջեռոցների դռների ստուգում:</p>
7.7	<p>Հաստատությունը սահմանել է սենյակների հովացման և ջեռուցման ստանդարտ ջերմաստիճան: (I)</p>	<p>Էներգասպառման հնարավորին լավագույն վերահսկմամբ Էկոլոգիական ոտնահետքը փոքրացնելու և ծախսերը կրճատելու համար հաստատությունը սահմանել է սենյակների հովացման և ջեռուցման ստանդարտ ջերմաստիճան (հատկապես հյուրերի և հանդիպումների սենյակներները):</p> <p>Եթե դրսում ջերմաստիճանը 22°C (72°F)-ից բարձր է, ապա սենյակի հովացման ստանդարտ ջերմաստիճանը պետք է սահմանվի նվազագույնը 22°C (72°F): Եթե դրսում ջերմաստիճանը 22°C (72°F)-ից ցածր է, ապա սենյակի ջեռուցման ստանդարտ ջերմաստիճանը պետք է սահմանվի առավելագույնը 22°C (72°F):</p> <p>Ստանդարտ ջերմաստիճանը կարող է կարգավորվել կենտրոնացված համակարգից ավտոմատ կերպով կամ յուրաքանչյուր սենյակում՝ ձեռքով:</p> <p>Հյուրերը կարող են իրենց կամ հանդիպումների սենյակներում փոփոխել ստանդարտ ջերմաստիճանը ձեռքով կամ դիմելով ընդունարանի աշխատակիցներին: Ցանկալի է, որ հյուրերը ստանդարտ ջերմաստիճանը փոխեն առավելագույնը երեք աստիճանով:</p> <p>Առողիտի ընթացքում հաստատությունը ներկայացնում է հյուրերի և հանդիպումների սենյակներների հովացման և ջեռուցման ստանդարտ ջերմաստիճանի սահմանման ընթացակարգը, իսկ տեղում զննության ժամանակ ստուգվում</p>

		են ընտրված սենյակների ստանդարտ ջերմաստիճանները:
7.8	Հյուրերի սենյակների նոր ձեռք բերված էլեկտրական սարքերը Էներգախնայող են: (I)	Ցածր Էներգասպառմամբ Էկոլոգիական ոտնահետքը փոքրացնելու և ծախսերը կրճատելու համար հաստատությունը համոզվում է, որ հյուրերի սենյակների վերջին 12 ամիսների ընթացքում ձեռք բերված Էներգասպառող սարքերը Էներգախնայող են: Սա վերաբերում է այն սարքավորումներին, որոնք ունեն Էկո պիտակ:  Համոզվելու համար, որ սարքավորումներն Էներգախնայող են, դրանք պետք է ունենան Էկո պիտակ կամ բարձր Էներգաարդյունավետության այլ վարկանիշ (օրինակ՝ համապատասխան ԵՄ Էներգաարդյունավետության պիտակային համակարգի երկու ամենաԷներգաարդյունավետ դասերից մեկին կամ EnergyStar վարկանիշին):  Եթե նոր ձեռք բերված էլեկտրական սարքավորումները չունեն Էկո պիտակ, բարձր Էներգաարդյունավետության այլ վարկանիշ, կամ այդպիսի սարքավորումները հասանելի չեն հաստատության երկրում, ապա վերջինս ազատվում է այս չափանիշից:  Առևտրի ընթացքում հաստատությունը ներկայացնում է մանրամասները՝ ապացուցելով, որ հյուրերի սենյակներում օգտագործվող և վերջերս ձեռք բերված էլեկտրական սարքավորումները Էներգախնայող են:
7.9	Արտաքին լուսավորությունը հասցված է նվազագույնի և/կամ ունի սենսորային ավտոմատ անջատիչներ: (I)	Էկոլոգիական ոտնահետքը նվազեցնելու և ծախսերը կրճատելու համար հաստատությունն ունի արտաքին լուսավորության Էներգասպառման նվազեցման սահմանված համակարգ:  Արտաքին լուսավորության համակարգը ցերեկային ժամերին պետք է անջատված լինի: Կան արտաքին լուսավորության Էներգաօգտագործման նվազեցման նաև այլ տարբերակներ՝ գիշերային որոշ ժամերին լուսավորության ավտոմատ անջատման կամ շարժ որսալու դեպքում լուսավորություն ապահովող սենսորների տեղադրման միջոցով: Կարող են կիրառվել արտաքին լուսավորության տարբեր համակարգեր տարբեր նպատակների համար: Հաստատությունը միշտ պետք է համապատասխանի լուսավորության անվտանգության վերաբերյալ ազգային/ տեղական կանոնակարգին:  Առևտրի ընթացքում ստուգվում են սենսորների տեղադրման վայրերը և ցերեկային ժամերին անջատվելը:
7.10	Հաստատությունը օգտագործում կամ գնում է առնվազն 50% վերականգնվող և/կամ Էկոպիտակավորված էլեկտրաԷներգիա: (G)	Որպեսզի հաստատությունն ընտրի Էկոլոգիապես ամենամաքուր և կայուն տեսակի էլեկտրաԷներգիան, այն պետք է օգտվի վերականգնվող աղբյուրներից (արևային մարտկոց, քամու Էներգիա, կենսազանգված, օրգանական թափոնից կենսազագ, հիդրոէլեկտրական կամ երկրաջերմային Էներգիա և այլն): Միջուկային Էներգիան չի համարվում վերականգնվող աղբյուր առաջացող միջուկային թափոնի պատճառով:

		<p>Վերականգնվող էլեկտրաէներգիա կարող է արտադրվել տեղում կամ արտաքին աղբյուրից, որը ցանկալի է լինի մոտակայքում:</p> <p>Խիստ խրախուսվում է, որ հաստատությունը համոզվի, որ իր էլեկտրաէներգիան վերականգնվող աղբյուրներից է, սակայն այս չափանիշին համապատասխանելու համար հաստատության էլեկտրաէներգիայի առնվազն 50%-ը պետք է լինի վերականգնվող աղբյուրներից:</p> <p>Հասանելիության դեպքում հաստատությանը նաև խրախուսվում է դիտարկել Էկոպիտակավորված էլեկտրաէներգիա ձեռք բերելը: Սա նշանակում է, որ էլեկտրաէներգիան ոչ միայն վերականգնվող է, այլևսև վավերացված է երրորդ կողմից և համապատասխանում է կայունության լրացուցիչ չափանիշների, օրինակ՝ կենսաբազմազանությունը հաշվի առնելը, Էներգետիկայի՝ աղբատության դեմ պայքարող նախագծերը ֆինանսավորելը, մաքուր Էներգիային ուղղված նոր նախագծերը և այլն: Էլեկտրաէներգիայի Էկո պիտակների օրինակներ են EKOenergy-ն, Green-e-ն, Bra Miljöval-ը և այլն:</p> <p>Առողիտի ընթացքում հաստատությունը ներկայացնում է փաստաթղթեր՝ ապացուցելով, որ օգտագործում է վերականգնվող աղբյուրներից արտադրվող առնվազն 50% էլեկտրաէներգիա, և/կամ ձեռք է բերել Էկոպիտակավորված էլեկտրաէներգիա:</p>
7.11	<p>Հաստատությունն օգտագործում կամ գնում է 100% վերականգնվող և/կամ Էկոպիտակավորված էլեկտրաէներգիա: (G)</p>	<p>Որպեսզի հաստատությունն ընտրի Էկոլոգիապես ամենամաքուր և կայուն տեսակի էլեկտրաէներգիան, այն պետք է օգտվի վերականգնվող աղբյուրներից (արևային մարտկոց, քամու Էներգիա, կենսազանգված, օրգանական թափոնից կենսազազ, հիդրոէլեկտրական կամ երկրաջերմային Էներգիա և այլն): Միջուկային Էներգիան չի համարվում վերականգնվող աղբյուր առաջացող միջուկային թափոնի պատճառով:</p> <p>Վերականգնվող էլեկտրաէներգիա կարող է արտադրվել տեղում կամ արտաքին աղբյուրից, որը ցանկալի է լինի մոտակայքում:</p> <p>Այս չափանիշին համապատասխանելու համար հաստատության ողջ (100%) էլեկտրաէներգիան պետք է լինի վերականգնվող աղբյուրներից:</p> <p>Հասանելիության դեպքում հաստատությանը նաև խրախուսվում է դիտարկել Էկոպիտակավորված էլեկտրաէներգիա ձեռք բերելը: Սա նշանակում է, որ էլեկտրաէներգիան ոչ միայն վերականգնվող է, այլևսև վավերացված է երրորդ կողմից և համապատասխանում է կայունության լրացուցիչ չափանիշների, օրինակ՝ կենսաբազմազանությունը հաշվի առնելը, Էներգետիկայի՝ աղբատության դեմ պայքարող նախագծերը ֆինանսավորելը, մաքուր Էներգիային ուղղված նոր նախագծերը և այլն: Էլեկտրաէներգիայի Էկո պիտակների օրինակներ են EKOenergy-ն, Green-e-ն, Bra Miljöval-ը և այլն:</p>

		<p>Աուդիտի ընթացքում հաստատությունը ներկայացնում է փաստաթղթեր՝ ապացուցելով, որ հաստատության ողջ (100%) էլեկտրաէներգիան արտադրվում է վերականգնվող աղբյուրներից, և/կամ ձեռք է բերվել Էկոպիտակավորված էլեկտրաէներգիա:</p>
7.12	<p>Հաստատության ջեռուցման/ հովացման համար չի օգտագործվում օրգանական հանածո վառելիք: (G)</p>	<p>Էկոլոգիական ոտնահետքը և հաստատության ածխածնային արտանետումները նվազեցնելու համար ջեռուցման/ հովացման նպատակով չի օգտագործվում օրգանական հանածո վառելիք (նավթ, գազ կամ ածուխ): Հաստատության ջեռուցում/ հովացումից զատ սա նաև վերաբերում է տաք ջրին և խոհարարությանը:</p> <p>Օրգանական հանածո վառելիքից և միջուկային էներգիայից ստացվող էներգասպառման այլընտրանքներից են վերականգնվող էներգիայով էլեկտրական ջերմային պոմպերը, վերականգնվող աղբյուրներից օգտվող ջեռուցման կամ հովացման տարածքային ցանցային համակարգերին միանալը, արևային էներգիայով աշխատող ջեռուցման կաթսաների կիրառումը, քամու կամ երկրաջերմային էներգիան, փայտով այրվող էներգախնայող վառարանները և այլն:</p> <p>Աուդիտի ընթացքում հաստատությունը ներկայացնում է փաստաթղթեր՝ ապացուցելով, որ հաստատությունը ջեռուցման/ հովացման համար օգտագործում է միայն օրգանական հանածո վառելիքի այլընտրանքներ:</p>
7.13	<p>Պատուհանների առնվազն 75%-ը ազգային/ տեղական կանոնադրության սահմանած ստանդարտից ավելի էներգախնայող է: (G)</p>	<p>Պատուհանները կարող են մեծապես նպաստել հաստատության աճող էներգասպառմանը: Հետևաբար, էկոլոգիական ոտնահետքը նվազեցնելու համար կլիմայական ցուրտ տարածքներում գտնվող հաստատությունները պետք է ապահովեն բարձր ջերմամեկուսացում (օրինակ՝ կրկնակի կամ եռակի ապակեպատում), իսկ կլիմայական տաք տարածքներում գտնվող հաստատությունները պետք է ունենան այլընտրանքային էներգախնայող պատուհաններ (օրինակ՝ պատուհանների վրա լույսն անդրադարձնող ծածկ, շերտավարագույր կամ լույսի քողարկման այլ տարբերակներ և այլն) :</p> <p>Բացի այդ, կլիմայական շատ տաք կամ ցուրտ տարածքներում հաստատությունը կարող է ունենալ նաև պատուհանները բացելու սահմանափակում:</p> <p>Այս չափանիշին համապատասխանելու համար պետք է լինեն նախաձեռնություններ, որոնք կապահովեն ավելի բարձր ստանդարտներ, քան ազգային/ տեղական կանոնադրությունն է սահմանել ջերմամեկուսացման և էներգախնայման այլ նախաձեռնությունների վերաբերյալ:</p> <p>Այս չափանիշին համապատասխանելու համար հաստատության պատուհանների առնվազն 75%-ը պետք է ունենա պատշաճ ջերմամեկուսացում, կամ պետք է սահմանվեն ազգային/ տեղական կանոնադրության ստանդարտից ավելի բարձր էներգախնայման այլ նախաձեռնություններ:</p>

		<p>Աուդիտի ընթացքում հաստատությունը ներկայացնում է փաստաթուղթ (օրինակ՝ վավերացնող արտաքին գործակալից)՝ ընդգծելով պատուհանների առկայությունը 75%-ի ջերմամեկուսացման կամ էներգախնայման նախաձեռնությունների՝ ազգային/ տեղական կանոնադրության սահմանած ստանդարտից ավելի բարձր էներգախնայման իր համակարգը՝ կախված կլիմայից:</p>
7.14	<p>Հաստատության նոր ձեռք բերված էլեկտրական սարքերը էներգախնայող են: (G)</p>	<p>Ցածր էներգասպառման միջոցով էլեկտրական ունահետքը նվազեցնելու և ծախսերը կրճատելու համար հաստատությունը համոզվում է, որ վերջին 12 ամիսների ընթացքում ձեռք բերված էլեկտրական սարքերն ունեն էկո պիտակ կամ էներգախնայող են:</p> <p>Խոհանոցում դրանք կարող են լինել էներգախնայող վառարանները, գոլորշեփները, կաթասները, օդափարշները, սառնարանները, սառցարանները, սպասք լվացող մեքենաները, տոստերները, սառույց պատրաստող սարքերը, գեներատորները և այլն: Գրասենյակներում և ընդունարանում դրանք կարող են լինել համակարգիչները, տպիչները, պատճենահան ապարատները և այլն:</p> <p>Լվացքի համար նախատեսված տարածքում դրանք կարող են լինել լվացքի մեքենաները, չորանոցները և այլն: Ֆիթնես տարածքներում դրանք կարող են լինել մարզասարքերը: Տնտեսվարման շրջանակում դրանք կարող են լինել փոշեկուլները, շոգեմաքրիչները և այլն: Հանրային վայրերում կարող են լինել էներգախնայող վերելակները: Հյուրերի սենյակների էլեկտրական սարքերն այստեղ ընդգրկված չեն, քանի որ դրանց անդրադարձ է կատարվել չափանիշ 7.11-ում:</p> <p>Համոզվելու համար, որ սարքերն էներգախնայող են, դրանք պետք է ունենան միջազգայնորեն կամ պետականորեն ճանաչված էկո պիտակ կամ էներգախնայման բարձր վարկանիշ, օրինակ համապատասխան են ԵՄ էներգաարդյունավետության պիտակի երկու ամենաէներգաարդյունավետ դասերին կամ EnergyStar վարկանիշին և այլն:</p> <p>Աուդիտի ընթացքում հաստատությունը ներկայացնում է փաստաթղթեր՝ ցույց տալով, որ վերջին 12 ամիսների ընթացքում ձեռք բերված էլեկտրական սարքերն ունեն ճանաչված էկո պիտակ կամ էներգախնայման բարձր վարկանիշ:</p>
7.15	<p>Յուրաքանչյուր հինգ տարին մեկ կատարվում է էներգիայի արտաքին աուդիտ: (G)</p>	<p>Հաստատության բարձր էներգասպառման և էներգիայի (և ծախսերի) խնայման հավանական տարածքների մասին ավելի լավ պատկերացում կազմելու համար պետք է յուրաքանչյուր հինգ տարին մեկ կատարել էներգիայի արտաքին աուդիտ: էներգիայի աուդիտի նպատակն է նվազեցնել հաստատության ընդհանուր էներգասպառումը, ինչպես նաև բարձրացնել վերականգնվող էներգիայի օգտագործվող աղբյուրների տոկոսը:</p>

		<p>Էներգիայի աուդիտն իրականացվում է Էներգետիկ ոլորտի արտաքին խորհրդատուի կամ ազգային իշխանությունների կողմից:</p> <p>Էներգիայի աուդիտը հայտնաբերում է հաստատության զգալի Էներգասպառող տարածքները, ներառում է խորհրդատվություն և հաստատության Էներգասպառման նվազեցման առաջարկներով գործողությունների պլան, այդ թվում՝ ազդեցությունները, ծախսերը և այդպիսի միջամտություններում ներդրումներից ստացած շահույթը:</p> <p>Աուդիտի ընթացքում հաստատությունը ներկայացնում է վերջին հինգ տարիների ընթացքում իրականացված Էներգիայի աուդիտի զեկուցագիրը:</p>
7.16	<p>Հանրային վայրերի և աշխատակազմի համար նախատեսված տարածքների լուսավորության առնվազն 75%-ն ունի շարժ որսացող սարք կամ նվազեցվում է մարդկանց բացակայության դեպքում: (G)</p>	<p>Էներգասպառման նվազեցման միջոցով Էկոլոգիական ոտնահետքը փոքրացնելու և հետևաբար ծախսերը կրճատելու համար հաստատությունը, անվտանգության նկատառումներով, հանրային վայրերում և աշխատակազմի համար նախատեսված տարածքներում ունի շարժ որսացող սարքեր կամ ժամաչափեր, որոնք անջատում են լույսերը մարդկանց բացակայության դեպքում:</p> <p>Այլընտրանքային լուծում է հանրային վայրերում լուսավորությունը թուլացնելը կամ մարդկանց բացակայության դեպքում լուսավորության նվազեցումը:</p> <p>Այս չափանիշին համապատասխանելու համար հանրային վայրերի և աշխատակազմի համար նախատեսված տարածքների լուսավորության առնվազն 75%-ը պետք է ունենա շարժ որսացող սարք կամ նվազեցվի մարդկանց բացակայության դեպքում:</p> <p>Աուդիտի ընթացքում հաստատությունը ներկայացնում է հանրային վայրերի և աշխատակազմի համար նախատեսված տարածքների լուսավորության առնվազն 75%-ի շարժ որսացող սարքերի կամ նվազեցման առկայությունն ապացուցող փաստաթղթեր, իսկ տեղում զննության ժամանակ այդ տարածքներում ստուգվում է սարքերի առկայությունը:</p>
7.17	<p>Հաստատությունն առաջարկում է Էլեկտրական փոխադրամիջոցների լիցքավորման հասանելիություն: (G)</p>	<p>Իր Էկոլոգիական ոտնահետքը նվազեցնելու համար հաստատությունն առաջարկում է Էլեկտրական փոխադրամիջոցների լիցքավորման հասանելիություն: Պետք է հաշվի առնել, որ լիցքավորիչները օգտագործելի լինեն մեքենաների տարբեր մակնիշների համար:</p> <p>Լիցքավորման կայանները կարող են լինել հաստատության ներսում կամ դրանից առավելագույնը 200 մետր հեռավորության վրա: Եթե լիցքավորման կայանները վերահսկվում են արտաքին ընկերության կողմից, կարևոր է, որ հաստատությունն այցելող հյուրերը կարողանան օգտվել դրանցից:</p>



		<p>Լիցքավորման կայանները կարող են օգտագործվել և՛ հյուրերի, և՛ աշխատակազմի կողմից (տե՛ս չափանիշ 13.8): Որպես «Green Key» ծրագրին միանալու պայման՝ հաստատությունը պետք է բոլոր նյութերում և հաղորդակցության մեջ ապահովի ճշգրիտ, պարզ և դյուրըմբռնելի տեղեկություն: Հաստատությունը չի խոստանում ավելին, քան կարող է կատարել:</p> <p>Առևտրի ընթացքում ստուգվում է էլեկտրական փոխադրամիջոցների լիցքավորման կայանների առկայությունը:</p>
7.18	<p>Խոհանոցի օդափարշներն ունեն օդափոխման մատակարարման/ հեռացման ինֆրակարմիր վերահսկիչներ: (G)</p>	<p>Էկոլոգիական ոտնահետքը կարելի է փոքրացնել՝ նվազեցնելով էներգասպառումը (այդպիսով նաև կրճատելով ծախսերը), եթե խոհանոցի օդափարշները չեն օգտագործվում աշխատանքային բոլոր ժամերին, այլ միայն անհրաժեշտության դեպքում: Հետևաբար, խոհանոցի օդափարշները պետք է ունենան օդափոխման ինֆրակարմիր վերահսկիչներ, որպեսզի դրանք ավտոմատ կերպով միանան տաք կաթսաներ կիրառելու և/կամ գոլորշու առկայության դեպքում:</p> <p>Առևտրի ընթացքում հաստատվում է խոհանոցի օդափարշների՝ օդափոխման մատակարարման/ հեռացման ինֆրակարմիր վերահսկիչներ ունենալը:</p>
7.19	<p>Հաստատությունը չի օգտագործում կամ օգտագործում է արտաքին ջեռուցման կամ օդորակման միայն Էկոլոգիապես մաքուր սարքավորումներ: (G)</p>	<p>Եթե հաստատությունն ունի արտաքին տարածքներ, օրինակ՝ ռեստորան/ սրճարան կամ ծխելու համար նախատեսված արտաքին տարածք, ապա հաստատությունը չի օգտագործում արտաքին ջեռուցման/ օդորակման սարքավորումներ կամ օգտագործում է միայն Էկոլոգիապես մաքուր տարբերակներ: Սա հաշվի է առնվում էներգախնայման միջոցով Էկոլոգիական ոտնահետքը նվազեցնելու, ինչպես նաև ծախսերը կրճատելու համար:</p> <p>Որպեսզի արտաքին ջեռուցման և օդորակման սարքավորումները լինեն Էկոլոգիապես մաքուր, դրանք՝ որպես էներգիայի աղբյուր, պետք է օգտագործեն էլեկտրականություն (գազի փոխարեն): Ինֆրակարմիր էլեկտրական տաքացուցիչները ավելի նախընտրելի են, քան ռեֆլեկտորային ջեռուցիչները, քանի որ ինֆրակարմիր տաքացուցիչները արձակում են ջերմային հստակ ճառագայթ, որը տաքացնում է մարդկանց՝ առանց շրջապատող օդը տաքացնելու: Խորհուրդ է տրվում, որ էլեկտրական սարքերն ունենան բարձր էներգախնայողության վարկանիշ (օրինակ՝ համապատասխանեն ԵՄ էներգաարդյունավետության պիտակի երկու ամենաէներգաարդյունավետ դասերին կամ EnergyStar վարկանիշին) : Ջեռուցման՝ փայտով աշխատող սարքավորումները նույնպես ընդունելի են:</p> <p>Խորհուրդ է տրվում, որ տաքացուցիչների/ հովացուցիչների տեղակայումն ընտրվի՝ հաշվի առնելով աթոռները, քամուց բողբոջված լինելը, արևի դիրքը, կառույցների հեռավորությունը, ամուր հատակը և այլն: Որպես այլընտրանք կամ ջեռուցման սարքավորումներին լրացում հաստատությունը կարող է առաջարկել ծածկոցներ: Խրախուսվում է նաև, որ հաստատությունը հաշվի առնի նաև ջեռուցման/ օդորակման սարքավորումների օգտագործման տևողությունը (օրինակ՝ ունենա ժամաչափեր կամ սարքերն ակտիվացնող սենսորներ):</p> <p>Առևտրի ընթացքում տեղում ստուգումը հավաստիանում է, որ հաստատությունը կա՛մ չի օգտագործում, կա՛մ</p>

7.20	<p>Եթե հաստատությունը կցված չէ էլեկտրական ցանցին, ապա այն էլեկտրաէներգիա է արտադրում Էներգախնայող գեներատորներով: (G)</p>	<p>օգտագործում է էլեկտրական արտաքին ջեռուցման/ օդորակման միայն էկոլոգիապես մաքուր սարքավորումներ:</p> <p>Էլեկտրական ցանցին չկցված, հետևաբար սեփական էլեկտրաէներգիան գեներացնելու կարիք ունեցող հաստատության էկոլոգիական ոտնահետքը նվազեցնելու համար հաստատության էլեկտրաէներգիայի գեներատորները պետք է լինեն Էներգախնայող:</p> <p>Էներգախնայող գեներատորն ունի Էներգախնայման Էկո պիտակ (օրինակ՝ համապատասխանում է ԵՄ Էներգաարդյունավետության պիտակի երկու ամենաէներգաարդյունավետ դասերին կամ EnergyStar վարկանիշին և այլն) և/կամ գործում է վերականգնվող էներգիայով կամ հիբրիդ համակարգով:</p> <p>Առողիտի ընթացքում հաստատությունը ներկայացնում է փաստաթղթեր՝ ապացուցելով, որ իր գեներատորներն ունեն Էկո պիտակ, Էներգախնայող են և/կամ գործում են վերականգնվող էներգիայով կամ հիբրիդ համակարգով:</p>
------	---	--

**8. ՄՆՈՒՆԴ և ԸՄՊԵԼԻՔ**

8.1	<p>Հաստատությունը պետք է ձեռք բերի և գրանցի օրգանական, Էկոպիտակավորված, արդար առևտրի (fair trade) պիտակ կրող և/կամ տեղական արտադրության առնվազն հինգ տեսակի սննդային/ ըմպելիքի արտադրանք: (I)</p>	<p>Հաստատության էկոլոգիապես մաքուր և կայուն գործելանճը դրսևորվում է սննդի և ըմպելիքի այն ապրանքատեսակներով, որոնք ձեռք են բերվում և առաջարկվում իր հյուրերին:</p> <p>Հետևաբար, հաստատությունը ձեռք է բերում սննդի և ըմպելիքի այնպիսի արտադրանքներ, որոնք օրգանական են, Էկոպիտակավորված, կրում են արդար առևտրի պիտակ և/կամ տեղական արտադրության են: Ցանկալի է, որ այս արտադրանքներն օգտագործվեն զգալի ծավալով կամ ամենօրյա կտրվածքով: Օրգանական, Էկոպիտակավորված կամ արդար առևտրի պիտակ կրող արտադրանքները հավաստագրված են միջազգային/ ազգային իշխանությունների կողմից:</p> <p>Երբ հնարավոր է, ապրանքներն արտադրվում են տեղում՝ այսպիսով նվազեցնելով տեղափոխման համար կիրառվող էկոլոգիական ոտնահետքը, ինչպես նաև խթանելով տեղական տնտեսությունը: Հաստատությունից 100 կմ-ից քիչ հեռավորության վրա արտադրվող ապրանքները սովորաբար համարվում են տեղական արտադրանք: Հաստատությունից 100 կմ-ի վրա աճեցվող կամ վայրի բնությունից ստացված/հավաքված ապրանքները նույնպես համապատասխանում են այս չափանիշին:</p> <p>Հաստատությունը համոզվում է, որ իր սննդի և ըմպելիքների հնարավորինս մեծ մասը օրգանական է, Էկոպիտակավորված, կրոի արդար առևտրի պիտակ և/կամ լինի տեղական արտադրության: Արտադրանքի ընտրությունը կախված է հասանելիությունից և գնից: Այս չափանիշին համապատասխանելու համար պահանջվում է առնվազն հինգ ապրանքատեսակ, սակայն խիստ խրախուսելի է ներառել ավելին: Դրանից գատ, օրգանական,</p>
-----	---	---

		<p>Եկոպիտակավորված, արդար առևտրի պիտակ կրող և/կամ տեղական արտադրության սննդի և ըմպելիքի արտադրանքների քանակը սովորաբար պետք է ամեն տարի ավելանա:</p> <p>Թեև այս չափանիշը հիմնականում վերաբերում է հյուրերին առաջարկվող սննդին/ ըմպելիքին, խրախուսվում է, որ այն կիրառվի նաև աշխատակազմի համար նախատեսված ճաշարաններում:</p> <p>Առևտրի ընթացքում հաստատությունը ներկայացնում է օրգանական, Եկոպիտակավորված, արդար առևտրի պիտակ կրող և/կամ տեղական արտադրության սննդի/ ըմպելիքի առնվազն հինգ տեսակի ցանկ: Առևտրի ընթացքում ստուգվում են սննդի/ ըմպելիքի արտադրանքի համապատասխանությունն այս չափանիշին:</p>
8.2	<p>Հաստատությունը չի գնում վտանգված կամ պահպանվող (բուսական/կենդանական/ այլ) տեսակներից ստացված ապրանքներ (I)</p>	<p>Որպես գնումների քաղաքականության պայման՝ հաստատությունը չի գնում վտանգված կամ պահպանվող տեսակներից ստացված մսամթերք, ձկնեղեն կամ ծովամթերք:</p> <p>Տեսակների կարգավիճակը ստուգելու համար խորհուրդ է տրվում օգտագործել <a href="#">Կարմիր գրքի՝ վտանգված տեսակների ցանկը</a> կամ Վայրի բուսական և կենդանական աշխարհների վտանգված տեսակների միջազգային առևտրի մասին կոնվենցիայի հավելվածները: Խոցելի, վտանգված կամ ոչնչացման եզրին գտնվող տեսակները չպետք է ձեռք բերվեն: Ձկան և ծովամթերքի կարգավիճակը ստուգելու համար խորհուրդ է տրվում օգտագործել ձկան և ծովամթերքի (տեղական) ուղեցույցը և խուսափել «կարմիր» վարկանշում ունեցող տեսակներից:</p> <p>Բացի դրանից, ճանաչված Եկո պիտակները, ինչպիսիք են՝ «Marine Stewardship Council»-ը (MSC) որսված ձկնեղենի և ծովամթերքի համար, « Aquaculture Stewardship Council»-ը (ASC) բուծված ձկնեղենի և ծովամթերքի համար, «Հավաստագրված պատասխանատու բուծում և թափանցիկություն»-ի պիտակը կամ «Best Aquaculture Practices»-ը (BAP) հավաստագրված ջրային կուլտուրաների համար կարող են օգնել Ձեզ ճանաչել այն արտադրանքները, որոնք չեն ստացվել վտանգված տեսակներից և չեն պարունակում այդպիսին:</p> <p>Եթե հաստատությունն առաջարկում է որսամիս, այն պետք է ստացված լինի կայուն աղբյուրներից, ինչպիսիք են՝ ազգային օրենսդրությանը հետևող պատշաճորեն ղեկավարվող կայուն որսը և առևտրային նպատակներով վայրի անասնաբուծարանները:</p> <p>Առևտրի ընթացքում հաստատությունը ներկայացնում է իր գրավոր քաղաքականությունը՝ հաստատմամբ, որ չի գնում վտանգված տեսակներից ստացվող արտադրանք և ինչպես է համոզվում դրանում, օրինակ՝ մատակարարի կողմից հաստատմամբ կամ հավաստագրով (եթե կիրառելի է): Տեղում ստուգումը հաստատում է համապատասխանությունը:</p>
8.3	<p>Ռեստորանում առաջարկվում է այլընտրանքային</p>	<p>Քանի որ բուսական/ վեգան մուսկոն ունի Եկոլոգիական ավելի փոքր ոտնահետք, քան մսային մուսկոնը, հաստատությունը ռեստորանի ճաշացանկում պետք է ունենա մեկ կամ ավելի բուսական և/կամ վեգան այլընտրանք: Այս</p>

	<p>բուսական/վեգան ճաշացանկ: (I)</p>	<p>չափանիշը նաև ընդառաջում է հյուրերի՝ մսային կերակրատեսակի փոխարեն բուսական այլընտրանքների աճող պահանջին:</p> <p>Բուսական/ վեգան տարբերակները պարզորոշ կերպով նշված են ճաշացանկում: Ցուցումներն արված են պատկերանշանների կամ հաղորդակցման այլ ոլորտներում միջոցներով:</p> <p>Մեկ ֆիքսված ճաշացանկ առաջարկող հաստատություններն ազատվում են այս չափանիշին համապատասխանելուց:</p> <p>Թեև այս չափանիշը հիմնականում վերաբերում է հյուրերի համար նախատեսված սննդային արտադրանքին, հաստատությանը խրախուսվում է նաև իրականացնել այն աշխատակազմի համար նախատեսված ճաշարանում:</p> <p>Որպես «Green Key» ծրագրին միանալու պայման՝ հաստատությունը պետք է բոլոր նյութերում և հաղորդակցության մեջ ապահովի ճշգրիտ, պարզ և ոլորտներում տեղեկություն:</p> <p>Առողջի ընթացքում տեղում ստուգումը հաստատում է ճաշացանկի և/կամ ճաշարանի ցուցանակների բուսական/վեգան տարբերակների առկայությունը:</p>
<p>8.4</p>	<p>Հաստատությունն իրականացնում է նախաձեռնություններ սննդային թափոնների ծավալը նվազեցնելու համար: (I)</p>	<p>Սննդային թափոնների քանակը նվազեցնելով՝ Էկոլոգիական ոտնահետքը փոքրացնելու, ոչ անհրաժեշտ սննդի ձեռքբերման քանակը նվազեցնելու և ծախսերը կրճատելու համար հաստատությունը մշակում է սննդային թափոնները նվազեցնելու պլան:</p> <p>Պլանը պետք է հաշվի առնի մի շարք խնդիրներ.</p> <ul style="list-style-type: none"> <li>• արդյո՞ք սննդի ծավալն ու տեսակները կարող են կարգավորվել,</li> <li>• արդյո՞ք ափսեները կարող են ավելի փոքր չափսի լինել,</li> <li>• հաստատությունը կարո՞ղ է ավելի ցածր գնով առաջարկել կես չափաբաժիններ,</li> <li>• սնունդը կարո՞ղ է պահեստավորվել և մատուցվել այնպես, որ ավելի երկար դիմանա,</li> <li>• բոլոր բաղադրիչներն օգտագործվո՞ւմ են հնարավոր բոլոր տեղերում,</li> <li>• մատուցումը կարո՞ղ է (շարունակաբար լցվող) բուֆե ձևաչափից փոխվել չափաբաժիններով մատուցման,</li> <li>• ճաշարանի դեպքում հնարավո՞ր է հյուրերին խորհուրդ տալ ափսեն հարկ եղածից շատ չլցնել,</li> <li>• ինչպե՞ս կարելի է վերօգտագործել կամ նվիրաբերել չօգտագործված սնունդը:</li> </ul> <p>Խիստ խրախուսվում է, որ հյուրերին իրազեկ և ներգրավված լինեն սննդային թափոնների նվազեցման հավակնությանը, օրինակ՝ տեղեկատվական ցուցանակների կամ, հնարավորության դեպքում, ավելացված սնունդն իրենց հետ տանելու առաջարկի միջոցով:</p> <p>Այս չափանիշին համապատասխանելու համար պլանը պետք է ուղեկցվի համապատասխան գործողություններով:</p>

		<p>Աուդիտի ընթացքում հաստատությունը ներկայացնում է փաստաթղթեր՝ ցույց տալով սննդային թափոնների նվազեցման իր պլանը և ձեռնարկված կամ ձեռնարկվելիք գործողությունները, իսկ տեղում ստուգումը, հնարավորության դեպքում, հաստատում է գործողությունները:</p>
8.5	<p>Այնտեղ, որտեղ ջրի որակը համարվում է բավարար չափորոշիչ, ծորակի ջուրը առաջարկվում և/կամ խթանվում է հյուրերի օգտագործման համար: (I)</p>	<p>Շշայցված ջրի արտադրման (այդ թվում՝ ջրի տեղափոխման, շշի համար պլաստիկի, այլումինի կամ ապակու օգտագործման և շշայցված ջուրը հաճախորդներին հասցնելու) գործընթացից առաջացող էկոլոգիական ոտնահետքը նվազեցնելու համար հաստատությունը հյուրերին առաջարկում է ծորակի ջուր և խրախուսում խմել այն:</p> <p>Ծորակի ջրի առաջարկը կախված է տվյալ տարածքում դրա որակից և հաստատությունում ծորակի ջրի մատակարարումից: Եթե տեղական ծորակի ջուրը խմելու ենթակա չէ համի կամ հոտի պատճառով, կամ եթե հաստատության ծորակի ջրի որակը համապատասխան չէ ծորակի ջրի ազգային ստանդարտներին (օրինակ՝ պեստիցիդների քանակի, ծանր մետաղների և այլ պատճառներով), ապա այս չափանիշը կիրառելի չէ:</p> <p>Եթե ազգային իշխանությունները գտնում են, որ հիգիենային առնչվող կանոնակարգը հակասում է այս չափանիշին, հաստատությունը պետք է հետևի ազգային պաշտոնական կանոնակարգին:</p> <p>Եթե ծորակի ջրի որակը թույլ է տալիս այն առաջարկել հյուրերին, այն կարող է մատուցվել հենց այդպես կամ նախապես զովել: Ցանկալի է, որ ծորակի ջուրը մատուցվի սովորական (չգազավորված), սակայն կարելի է առաջարկել նաև գազավորված տարբերակով՝ ածխաթթու գազով հագեցնելուց հետո: Դրանից զատ, խրախուսվում է, որ հաստատությունը տեղեկացնի հյուրերին ծորակի ջուր խմելու տարբերակի մասին:</p> <p>Հյուրերին ծորակի ջուր առաջարկվում է ռեստորաններում և հանդիպումների սենյակներում, սակայն կարելի է առաջարկել նաև ընդունարանում, հյուրերի սենյակներում և այլուր, այդ թվում՝ աշխատակիցներին՝ նրանց համար նախատեսված տարածքներում:</p> <p>Աուդիտի ընթացքում ստուգումը հավաստիանում է, որ ծորակի ջուրն առաջարկվում և խրախուսվում է:</p>
8.6	<p>Հաստատությունը հաշվառում է սննդային թափոնների քանակը: (G)</p>	<p>Սննդային թափոնների ծավալի նվազեցման միջոցով էկոլոգիական ոտնահետքը փոքրացնելու և ծախսերը կրճատելու համար հաստատությունը հաշվառում է սննդային թափոնների քանակը:</p> <p>Քանակը կարող է բաժանվել մի քանի տարբեր դասակարգումների, ինչպիսիք են՝ տարբեր առաջարկները (ճաշարան, ճաշացանկ և այլն), տարբեր ճաշատեսակները (նախաճաշ, լանչ, ճաշ և այլն), հացկերույթի տարբեր հատվածները (նախուտեստ, գլխավոր ուտեստ, աղանդեր և այլն), սննդի տարբեր տեսակները (հաց, աղցան և այլն), օգտագործված սնունդը կամ դրա մնացորդները և այլն: Տարբեր դասակարգումների բաժանումը կախված է հաստատությունում առաջարկվող ճաշատեսակներից:</p>

		<p>Առևտրի ընթացքում հաստատությունը ներկայացնում է փաստաթղթեր՝ ցույց տալով սննդային թափոնների իր հաշվառումը տարբեր դասակարգումներում:</p>
8.7	<p>Հաստատությունը ճաշացանկում կամ ճաշարանում նշում է այն արտադրանքները, որոնք օրգանական են, Էկոպիտակավորված, կրում են արդար առևտրի պիտակ և/կամ տեղական արտադրության են: (G)</p>	<p>Հյուրերի իրազեկվածությունը օրգանական, Էկոպիտակավորված, արդար առևտրի պիտակ կրող և/կամ տեղական արտադրության սննդի մասին բարձրացնելու համար հաստատությունը պարզորոշ կերպով նշում է՝ որ մտնոն է այդպիսին: Դա կարող է արվել ճաշացանկում կամ ճաշարանի ցուցանակներին:</p> <p>Նշումն արվում է պատկերանշանների կամ հաղորդակցման այլ ոլորտներում միջոցներով: Խորհուրդ է տրվում մշտապես նշել ձկնային/ մսային մթերքների ծագումը:</p> <p>Թեև այս չափանիշը հիմնականում վերաբերում է հյուրերի համար նախատեսված սննդին/ըմպելիքին, խրախուսվում է նաև այն իրականացնել աշխատակազմի համար նախատեսված ճաշարանում:</p> <p>Կարևոր է, որ նշումը միշտ համապատասխան լինի հավաստագրող մարմնի կամ ազգային օրենսդրության հետ: Որպես «Green Key» ծրագրին միանալու պայման՝ հաստատությունը պետք է բոլոր նյութերում և հաղորդակցության մեջ ապահովի սննդի/ ըմպելիքի արտադրանքների վերաբերյալ ճշգրիտ, պարզ և ոլորտներում տեղեկություն:</p> <p>Առևտրի ընթացքում ստուգումը հաստատում է օրգանական, Էկոպիտակավորված, արդար առևտրի պիտակ կրող և/կամ տեղական արտադրության սննդի և ըմպելիքի նշման առկայությունը ճաշացանկում և/կամ ճաշարանում:</p>
8.8	<p>Հաստատության հիմնական ուտեստների առնվազն 25%-ը բուսական է: (G)</p>	<p>Հաստատության Էկոլոգիական ունահետքը նվազեցնելու համար առաջարկվող հիմնական ուտեստների առնվազն 25%-ը բուսական է: Խորհուրդ է տրվում, որ նույնը լինի նաև նախուտեստների դեպքում:</p> <p>Թեև այս չափանիշը հիմնականում վերաբերում է հյուրերի համար պատրաստվող ճաշատեսակներին, խրախուսվում է նաև այն իրականացնել աշխատակազմի համար նախատեսված ճաշարանում:</p> <p>Որպես «Green Key» ծրագրին միանալու պայման՝ հաստատությունը պետք է բոլոր նյութերում և հաղորդակցության մեջ ապահովի առաջարկվող բուսական ճաշատեսակների վերաբերյալ ճշգրիտ, պարզ և ոլորտներում տեղեկություն:</p> <p>Առևտրի ընթացքում ստուգումը հաստատում է հիմնական ուտեստների առնվազն 25%-ի բուսական լինելը:</p>
8.9	<p>Հաստատությունն առաջարկում է վեգան հիմնական ուտեստ: (G)</p>	<p>Քանի որ վեգան սնունդն ունի Էկոլոգիական ավելի փոքր ունահետք, քան մսային և կաթնամթերային սնունդը, հաստատությունը պետք է ունենա մեկ կամ ավելի վեգան տարբերակ: Այս չափանիշը նաև ընդառաջում է հյուրերի՝ մսային և կաթնամթերային ճաշացանկի փոխարեն այլընտրանքների աճող պահանջին: Այս չափանիշին համապատասխանելու համար առնվազն մեկ հիմնական ուտեստ պետք է լինի վեգան, սակայն խրախուսվում է, որ այդպես լինի նաև նախուտեստների, բուժե մատուցմամբ և/կամ նախաճաշերի դեպքում:</p>

		<p>Վեգան տարբերակները պարզորոշ կերպով նշված են ճաշացանկում կամ ճաշարանի ցուցանակներում: Ցուցումներն արված են պատկերանշանների կամ հաղորդակցման այլ ոլորտներում միջոցներով:</p> <p>Թեև այս չափանիշը հիմնականում վերաբերում է հյուրերի համար նախատեսված սննդային արտադրանքին, խրախուսվում է նաև իրականացնել այն աշխատակազմի համար նախատեսված ճաշարանում:</p> <p>Որպես «Green Key» ծրագրին միանալու պայման՝ հաստատությունը պետք է բոլոր նյութերում և հաղորդակցության մեջ ապահովի ճշգրիտ, պարզ և ոլորտներում տեղեկություն:</p> <p>Առևտրի ընթացքում տեղում ստուգումը հաստատում է ճաշացանկի և/կամ ճաշարանի ցուցանակների վեգան տարբերակների առկայությունը:</p>
8.10	<p>Հաստատությունում օգտագործվող սննդի/ըմպելիքի արտադրանքների առնվազն 50%-ը օրգանական է, Էկոպիտակավորված, կրում է արդար առևտրի պիտակ և/կամ տեղական արտադրության է: (G)</p>	<p>Հաստատության Էկոլոգիապես մաքուր և կայուն գործելաճը դրսևորվում է սննդի և ըմպելիքի այն ապրանքատեսակներով, որոնք ձեռք են բերվում և առաջարկվում հյուրերին:</p> <p>Հետևաբար, հաստատությունը հաշվառում է ձեռք բերված սննդի և ըմպելիքի այն արտադրանքները, որոնք օրգանական են, Էկոպիտակավորված, կրում են արդար առևտրի պիտակ և/կամ տեղական արտադրության են: Օրգանական, Էկոպիտակավորված կամ արդար առևտրի պիտակ կրող արտադրանքները ճանաչված են միջազգային/ ազգային իշխանությունների կողմից:</p> <p>Հնարավորության դեպքում ապրանքները արտադրվում են տեղում՝ տեղափոխման համար նախատեսված Էկոլոգիական ոտնահետքը փոքրացնելու և տեղական տնտեսությունը խթանելու համար: Հաստատությունից 100 կմ-ից քիչ հեռավորության վրա արտադրվող ապրանքները սովորաբար համարվում են տեղական արտադրանք: Հաստատությունից 100 կմ-ի վրա աճեցվող կամ վայրի բնությունից ստացված/ հավաքված ապրանքները նույնպես համապատասխանում են այս չափանիշին:</p> <p>Այս չափանիշին համապատասխանելու համար հաստատությունը պատրաստում է սննդի և ըմպելիքի իր բոլոր ապրանքների ցանկը, բոլոր այն ապրանքները, որոնք համապատասխանում են չափանիշներին, կրում են օրգանական, Էկոպիտակավորված, արդար առևտրի պիտակը և/կամ տեղական արտադրության լինելու մասին նշումը, և ապացուցում է, որ սննդային/ըմպելիքի արտադրանքների առնվազն 50%-ը համապատասխանում է այս չափանիշին: Որպես այլընտրանք՝ հաստատությունը կարող է արտաքին ընկերությունից ներկայացնել չափանիշին համապատասխանությունն ապացուցող վավերացում:</p> <p>Առևտրի ընթացքում հաստատությունը ներկայացնում է սննդի և ըմպելիքների իր բոլոր ապրանքների ցանկը՝ համապատասխան յուրաքանչյուր արտադրանք օրգանական, Էկոպիտակավորված, արդար առևտրի պիտակ կրող</p>

		և/կամ տեղական արտադրության լինելու մասին նշումով, և ապացուցում է, որ սննդի/ըմպելիքի արտադրանքների առնվազն 50%-ը համապատասխանում է այս չափանիշին: Որպես այլընտրանք՝ հաստատությունը կարող է արտաքին ընկերությունից ներկայացնել չափանիշին համապատասխանությունն ապացուցող վավերացում:
8.11	Հաստատությունը ձեռք է բերում միայն կայունության պիտակով հավաստագրված մսամթերք և ծովամթերք: (G)	<p>Հաստատության՝ մսամթերքի և ծովամթերքի ձեռք բերումից առաջացած Էկոլոգիական ոտնահետքը նվազեցնելու և համաշխարհային ու տեղական կենսաբազմազանությունը պաշտպանելու համար հաստատությունը ձեռք է բերում և օգտագործում միայն կայունության պիտակով հավաստագրված արտադրանք:</p> <p>Սա ներառում է նաև օրգանական արտադրանքը, ինչպես նաև կայուն արտադրությունից կամ բերքահավաքից ստացված արտադրանքը՝ հաշվի առնելով նաև կենդանիների բարեկեցությունը: Համապատասխան պիտակներից են, օրինակ, ԵՄ Էկո պիտակը կամ ազգային օրգանական այլ պիտակները, Էկո պիտակները, ինչպիսիք են «Marine Stewardship Council»-ը որսված ձկներենի և ծովամթերքի համար, «Aquaculture Stewardship Council»-ը բուծված ձկներենի և ծովամթերքի համար, «Certified Responsible Farming &amp; Transparency» պիտակը կամ «Best Aquaculture Practices»-ը հավաստագրված ջրային կուլտուրաների համար:</p> <p>Այս չափանիշին համապատասխանելու համար հաստատությունը պետք է ապացուցի, որ ձեռք բերված մսամթերքի և ծովամթերքի 100%-ը համապատասխանում է այս չափանիշին:</p> <p>Առողջիտի ընթացքում հաստատությունը ներկայացնում է փաստաթղթեր՝ ապացուցելով, որ ձեռք բերված մսամթերքը և ծովամթերքը համապատասխանում են այս պահանջին, իսկ տեղում ստուգումը կհաստատի այն:</p>

## 9. ՆԵՐՔԻՆ ՄԻՋՎՎԱՅՐ

9.1	Ռեստորանը և հանրային բոլոր վայրերը պետք է լինեն ծխազերծ կամ ունենան ծխելու համար նախատեսված տարածքներ: (I)	<p>Առողջությանը սպառնացող վտանգը և ծխի պատճառած անհարմարությունը նվազեցնելու համար հաստատության ռեստորանը և հանրային բոլոր վայրերը ծխազերծ են:</p> <p>Այն երկրներում, որտեղ սա կիրառելի չէ, կան ծխելու համար նախատեսված հատուկ տարածքներ, որոնք կազմում են ռեստորանի և հանրային վայրի ամբողջ տարածքի կեսից քիչը: Ծխազերծ հատվածը հստակ կերպով ֆիզիկապես առանձնացված է ծխելու համար նախատեսված տարածքից, որպեսզի ծխազերծ տարածքում նստող անձանց չանհանգստացնի ծխողների ծուխը: Ծխազերծ և ծխելու համար նախատեսված տարածքները պետք է հստակորեն և ոլորըմբռնելի ձևով տարանջատված լինեն՝ ներառյալ ցուցանակով:</p> <p>Շատ երկրներ ունեն ռեստորաններում և հանրային վայրերում ծխելը կարգավորող օրենսդրություն: Եթե կա այդպիսին, հաստատությունը պետք է ցանկացած պարագայում համապատասխանի այդ պահանջներին:</p>
-----	--	--



		<p>Առևտրի ընթացքում ստուգումը հաստատում է, որ ռեստորանում և հանրային բոլոր վայրերում առկա են ծխազերծ ու ծխելու համար նախատեսված տարածքների ֆիզիկական բաժանում, ինչպես նաև դրա մասին տեղեկացնող ցուցանակներ:</p>
9.2	<p>Սենյակների նվազագույնը 75%-ը պետք է լինի ծխազերծ: (I)</p>	<p>Առողջությանը սպառնացող վտանգը և ծխի պատճառած անհարմարությունը նվազեցնելու համար ցանկալի է, որ հյուրերի և հանդիպումների բոլոր սենյակները լինեն ծխազերծ:</p> <p>Այն երկրներում, որտեղ սա կիրառելի չէ, սենյակների նվազագույնը 75%-ը ծխազերծ է: Հաստատության չծխող հյուրերի համար նախատեսված հատվածը հստակորեն բաժանված է այն սենյակներից, որտեղ ծխելը թույլատրելի է: Այդպիսի սենյակները կարող են տեղակայվել, օրինակ, հաստատության առանձին հարկերում կամ թևերում: Ծխող և չծխող հյուրերի համար նախատեսված սենյակները և հանդիպումների տարածքները հստակորեն և դյուրըմբռնելի ձևով նշված են:</p> <p>Շատ երկրներ ունեն հյուրերի և հանդիպումների սենյակներում ծխելը կարգավորող օրենսդրություն: Եթե կա այդպիսին, հաստատությունը պետք է ցանկացած պարագայում համապատասխանի այդ պահանջներին:</p> <p>Առևտրի ընթացքում հաստատությունը ներկայացնում է փաստաթղթեր (օրինակ՝ ընդհանուր նկարագիր)՝ ապացուցելով, որ հյուրերի և հանդիպումների սենյակների առնվազն 75%-ը ծխազերծ է, և հաստատում է, որ համապատասխանում է ծխելու վերաբերյալ ազգային/ տեղական կանոնակարգին: Տեղում ստուգումը հաստատում է, որ ծխող և չծխող հյուրերի համար նախատեսված սենյակները և հանդիպումների տարածքները հստակորեն բաժանված են, և կան հաստատության ծխազերծ ու ծխելու համար նախատեսված տարածքները նշող ցուցանակներ:</p>
9.3	<p>Հաստատությունն ունի աշխատանքային ժամերին աշխատակազմի ծխելու վերաբերյալ քաղաքականություն: (I)</p>	<p>Առողջությանը սպառնացող վտանգը և ծխի պատճառած անհարմարությունը նվազեցնելու համար ցանկալի է, որ հանրային և աշխատակազմի համար նախատեսված տարածքները լինեն ծխազերծ:</p> <p>Եթե աշխատակազմի ծխելը թույլատրելի է, հաստատությունն ունի աշխատանքային ժամերին աշխատակազմի ծխելու վերաբերյալ քաղաքականություն: Այն ներառում է աշխատակազմի ծխելու ժամի և վայրի վերաբերյալ կանոնակարգ: Կարևոր է, որ քաղաքականությունն ապահովի, որ ծուխը անհարմարություն չպատճառի չծխող աշխատակիցներին և հյուրերին:</p> <p>Շատ երկրներ ունեն հյուրերի և հանդիպումների սենյակներում ծխելը կարգավորող օրենսդրություն: Եթե կա այդպիսին, հաստատությունը պետք է ցանկացած պարագայում համապատասխանի այդ պահանջներին:</p> <p>Առևտրի ընթացքում հաստատությունը ներկայացնում է աշխատակազմի համար նախատեսված ծխելու վերաբերյալ</p>

		<p>իր գրավոր քաղաքականությունը, այդ թվում՝ աշխատանքային ժամերին ծխելու ժամի և վայրի վերաբերյալ տեղեկություն, և թե ինչպես է հաստատությունը համոզվում, որ այն չի պարունակում չծխող աշխատակիցների և հյուրերի առողջությանը սպառնացող վտանգ:</p>
9.4	<p>Հաստատության ներսում օդի որակը կանոնավոր վերահսկվում է: (G)</p>	<p>Ներքին միջավայրի շարունակական բարելավման և աշխատակազմի ու հյուրերի բարեկեցության համար հաստատության ներսում օդի որակը կանոնավոր վերահսկվում է:</p> <p>Օդի որակը կարելի է չափել ժամում օդափոխանակման քանակով, օդի քերմաստիճանով և խոնավությամբ և/կամ օդում ռադոնի, բորբոսասնկերի, ազոտի օքսիդների (NO<sub>x</sub>), ածխաթթու գազի (CO<sub>2</sub>) և ցնդող օրգանական միացությունների (VOCs) քանակով:</p> <p>Գրանցված արժեքները չպետք է գերազանցեն միջազգային/ ազգային ստանդարտները: Եթե արժեքները գերազանցում են սահմանային պահանջները, անհրաժեշտ է ձեռնարկել համապատասխան գործողություններ: Դրանք կարող են ներառել պատուհանները կանոնավոր բացելով սենյակներն օդափոխելը, օդորակման կարգավորումները փոփոխելը, օդամաքիչներ կամ սանիտարական սարքավորումներ տեղադրելը:</p> <p>Այս չափանիշին համապատասխանելու համար հաստատության առնվազն երկու մասերում պետք է տեղադրվի կանոնավոր վերահսկման համակարգ (տարեկան մեկ անգամ նվազագույն վերահսկում):</p> <p>Աուդիտի ընթացքում հաստատությունը ներկայացնում է փաստաթղթեր՝ ցույց տալով ներքին միջավայրի օդի որակի մշտադիտարկման արդյունքները և հավանական ձեռնարկված ցանկացած գործողություն:</p>
9.5	<p>Վերջին 12 ամիսների ընթացքում սկսած և/կամ ավարտած վերանորոգումների և շինարարական աշխատանքների համար օգտագործվել են Էկոլոգիապես մաքուր նյութեր: (G)</p>	<p>Քիչ վնասակար արտադրանք օգտագործելով՝ ներքին միջավայրի շարունակական բարելավման և Էկոլոգիական ոտնահետքը նվազեցնելու համար վերջին 12 ամիսների ընթացքում արված վերանորոգումների և նոր կառույցների շինարարական աշխատանքների համար հաստատությունն օգտագործում է Էկոլոգիապես մաքուր նյութեր:</p> <p>Էկոլոգիապես մաքուր արտադրանքների թվում են շրջակա միջավայրի և մարդու առողջության համար վնասակար նյութեր չպարունակող ներկերը և այլ արտադրանքները: Հաստատությունը կարող է օգտագործել, օրինակ, միջազգային/ ազգային ճանաչված Էկո պիտակ կրող կամ բնապահպանական կառավարման համակարգ որդեգրած արտաքին ընկերությունների արտադրանք: Պետք է խուսափել ցնդող օրգանական միացությունների և ծանր մետաղներ պարունակող բոլոր նյութերից, այդ թվում՝ ներկերից, շինանյութերից և այլն:</p> <p>Հատկապես խրախուսելի է օգտագործել Էկոլոգիապես մաքուր օգտագործված/ վերամշակված բնական արտադրանքներ/ նյութեր: Եթե վերանորոգումների կամ շինարարական աշխատանքների համար օգտագործվում է</p>

		<p>փայտ կամ այլ բուսական նյութ, պետք է համոզվել, որ դրանք ստացվում են կայուն հավաքից (օրինակ՝ Անտառների ինստիտուտի կողմից կազմակերպվող արտադրանքներ) և, ցանկալի է, որ լինեն տեղական արտադրության:</p> <p>Աուդիտի ընթացքում հաստատությունը ներկայացնում է փաստաթղթեր՝ ապացուցելով վերջին 12 ամիսների ընթացքում արված վերանորոգումների կամ շինարարական աշխատանքների համար էկոլոգիապես մաքուր արտադրանքների օգտագործումը:</p>
9.6	<p>Վերանորոգումներում և շինարարական աշխատանքներում հաշվի են առնվում տեղական մշակույթի իրական տարրերը: (G)</p>	<p>Իր գործունեության, վերանորոգումների կամ շինարարական աշխատանքների համար հաստատությունն օգտագործում է տեղին համապատասխան կայուն մեթոդներ և նյութեր:</p> <p>Հաստատությունն արժևորում և ներառում է տեղական մշակույթի ավանդական և ժամանակակից տարրեր:</p> <p>Պետք է միշտ հետևել գործունեության, վերանորոգումների կամ նոր կառույցների շինարարական աշխատանքների վերաբերյալ օրենսդրությանը: Խրախուսվում է կայուն վերանորոգման և շինարարության համար ներառել և օգտագործել նյութերին, տեխնոլոգիաներին և գործիքներին առնչվող տեղական կրթություն, գիտելիք և փորձ: Տեղի համայնքների մտավոր սեփականության իրավունքները պետք է մշտապես հարգվեն:</p> <p>Աուդիտի ընթացքում հաստատությունը ցուցադրում է, որ կարևորում է կայուն գործելակերպն ու նյութերը, տեղական մշակույթի վավերական տարրերը, ինչպես նաև ապահովում է, որ իր գործունեության և նոր շենքերի կառուցման կամ վերանորոգման արդյունքում չի խախտվել տեղական համայնքների մտավոր սեփականության իրավունքը:</p>
<b>10. ԿԱԼԱՉ ՏԱՐԱԾՔՆԵՐ</b>		
10.1	<p>Քիմիական պեստիցիդներ և պարարտանյութեր պետք է օգտագործվեն միայն այն դեպքում, երբ չկան օրգանական կամ բնական այլընտրանքներ: (I)</p>	<p>Եթե հաստատությունն ունի կանաչ տարածքներ, այն չի օգտագործում քիմիական պեստիցիդներ (այդ թվում՝ հերբիցիդներ (մոլախոտասպաններ)) և պարարտանյութեր՝ քիմիական նյութերի օգտագործումը, ցամաքային/ ջրային աղտոտման և առողջապահական ռիսկերը նվազեցնելու համար:</p> <p>Եթե պեստիցիդները և պարարտանյութերն անհրաժեշտ են (ցանկալի է՝ ստուգել հողի տարեկան քննման միջոցով), օգտագործվում են օրգանական կամ բնական համարժեքներ: Սա կարող է լինել բնական/ օրգանական հողախառնուրդների տեսքով: Քիմիական պեստիցիդների հնարավոր այլընտրանքներ են գազային կրակայրիչները կամ մոլախոտերի մեխանիկական վերահսկողությունը: Հաստատությունը կարող է քիմիական պեստիցիդներ և պարարտանյութեր օգտագործել միայն այն դեպքում, եթե օրգանական կամ բնական փոխարինիչներ հասանելի չեն: Այդ դեպքում ձեռք են բերվում միայն օգտագործման պատրաստ արտադրանքներ՝ ցանկալի է աստիճանական բացթողմամբ, և սովորաբար օգտագործվում են տարեկան միայն մեկ անգամ հնարավորին նվազագույն</p>

		<p>բանակույթամբ:</p> <p>Պեստիցիդների հետ աշխատանքն արվում է միայն աշխատակազմի կամ այդ նպատակով վերապատրաստված/ լիցենզավորված արտաքին ընկերությունների կողմից: Քիմիական նյութերը պահեստավորվում են պատշաճ կերպով (տե՛ս չափանիշ 6.6):</p> <p>Այս չափանիշը գործում է նաև, եթե հաստատության կանաչ տարածքների ղեկավարումը կատարվում է արտաքին ընկերության կողմից:</p> <p>Առողջիտի ընթացքում հաստատությունը ներկայացնում է պեստիցիդների և պարարտանյութերի օգտագործման վերաբերյալ իր գրավոր քաղաքականությունը՝ ապացուցելով, որ չի օգտագործում պեստիցիդներ և պարարտանյութեր, եթե կան օրգանական կամ բնական համարժեքներ: Եթե կանաչ տարածքների հետ կապված աշխատանքները հանձնառված են արտաքին ընկերության կողմից, ապա տվյալ ընկերությունն է ներկայացնում հաստատության կանաչ տարածքներում պեստիցիդների և պարարտանյութերի օգտագործման վերաբերյալ իր գրավոր քաղաքականությունը: Կարող է տեղում կատարվել ստուգում՝ հաստատելու համապատասխանությունն այս չափանիշին:</p>
10.2	<p>Նոր ձեռք բերված խոտհնձիչները պետք է լինեն կա՛մ էլեկտրական, կա՛մ ձեռքով աշխատող, կա՛մ կրեն Էկո պիտակ: (I)</p>	<p>Եթե հաստատությունն ունի կանաչ տարածքներ, ապա վերջին 12 ամիսների ընթացքում ձեռք բերված խոտհնձիչները պետք է լինեն Էներգախնայող և ունենան ցածր աղմկայնություն ու ածխածնային արտանետումներ: Խոտհնձիչները պետք է լինեն կա՛մ ձեռքով աշխատող, կա՛մ էլեկտրական, կա՛մ կրեն Էկո պիտակ:</p> <p>Եթե հաստատությունն ունի 4000մ<sup>2</sup>-ից մեծ մարգագետնային/ խոտածածկ տարածք, ապա այս չափանիշն ուղեցույց է:</p> <p>Եթե հաստատության կանաչ տարածքների ղեկավարումը կատարվում է արտաքին ընկերության կողմից, այդ դեպքում ևս այս չափանիշն ուղեցույց է:</p> <p>Առողջիտի ընթացքում հաստատությունը ներկայացնում է փաստաթղթեր՝ ապացուցելով, որ վերջին 12 ամիսների ընթացքում ձեռք բերված խոտհնձիչներն Էկոլոգիապես մաքուր են:</p>
10.3	<p>Սահմանված է ծաղիկների և այգու ոռոգման ընթացակարգ ջուրը խնայելու նպատակով: (I)</p>	<p>Պետք է սահմանված լինի ընթացակարգ՝ նվազագույնի հասցնելու ոռոգման ջրի սպառումը: Ոռոգման համակարգը կարող է ներառել, օրինակ, առավոտյան կամ երեկոյան ժամերին ոռոգման ընթացակարգ, սենսորային խոնավացուցիչ կամ կաթիլային համակարգ՝ նպատակաուղղված գոլորշացման նվազեցմանը և բույսերի ու արմատների համար լավագույն տարբերակն ապահովելուն: Սա կարող է ներառել նաև հավաքված անձրևաջրերի, կենցաղային վերամշակված կեղտաջրերի կամ ծաղիկների/ այգիների ոռոգման կեղտաջրերի օգտագործումը:</p>

		<p>Աուդիտի ընթացքում հաստատությունը ներկայացնում է կանաչ տարածքների ոռոգման վերաբերյալ իր գրավոր քաղաքականությունը, իսկ ոռոգման ընթացակարգերը, հնարավորության դեպքում, ստուգվում են տեղում:</p>
10.4	<p>Հաստատությունը ձեռնարկում է տարածքում տեղական կենսաբազմազանության պաշտպանության և աջակցության նախաձեռնություններ: (G)</p>	<p>Տեղական կենսաբազմազանությունը պաշտպանելու, աջակցելու և ընդլայնելու համար հաստատությունը, հնարավորության դեպքում, տարածքում ձեռնարկում է կենսաբազմազանության պայմաններին նպաստող քայլեր:</p> <p>Քայլերի օրինակներ են.</p> <ul style="list-style-type: none"> <li>• տարածքի կանաչապատում կամ Էկոլոգիական վերականգնում,</li> <li>• փոշոտողներին անհրաժեշտ կանաչ տարածքների ստեղծում/ պահպանում,</li> <li>• կանաչապատ կտուրների և/կամ կանաչ պատերի ստեղծում/ պահպանում,</li> <li>• տեղական տեսակներին սպառնացող ինվազիվ տեսակների ոչնչացում,</li> <li>• կանաչապատ կտուրների, կանաչ պատերի, այգիների և արտաքին այլ տարածքների համար բնիկ տեսակների օգտագործում,</li> <li>• տեղական տեսակների համար նպաստավոր պայմանների ապահովում (օրինակ՝ թռչնաբներ, միջատների հյուրանոցներ, փեթակներ և այլն),</li> <li>• հաստատությունում կամ հարակից տարածքներում տեղական տեսակների բնական միջավայրերի պաշտպանություն (ցամաքային կամ ջրային/ ծովային) (օրինակ՝ կրիաների բնադրավայրեր, մանգրային բույսեր, կորալային խութեր և այլն),</li> <li>• լուսավորության և աղմուկի նվազեցմամբ՝ տեղական կենսաբազմազանության ակտիվ պաշտպանություն հաստատության շատ այցելվող կամ կենդանիներով բնակեցված տարածքներում,</li> <li>• նախքան նոր կառույցների ու հաստատությունների շինարարություն ձեռնարկելը արտաքին կենսաբազմազանության գնահատում արտաքին փորձագետի կողմից:</li> </ul> <p>Քայլերը պետք է ակտիվորեն աջակցեն բուսական և կենդանական աշխարհների տեղական (տեղի/ բնիկ/ Էնդեմիկ/ հազվադեպ հանդիպող) տեսակներին: Ինվազիվ տեսակների ոչնչացումը պետք է կատարվի Էկոլոգիապես մաքուր կերպով:</p> <p>Այս չափանիշը գործում է նաև, եթե հաստատության կանաչ տարածքների ղեկավարումը կատարվում է արտաքին ընկերության կողմից:</p> <p>Աուդիտի ընթացքում հաստատությունը ներկայացնում է տեղական կենսաբազմազանությանն աջակցող և ինվազիվ տեսակներին ոչնչացնող կառավարման պլան կամ գործունեության ստանդարտ ընթացակարգ:</p> <p>Աուդիտի ժամանակ հաստատությունը ներկայացնում է՝ որքան նպաստավոր են եղել ստեղծված պայմանները</p>

		տեղական կենսաբազմազանության համար, կամ ինչպես են տարածքում պաշտպանվել տեղական տեսակների բնական միջավայրերը:
10.5	Հաստատությունը ձեռք է բերում բուսական և կենդանական աշխարհների միայն բնիկ տեսակներ և ակտիվորեն տարածքից ոչնչացնում է ինվազիվ օտար տեսակներին: (G)	<p>Տեղական կենսաբազմազանությունը պաշտպանելու և ինվազիվ օտար տեսակների ազդեցությունը տեղական էկոհամակարգի վրա նվազեցնելու համար հաստատությունն իր տարածքի համար ձեռք է բերում բուսական և կենդանական աշխարհների միայն բնիկ տեսակներ: Միևնույն ժամանակ հաստատությունն ակտիվորեն տարածքից ոչնչացնում է ինվազիվ օտար տեսակներին:</p> <p>Կարևոր է, որ կանաչ տարածքների պահպանության համար պատասխանատու աշխատակազմը վերապատրաստված և իրազեկ լինի բուսական և կենդանական աշխարհների ձեռք բերված տեղական տեսակների վերաբերյալ: Նաև կարևոր է, որ աշխատակազմը տեղեկացված լինի ինվազիվ օտար տեսակների սպառնալիքների, դրանք ճանաչելու և հեռացնելու ձևերի մասին: Ինվազիվ օտար տեսակների վերաբերյալ տեղեկությունը պետք է հաղորդվի համապատասխան իշխանություններին:</p> <p>Այս չափանիշը գործում է նաև, եթե հաստատության կանաչ տարածքների կառավարումը կատարվում է արտաքին ընկերության կողմից:</p> <p>Առևիտի ընթացքում հաստատությունը ներկայացնում է կանաչ տարածքների կառավարման իր պլանը կամ SOP-ը, որը ներառում է բուսական և կենդանական աշխարհների տեղական տեսակների ակտիվ ձեռքբերումը և ինվազիվ օտար տեսակների ակտիվ ոչնչացումը:</p>
10.6	Հաստատությունը տարածքում ունի մրգերի, խոտաբույսերի կամ բանջարեղենի այգի: (G)	<p>Իր էկոլոգիական ոտնահետքը նվազեցնելու համար հաստատությունը տարածքում ունի մրգերի, խոտաբույսերի կամ բանջարեղենի այգի:</p> <p>Այս չափանիշին համապատասխանելու համար այգին պետք է լինի մշտական և ներառի խոտաբույսեր և/կամ պտղատու բույսեր/ ծառեր: Բերքը պետք է դառնա հյուրերի փորձառության մի մաս (օրինակ՝ հաստատությունում այն սննդի կամ ըմպելիքի համար օգտագործել, նվերների խանութում բերքից ստացված ապրանքներ առաջարկել, հյուրերին բերքահավաքին մասնակից դարձնել և այլն) և/կամ օգտագործվի աշխատակազմի համար նախատեսված ճաշատեսակներում: Հնարավորության դեպքում հաստատությունը կարող է նաև պետական կամ մասնավոր դպրոցներին հրավիրել այգի՝ կրթական նպատակներով:</p> <p>Մրգերի, խոտաբույսերի և բանջարեղենի այգու կառավարումը պետք է համապատասխանի պետիցիոնների ու պարարտանյութերի օգտագործման վերաբերյալ պահանջներին (չափանիշ 10.1) և ոռոգման ընթացակարգերին (չափանիշ 10.3): Այգու կառավարման ու մրգերի/ բանջարեղենի/ խոտաբույսերի կիրառման համար անհրաժեշտ է հետևել հարցի վերաբերյալ ազգային/ տեղական կանոնադրությանը:</p>

		<p>Հաստատության հիմնական եկամուտը կամ դրա հիմնական մասն ապահովող գյուղատնտեսական գործառնությունները, ինչպիսիք են՝ խաղողի այգիները, ձիթապտղի ագարակները և այլն, ազատվում են այս չափանիշից:</p> <p>Առևտրի ընթացքում ստուգումը հաստատում է մրգերի, խոտաբույսերի կամ բանաջարեղենի այգու առկայությունը:</p>
--	--	--

**2. ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ**

<p>11.1</p>	<p>Հաստատությունը հավաստիացնում է, որ հետևում է համապատասխան բոլոր միջազգային/ազգային և տեղական օրենսդրություններին, այդ թվում՝ շրջակա միջավայրի, առողջապահության, անվտանգության և աշխատանքի բնագավառների կանոնադրությանը: (1)</p>	<p>Հաստատությունը հավաստիացնում է, որ օրինական կերպով ձեռք է բերել սեփականության, հողօգտագործման և ջրային համակարգի օգտագործման իրավունք՝ համապատասխան տեղական, համայնքային և տեղի ժողովրդի իրավունքներին (այդ թվում՝ նրանց ազատ, նախօրոք և իրազեկ համաձայնությամբ): Հաստատությունը հավաստիացնում է, որ իր բոլոր գործառնություններն ու միջոցառումները (այդ թվում՝ շրջակա միջավայրի տարածքները, աշխատանքը, առողջապահությունն ու անվտանգությունը) տեղի են ունենում համաձայն միջազգային/ազգային և տեղական օրենսդրություններին/կանոնադրություններին: Այն նաև հաստատում է, որ հարգում է տեղի շրջակա համայնքի իրավունքներն ու ստանդարտները:</p> <p>Ինչ վերաբերում է Էկոլոգիական պահանջներին համապատասխանությանը, պետք է ապահովել առնվազն հետևյալ պայմանները.</p> <ul style="list-style-type: none"> <li>• Ապահովել, որ հաստատության կառավարման հետ կապված գործողությունները Էական բացասական ազդեցություն չունենան բնական Էկոհամակարգերի և վայրի բնության վրա: Բնական Էկոհամակարգերի ցանկացած խախտում նվազեցվում է, վերականգնվում, և փոխհատուցող ներդրում է կատարվում պահպանման կառավարման գործում: Սա միշտ իրականացվում է ազգային/տեղական օրենսդրության համաձայն: Այս ամենը ներառում է նաև աղտոտվածության նվազեցման միջոցառումներ՝ աղմուկից և լույսից, ջրի հոսքից, Էրոզիայից, օզոնաբայթայիչ նյութերից, ինչպես նաև օդի, ջրի և հողի աղտոտիչներից:</li> <li>• Եթե հաստատությունը գտնվում է զգայուն կամ հատուկ պահպանվող տարածքին կից, ապա իրազեկ է տվյալ տարածքի զբոսաշրջային միջոցառումներին առնչվող կարգուկանոնին և հարգում է այն:</li> </ul> <p>Ինչ վերաբերում է աշխատանքային պահանջներին համապատասխանությանը, պետք է ապահովել առնվազն հետևյալ պայմանները.</p> <ul style="list-style-type: none"> <li>• Բոլոր աշխատակիցներին տրամադրվում է գրավոր տեղեկություն (պայմանագիր), որում նշվում են զբաղվածության դրույթներն ու պայմանները, այդ թվում՝ աշխատանքային ժամերի և վարձատրության վերաբերյալ տեղեկություն:</li> <li>• Բոլոր աշխատակիցներն ստանում են առնվազն ապրուստի համար անհրաժեշտ աշխատավարձ:</li> <li>• Նախքան աշխատանքի սկսելը ոչ մի աշխատակից չի ստանում գումար կամ վճարում կանխավճար, և</li> </ul>
-------------	--	--

		<p>աշխատանքը դադարեցնելիս բոլոր աշխատակիցները ստանում են իրենց հասանելի գումարը:</p> <ul style="list-style-type: none"> <li>• Բոլոր աշխատակիցներին տրամադրվում է գրավոր տեղեկություն աշխատանքային վարքագծի կանոնների/հաստատության քաղաքականությունների վերաբերյալ, և ծագող մտահոգությունների/բողոքների գրավոր ընթացակարգը:</li> <li>• 18 տարեկանը չլրացած բոլոր աշխատակիցների դեպքում հաստատությունը հետևում է ազգային կանոնակարգերին, ինչպես նաև Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիային և ԱՄԿ (Աշխատանքի միջազգային կազմակերպություն) 138/182 կոնվենցիաներին:</li> <li>• Բոլոր աշխատակիցներն ստանում են առանց խտրականության արդար վերաբերմունք (կապված աշխատանքի ընդունման, ընդհանուր զբաղվածության, վերապատրաստման, պարգևատրման հետ) :</li> <li>• Բոլոր աշխատակիցներն աշխատում են ապահով և անվտանգ միջավայրում:</li> <li>• Բոլոր աշխատակիցներին առաջընթացի համար առաջարկվում է կանոնավոր վերապատրաստում, փորձ և աճի հնարավորություններ:</li> <li>• Բոլոր աշխատակիցները կարող են իրենց աշխատանքային պայմանների վերաբերյալ ապահովել հետադարձ կապ (օրինակ՝ գնահատումների, աշխատակազմի գոհունակության հարցումների և այլ միջոցներով) :</li> <li>• Գործատուն պահում է աշխատավարձի վճարման բոլոր կտրոնների պատճենները և աշխատանքային ու լրացուցիչ մնացած ժամերի քանակի հաշվառում:</li> </ul> <p>Ինչ վերաբերում է առողջապահական և անվտանգային պահանջներին համապատասխանությանը, պետք է ապահովել առնվազն հետևյալ պայմանները.</p> <p>Բոլոր աշխատակիցներին տրամադրվում է առողջապահական և անվտանգության պահանջների վերաբերյալ տեղեկություն և վերապատրաստում:</p> <ul style="list-style-type: none"> <li>• Բոլոր աշխատակիցներն ունեն առողջապահական և անվտանգության գրավոր քաղաքականությունների և պլանների հասանելիություն:</li> <li>• Բոլոր հյուրերն ունեն հաստատության անվտանգությանն առնչվող գրավոր տեղեկության հասանելիություն:</li> </ul> <p>Ինչ վերաբերում է տեղի շրջակա համայնքի իրավունքներին և ստանդարտներին, պետք է ապահովել հետևյալ պայմանները.</p> <ul style="list-style-type: none"> <li>• Միջոցառումները բացասաբար չեն ազդում տեղացիների՝ ապրուստի միջոցի, հողային և ջրային ռեսուրսների օգտագործման, ճանապարհի իրավունքի, տրանսպորտի և բնակարանային հասանելիությանը (այդ թվում բնակիչների հարկադիր վերաբնակեցման) :</li> <li>• Միջոցառումները չեն վտանգում տարրական սննդի, ջրի և էներգիայի ապահովման, ինչպես նաև հարակից համայնքների առողջապահական և սանիտարական ծառայությունները:</li> <li>• Հաստատությունը չի խոչընդոտում տեղի բնակիչների հասանելիությունը տեղի պատմական, հնագիտական կամ մշակութային և հոգևոր առումով կարևոր սեփականություններին և վայրերին:</li> </ul>
--	--	---



		<ul style="list-style-type: none"> <li>• Կառույցների և ենթակառուցվածքների տեղակայումը, հողօգտագործումը, նախագծումը, կառուցումը, գործունեությունն ու ոչնչացումը համապատասխանում են տեղական գոտիավորման և պահպանության տակ գտնվող կամ ժառանգության տարածքի պահանջներին: Տեղակայման, նախագծման, ազդեցությունների գնահատման և հողային իրավունքների ու ձեռքբերման ժամանակ այն հաշվի է առնում բնական և մշակութային ժառանգության շրջակայքի ներուժն ու ընդգրկումը:</li> <li>• Հաստատությունը ճանաչում է տեղական զարգացման կանոններն և ճարտարապետական կառավարման ուղեցույցները և հետևում է դրանց:</li> </ul> <p>Առողիտի ընթացքում հաստատությունը ներկայացնում է գրավոր պնդում՝ հաստատելով միջազգային/ազգային և տեղական օրենսդրությանը, այդ թվում՝ շրջակա միջավայրի տարածքների, աշխատանքի, առողջապահության ու անվտանգության բնագավառների կանոնադրությանն իր համապատասխանությունը, ինչպես նաև հաստատելով տեղի շրջակա համայնքի իրավունքների և ստանդարտների հանդեպ իր հարգանքը: Տեղում ստուգումը հաստատում է համապատասխանությունը պահանջներին:</p>
11.2	<p>Հաստատությունը խուսափում է մանկական աշխատուժ օգտագործելուց/ ընդունելուց: (!)</p>	<p>Որպես հաստատության կորպորատիվ սոցիալական պատասխանատվության պայման՝ շատ կարևոր է, որ այն խուսափի մանկական աշխատուժ կամ մանկական աշխատուժ օգտագործող մատակարարների հետ պայմանագիր կնքելուց:</p> <p>Հաստատությունը միտված է հարգել երեխաների իրավունքները և պաշտպանել նրանց ցանկացած տեսակի շահագործումից, այդ թվում՝ սեռական շահագործումից: Խիստ խրախուսվում է, որ հաստատությունն այս պարտավորությունն ավելացնի իր կայունության (ԿՍՊ) քաղաքականությանը:</p> <p>Եթե աշխատակազմի անդամը նկատում է մանկական աշխատուժ կամ սեռական շահագործում, նա անմիջապես հաղորդում է այդ մասին տեղական իշխանություններին: Դրանից զատ, հաստատությունն իրազեկում է իր հյուրերին երեխայի աշխատանքի և դրանից խուսափելու ձևերի մասին:</p> <p>Առողիտի ընթացքում հաստատությունը ներկայացնում է փաստաթղթեր (օրինակ՝ իր ԿՍՊ քաղաքականությունը)՝ ցույց տալով, թե ինչպես է ապահովում այս չափանիշին համապատասխանությունը: Տեղում ստուգումը հաստատում է այս պահանջներին համապատասխանությունը:</p>
11.3	<p>Բույսերն ու կենդանիները, ինչպես նաև պատմական ու հնագիտական արտեֆակտները չեն վաճառվում, փոխանակվում կամ ցուցադրվում, բացի օրենքով</p>	<p>Հաստատության կորպորատիվ սոցիալական պատասխանատվության մասին իրազեկելու և բույսերի <a href="#">ուև</a> կենդանիների, օրինակ՝ Վայրի բուսական և կենդանական աշխարհի վտանգված տեսակների միջազգային առևտրի մասին կոնվենցիայի ցանկում տեղ գտած տեսակների պաշտպանելով՝ շրջակա միջավայրի կայունությանն աջակցելու համար հաստատությունը չի կազմակերպում տվյալ բույսերի կամ կենդանիների հավաք, վաճառք, փոխանակում կամ ցուցադրություն:</p> <p>Վայրի կենդանիների տեսակներ ձեռք չեն բերվում, բուծվում կամ պահվում գերության մեջ՝ բացառությամբ, պատշաճ կանոնակարգված գործունեության, և երբ դրանք պահվում են լիազորված մարմինների կողմից, որն ապահովում է</p>

	<p>թույլատրվածներից: (I)</p>	<p>համապատասխան սարքավորումներ, ինամբի ու կեցության պայմաններ: Վայրի և ընտանի կենդանիների տեղավորումը, ինամբը և վերահսկումը պետք է կատարվեն կենդանիների բարեկեցության ամենաբարձր ստանդարտներին համապատասխան: Ազատ տեղաշարժվող վայրի կենդանիների հետ հաստատության կազմակերպած շփումը պետք է լինի չմիջամտող և պատասխանատու կերպով վերահսկվող՝ խուսափելու տվյալ կենդանիների՝ վայրի բնության մեջ պոպուլյացիայի կենսունակության և վարքի վրա բացասական ազդեցությունից (հաշվի առնելով երկարաժամկետ ազդեցությունը):</p> <p>Պատմական և հնագիտական արտեֆակտները (արհեստափաստ) պաշտպանելու համար այդպիսի իրերը նույնպես չեն վաճառվում, փոխանակվում կամ ցուցադրվում:</p> <p>Հաստատությունը վաճառում, փոխանակում կամ ցուցադրում է բույսերն ու կենդանիները և/կամ պատմական և հնագիտական արտեֆակտները, միայն եթե տեղական և միջազգային/ազգային օրենսդրությունը թույլատրում է այն:</p> <p>Առողջի ընթացքում հաստատությունը ներկայացնում է փաստաթղթեր՝ ցույց տալով, թե ինչպես է համոզվում, որ բույսերի ու կենդանիների ոչ մի վտանգված տեսակ, պատմական և հնագիտական ոչ մի արտեֆակտ չի վաճառվում, փոխանակվում կամ ցուցադրվում: Եթե հաստատությունը վաճառում է առնչվող իրեր, ապա ազգային իշխանություններից ներկայացնում է դրանց վաճառքի, փոխանակման կամ ցուցադրության թույլտվություն:</p> <p>Տեղում գնության ժամանակ կատարվում է վաճառվող, փոխանակվող կամ ցուցադրվող բուսական/ կենդանական տեսակների կամ պատմական/ հնագիտական արտեֆակտների ստուգում:</p>
11.4	<p>Հաստատությունն ապահովում է հասանելիություն հատուկ կարիքներ ունեցող անձանց համար: (G)</p>	<p>Հասանելիություն ապահովելու և հաստատության կորպորատիվ սոցիալական պատասխանատվության մասին իրազեկելու համար հաստատությունը պետք է ապահովի հատուկ կարիքներ ունեցող անձանց հասանելիությունը: Հասանելիությունը վերաբերում է ինչպես հյուրերին, այնպես էլ աշխատակազմին և հաստատության այլ այցելուներին:</p> <p>Հատուկ կարիքներ ունեցող անձանց թվում են ֆիզիկական որոշակի հաշմանդամություն (անվասայլակով տեղաշարժվող, կույր և այլ անձինք) և առողջական առանձնահատուկ պայմաններ ունեցող անձինք:</p> <p>Այս չափանիշը ներառում է հասանելիություն դեպի հանրային վայրեր՝ մուտք և ընդունարան, միջոցառումների համար նախատեսված տարածքներ, ռեստորան, հասարակական զուգարան, լողավազաններ և այլն: Խորհուրդ է տրվում, որ հաստատությունը հասանելիություն ապահովի նաև հյուրերի սենյակներում և սանհանգույցներում: Խիստ խրախուսվում է, որ տարածքներն ստանան հաշմանդամների ազգային/ տեղական ասոցիացիայի հավանությունը:</p> <p>Որոշ հատուկ դեպքերում հաստատությունը կարող է իշխանությունների կողմից ազատվել հատուկ կարիքներ ունեցող</p>

		<p>անձանց հասանելիությանն առնչվող պահանջից, օրինակ՝ անվասայլակի հասանելիություն հին/ պատմական կառույցներում: Այդպիսի դեպքերում այս չափանիշը կիրառելի չէ:</p> <p>Հատուկ կարիքներ ունեցող անձանց հասանելիության մակարդակի մասին պետք է հստակորեն տեղեկացնել հյուրերին, աշխատակազմին և այլ այցելուներին: Հասանելիության վերաբերյալ տեղեկության առկայության դեպքում այցելուները կունենան խելամիտ ակնկալիքներ և կխուսափեն անհարկի տեղափոխությունից:</p> <p>Որպես «Green Key» ծրագրին միանալու պայման՝ հաստատությունը պետք է բոլոր նյութերում և հաղորդակցության մեջ իր տարածքների, ապրանքների և ծառայությունների մասին ապահովի ճշգրիտ, պարզ և դյուրըմբռնելի տեղեկություն: Հաստատությունը չպետք է խոստանա ավելին, քան կարող է իրականացնել:</p> <p>Առևտրի ընթացքում հաստատությունը ցույց է տալիս հատուկ կարիքներ ունեցող անձանց հասանելիությանն առնչվող ընթացակարգերը:</p>
11.5	<p>Հաստատությունն անաչառ է կանանց և տեղի փոքրամասնություններին աշխատանքի, այդ թվում՝ ղեկավար պաշտոններում ընդունելիս: (G)</p>	<p>Հավասար վերաբերմունքին և մարդու իրավունքներին նպաստելու և հաստատության կորպորատիվ սոցիալական պատասխանատվության մասին իրազեկելու համար հաստատությունը բոլոր պաշտոններում աշխատանքի է ընդունում անձանց՝ առանց տարիքի, ռասայի, գեղեցիկի, կրոնի, հաշմանդամության, սոցիալ-տնտեսական կարգավիճակի և այլ հիմքով խտրականության: Խիստ խրախուսվում է, որ հաստատությունն այս պարտավորությունն ավելացնի իր կայունության (ԿՄՊ) քաղաքականությունում:</p> <p>Հաստատության հարակից տարածքում բնակվող համայնքին աջակցելու համար կարևոր է, որ տեղի բնակիչներին (և հատկապես տեղի փոքրամասնություններին) տրվի հաստատության աշխատակից դառնալու հավասար հնարավորություն բոլոր, այդ թվում՝ ղեկավար պաշտոններում, և առաջարկվեն վերապատրաստումներ, հնարավորության դեպքում առաջխաղացում: Խիստ խրախուսվում է, որ հաստատությունն այս պարտավորությունը ևս ավելացնի իր կայունության (ԿՄՊ) քաղաքականությունում:</p> <p>Առևտրի ընթացքում հաստատությունը ներկայացնում է փաստաթղթեր (օրինակ՝ իր ԿՄՊ քաղաքականությունը), որոնք ցույց են տալիս, թե ինչպես է ապահովվում արդարացիությունը կանանց և տեղական փոքրամասնություններին աշխատանքի ընդունման հարցում, այդ թվում՝ ղեկավար պաշտոններում: Տեղում գնման ընթացքում կատարված դիտարկումները հավաստում են, որ պահանջները պահպանվել են:</p>
11.6	<p>Հաստատությունն ակտիվորեն աջակցում է բնապահպանական կամ</p>	<p>Բնապահպանական, տնտեսական և սոցիալ-մշակութային կայուն զարգացմանը նպաստելու և հաստատության կորպորատիվ սոցիալական պատասխանատվության մասին իրազեկելու համար հաստատությունն ակտիվորեն</p>

<p> </p> <p> </p> <p> </p>	<p>սոցիալ-համայնքային զարգացման առնվազն երկու միջոցառումների: (G)</p>	<p>աջակցում է կանաչ գործողություններին կամ սոցիալ-համայնքային զարգացման միջոցառումներին (այդ թվում՝ կրթական, առողջապահական, սանիտարական, ենթակառուցվածքային և այլն):</p> <p>Խրախուսվում է, որ աջակցությունը կենտրոնանա հաստատության շրջակայքի վրա, սակայն կարող են լինել աշխարհագրական այլ տարածքների նախագծեր:</p> <p>Հաստատության ակտիվ աջակցության օրինակներ են՝</p> <ul style="list-style-type: none"> <li>• ծառատունկը,</li> <li>• կանաչ տարածքների պահպանությունն ու վերականգնումը,</li> <li>• ջրային/ ծովային տարածքների կենսաբազմազանության պահպանությանը կամ Էկոլոգիական միջանցքներին և բաց տարածքների Էկոլոգիական վերականգնմանն ուղղված նախագծերը,</li> <li>• բնական և մշակութային զգայուն տարածքների պաշտպանությունը,</li> <li>• կլիմայի փոփոխության ազդեցությանն առնչվող նախագծերը,</li> <li>• արտաքին գործողությունները (Էկոլոգիապես մաքուր նավակայանների ստեղծում, բնական կածաններ), որոնք կարող է օգտագործել նաև հանրությունը,</li> <li>• բնապահպանական կամ կրթական նախաձեռնությունների հետ աշխատող դպրոցների կամ համայնքների հետ միջոցառումները,</li> <li>• հատուկ կարիքներ ունեցող անձանց (խոցելի և/կամ քիչ ռեսուրսներ ունեցող խմբերի) հետ միջոցառումները,</li> <li>• սոցիալական արդարություն և հավասար իրավունքներ խթանող միջոցառումները,</li> <li>• համայնքներում կենսական նշանակության՝ սննդի, ջրի, Էներգետիկ ծառայությունների, ինչպես նաև առողջապահական և սանիտարական ծառայությունների ապահովումը,</li> <li>• տեղի համայնքային խմբերի, օրինակ՝ դպրոցների կամ հասարակական կազմակերպությունների համար ժողովների և միջոցառումների տարածքի տրամադրումը՝ առանց վարձավճարի կամ իջեցված վարձավճարով,</li> <li>• ենթակառուցվածքային մարտահրավերների դեմ աջակցությունը (օրինակ՝ ջրամատակարարման) և այլն:</li> </ul> <p>Խիստ խրախուսվում են կենսաբազմազանությանն ու բնապահպանությանն (օրինակ՝ ծառատունկ, կանաչ տարածքների պահպանություն և վերականգնում, Էկոլոգիական միջանցքներին և Էկոլոգիական վերականգնմանն ուղղված նախագծեր և այլն) ուղղված գործողությունները/ նախաձեռնությունները:</p> <p>Խրախուսվում է, որ հաստատությունն իր աշխատակիցներին հնարավորություն տա աշխատանքային ժամերին իրենց ժամանակն ու ծառայությունը կամավոր կերպով նվիրաբերել այս գործողություններին/ նախաձեռնություններին, և որ հաստատությունը հաշվառի աշխատակիցների՝ կամավորության վրա ծախսած ժամանակը:</p>
----------------------------	---	--

		<p>Այս չափանիշին համապատասխանելու համար հաստատությունն ակտիվորեն աջակցում է առնվազն երկու գործողության/ նախաձեռնության:</p> <p>Առողիտի ընթացքում հաստատությունը ներկայացնում է փաստաթղթեր՝ ցույց տալով բնապահպանական կամ սոցիալ-համայնքային զարգացման առնվազն երկու միջոցառումներին իր ակտիվ աջակցությունը: Դրանից զատ, հաստատությունը ներկայացնում է աշխատակիցների՝ կամավորության վրա ծախսած ժամանակի հաշվառումը:</p>
11.7	<p>Հաստատությունը տեղական փոքր ձեռնարկատիրությունների և առաջարկում է տարածքի՝ բնության, պատմության և մշակույթի վրա հիմնված կայուն արտադրանքների զարգացման և վաճառքի միջոցներ: (G)</p>	<p>Տեղական սոցիալ-մշակութային և տնտեսական կայուն զարգացումը խթանելու և հաստատության կորպորատիվ սոցիալական պատասխանատվության մասին իրազեկելու համար հաստատությունը տեղական փոքր ձեռնարկատիրություններին առաջարկում է հաստատության տարածքի բնության, պատմության և մշակույթի վրա հիմնված կայուն արտադրանքների զարգացման և վաճառքի միջոցներ:</p> <p>Սա կարող է լինել հաստատության տարածքում փոքրիկ խանութի կամ տաղավարի տեսքով: Որպես այլընտրանք՝ հաստատությունը կարող է գնել և տվյալ տեղական արտադրանքներն առաջարկել իր հյուրերին:</p> <p>Արտադրանքները տեղական արտադրության են, արտադրվում են կայուն կերպով և հիմնված են տարածքի բնության, պատմության և մշակույթի վրա: Արտադրանքների հասանելիությունը կախված կլինի հաստատության բիզնես հայեցակարգից:</p> <p>Առողիտի ընթացքում հաստատությունը ներկայացնում է հաստատությունում կամ իրեն արտադրանքներ ու ծառայություններ մատուցող տեղական փոքր ձեռնարկատիրությունների հետ կնքած պայմանագրերը: Տեղում ստուգման ժամանակ հաստատվում է, որ տեղական փոքր ձեռնարկատիրությունները կարող են հաստատությունում/ հաստատությանը տրամադրել արտադրանքներ և ծառայություններ:</p>
11.8	<p>Հաստատությունը չի առաջարկում ընտելացրած կամ վայրի կենդանիներ ներառող ժամանց: (G)</p>	<p>Չբոսաշրջության ոլորտում կենդանիների բարեկեցությանը նպաստելու համար հաստատությունը չի առաջարկում ընտելացրած կամ վայրի կենդանիներ ներառող ժամանց: Սա վերաբերում է միայն հաստատությունում առաջարկվող շոուներին և ներկայացումներին, ինչպես նաև հյուրերի համար ցուցադրական լուսանկարներում օգտագործվող կենդանիներին:</p> <p>Առողիտի ընթացքում ներկայացվում է հյուրերի ժամանցի պլանը և ստուգվում է, որ այն չպարունակի կենդանիների հետ շոուներ և ներկայացումներ:</p>
11.9	<p>Եթե հաստատությունը կենդանիներ է պահում իր տարածքում, ապա պետք է</p>	<p>Չբոսաշրջության ոլորտում կենդանիների բարեկեցությանը նպաստելու և տեղական կենսաբազմազանությունը պաշտպանելու համար պետք է հետևել կենդանիների բարեկեցության ուղեցույցներին հաստատության տարածքում կենդանիներ պահելու դեպքում:</p>

	<p>հետևի կենդանիների բարեկեցության ուղեցույցներին: (G)</p>	<p>Տարածքում կենդանիների բարեկեցությունը գնահատելու համար պետք է հետևել Հինգ Ազատությունների (Five Freedoms) սկզբունքի վրա հիմնված <a href="#">ABTA ճանապարհորդական ասոցիացիայի` Չբոսաշրջության ոլորտում կենդանիների համաշխարհային բարեկեցության ուղեցույցին</a>:</p> <ol style="list-style-type: none"> <li>1. Լավ կերակրում. երկարատև քաղցի կամ ծարավի բացակայություն:</li> <li>2. Լավ տեղավորում. հանգստանալիս հարմարավետություն, ջերմային հարմարություն:</li> <li>3. Լավ առողջություն. պրոցեդուրաների ոչ պատշաճ կազմակերպման հետևանքով առաջացած վնասվածքների, հիվանդությունների և ցավի բացակայություն:</li> <li>4. Պատշաճ վարքագիծ. սոցիալական վարքի դրսևորում, բնական վարք, մարդ-կենդանի լավ հարաբերություններ, դրական էմոցիոնալ վիճակ:</li> <li>5. Վախից և անհանգստությունից պաշտպանություն. ընդհանուր վախի/ անհանգստության/ ապատիայի բացակայություն, գաղտնիություն/ ապաստարան փնտրելու կարողություն, մաշկի, հյուսվածքների, ատամների կամ ոսկրերի կառուցվածքի բժշկական իրական բուժման/ փոփոխության/ հանգստության նպատակից զատ այլ վիրաբուժական կամ ֆիզիկական փոփոխության բացակայություն:</li> </ol> <p>Սրանից զատ, հաստատությունը չի առաջարկում գերության մեջ պահվող վայրի կենդանու հետ ուղիղ շփում, ներկայացումներ, մարտեր կամ մրցավազքեր:</p> <p>Առողիտի ընթացքում ներկայացվում է գրավոր հաստատում առ այն, որ հաստատությունը կարդացել և հասկացել է կենդանիների բարեկեցության մասին վերոնշյալ ուղեցույցը, օրինակ` այն ավելացնելով կայունության քաղաքականությունում կամ ներկայացնելով կենդանիների պահպանության և ինսամքի ստանդարտ ընթացակարգը: Տեղում ստուգումը հաստատում է ուղեցույցին հետևելը:</p>
11.10	<p>Հաստատությունը ձևակերպում է կայուն գնումների քաղաքականություն (G)</p>	<p>Հաստատությունը ձևավորում և ընդունում է գնումների կայուն քաղաքականություն` առաջնահերթություն տալու Էկոլոգիապես և սոցիալապես կայուն մատակարարներին և ապրանքներին` նվազեցնելով ռեսուրսների անհարկի օգտագործումը, թափոնների գեներացումը և փոխադրում:</p> <p>Գնումների կայուն քաղաքականությունը ներառում է կապիտալ ապրանքներ, մնդամթերք/խմիչքներ, շինանյութեր և սպառվող նյութեր ինչպես նաև ծառայություններ:</p> <p>Գնումների կայուն քաղաքականությունը նպատակ ունի ապահովել կայուն գնումների ընդհանուր ըմբռնումը և կայուն գնումների ընդհանուր պահանջների նախանշումը, որոնց պետք է հետևի հաստատության անձնակազմը, բոլոր գնումների համար, որոնք կատարվում են մատակարարների և ուղղակիորեն ձեռնարկության կողմից: Գնումների կայուն քաղաքականությունը պետք է ներառի ինչպես բնապահպանական, այնպես էլ սոցիալական կայունության</p>

		<p>ասպեկտները:</p> <p>Հաստատության գնումների կայուն քաղաքականությունը սովորաբար վերանայվում է առնվազն յուրաքանչյուր երրորդ տարին մեկ: Եթե հաստատությունը միջազգային կամ ազգային շղթայի մաս է, ապա շղթայի կողմից կարող է ձևակերպվել միասնական գնումների կայուն քաղաքականություն և լինել կիրառելի նույն շղթայում գտնվող հաստատությունների համար:</p> <p>Գնումների կայուն քաղաքականության մշակումից հետո համապատասխան անձնակազմը տեղեկացվում է քաղաքականության մասին:</p> <p>Առևտրի ընթացքում հաստատությունը ներկայացնում է իր գնումների կայուն քաղաքականության փաստաթուղթը, և ստուգվում է, որ քաղաքականության վաղեմությունը երեք տարուց պակաս է: Հաստատությունը պետք է ներկայացնի նաև, թե ինչպես է անձնակազմը տեղեկացվում քաղաքականության մասին:</p>
11.11	<p>Այլևս չօգտագործվող նյութերը/ պաշարները հավաքվում և նվիրաբերվում են բարեգործական կազմակերպություններին: (G)</p>	<p>Էկոլոգիական ոտնահետքը նվազեցնելու և հաստատության կորպորատիվ սոցիալական պատասխանատվության մասին իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով, այն հավաքում և բարեգործական կազմակերպություններին (օրինակ՝ կարիքավոր մարդկանց աջակցող կազմակերպություններին և այլն) է նվիրաբերում այն նյութերն ու պարագաները, որոնց կարիքը հաստատությունն այլևս չունի, սակայն դրանք կարող են դեռևս օգտագործվել, վերօգտագործվել կամ վերավաճառվել բարեգործական կազմակերպությունների կողմից:</p> <p>Այս չափանիշին համապատասխանելու համար նյութը/ պիտույքները պետք է նվիրաբերվեն բարեգործական կազմակերպություններին նախորդ 12 ամիսների ընթացքում:</p> <p>Առևտրի ընթացքում հաստատությունը ներկայացնում է փաստաթղթեր, որոնք ցույց են տալիս, որ վերջին 12 ամիսների ընթացքում ավելորդ նյութը/ պաշարները նվիրաբերվել են բարեգործական կազմակերպություններին:</p>
<p><b>12. ԿԱՆԱԶ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ</b></p>		
12.1	<p>Մոտակա այգիների, լանդշաֆտի և բնության պահպանվող տարածքների մասին տեղեկությունը պետք է</p>	<p>Իր բնապահպանական/ կայունության պրոֆիլը ուժեղացնելու, հյուրերին խրախուսելու և իր կանաչ/ կայուն գործունեությանը ներգրավելու համար հաստատությունը տեղեկատվություն է տրամադրում մոտակա այգիների, լանդշաֆտի, բնության պահպանվող տարածքների և/կամ այլ զգայուն տարածքների մասին: Անհրաժեշտության դեպքում, տեղեկատվությունը ներառում է բնական միջավայրի, տեղական մշակույթի և մշակութային ժառանգության, ինչպես նաև այս տարածքներն այցելելիս պահանջվող վարքագծի մասին բացատրությունը: Տե՛ս նաև չափանիշ 12.4:</p>

	<p>հասանելի լինի հյուրերին: (I)</p>	<p>Տեղեկությունը ներառում է քաջալերումներ, որպեսզի հյուրերն ընտրեն մոտակա բացօթյա կամ կանաչ տարածքն իրազեկման, բայց նաև բարեկեցության նպատակով: Տեղեկատվությունը կարող է խրախուսել զբոսանք, վազք, հեծանիվ վարել, լող, առազաստանավ ու կանոն վարել, թռչունների դիտել, պիկնիկ, բացօթյա խաղահրապարակներ և այլն:</p> <p>Բնական տարածքներ, տեղի համայնքներ և մշակութային և/կամ պատմականորեն զգայուն վայրեր այցելությունների համար տեղեկատվությունը խրախուսում է հետևել միջազգային և ազգային լավ փորձին և տեղական ուղեցույցներին՝ նվազագույնի հասցնելու բացասական ազդեցությունները և առավելագույնի հասցնելու տեղական օգուտներն ու այցելուների գոհունակությունը: Կարևոր է, որ բնական ջրային/ ծովային կամ ցամաքային տարածքներ այցելությունները չունենան բացասական ազդեցություն տարածքների կենսաբազմազանության վրա, այլ դրականորեն նպաստեն կենսաբազմազանության պահպանմանը:</p> <p>Տեղեկատվությունը կարելի է ստանալ ընդունարանից/ կոնսիերժից, նախասրահում գտնվող բնապահպանական անկյունից, հանրային վայրերում հեռուստատեսային մոնիթորների, համաժողովների և հյուրերի սենյակներում, հյուրերի/ հանդիպումների սենյակներում տեղադրված սարքերի, հյուրերի հավելվածների և այլնի միջոցով:</p> <p>Չնայած տեղեկատվությունը ուղղված է հյուրերին՝ հաստատությունը նույնպես կարող է նմանատիպ տեղեկություն տրամադրել իր անձնակազմին:</p> <p>Որպես Green Key ծրագրին միանալու մաս՝ հաստատությունը պետք է բոլոր նյութերում և հաղորդակցության մեջ տրամադրի ճշգրիտ, պարզ և դյուրըմբռնելի տեղեկություններ:</p> <p>Վուդիտի ընթացքում (տեսողական ստուգում) հաստատությունը ներկայացնում է հյուրերին մոտակա այգիների, լանդշաֆտի, բնության պահպանվող տարածքների, բնիկ համայնքների կամ հետաքրքրություն ներկայացնող մշակութային/ պատմական վայրերի մասին տրամադրված տեղեկությունը (ներառյալ՝ մեկնաբանությունը, լավ փորձը/ ուղեցույցը և այցելությունների վարքագծի կանոնները, վայրերը կամ տարածքները): Ստուգվում է, որ տեղեկատվությունը լինի ճշգրիտ, պարզ և դյուրըմբռնելի:</p>
12.2	<p>Հաստատությունը պետք է տեղեկություն տրամադրի հեծանիվներ վարձելու կամ փոխառելու մոտակա վայրի մասին: (I)</p>	<p>Կայուն տրանսպորտի օգտագործումը խթանելու համար հաստատությունը տեղեկություն է տրամադրում հեծանիվներ վերցնելու կամ վարձակալելու ամենամոտ վայրի մասին:</p> <p>Տեղեկությունը կարելի է ստանալ ընդունարանից/ կոնսիերժից, նախասրահում գտնվող բնապահպանական անկյունից, հանրային վայրերում հեռուստատեսային մոնիթորների, համաժողովների կամ հյուրերի սենյակներում, կամ հյուրերի/ հանդիպումների սենյակներում առկա սարքերի միջոցով:</p>



		<p>Չնայած տեղեկատվությունը ուղղված է հյուրերին՝ հաստատությունը նույնպես կարող է նմանատիպ տեղեկություն տրամադրել իր անձնակազմին:</p> <p>Եթե հաստատությունը գտնվում է այնպիսի տարածքում, որտեղ հեծանիվ վարելն անհնար է վտանգավոր երթևեկության, եղանակային ծայրահեղ պայմանների կամ այլ հատուկ հանգամանքների պատճառով, ապա հաստատությունն ազատվում է չափանիշին համապատասխանելուց:</p> <p>Որպես Green Key ծրագրին միանալու մաս՝ հաստատությունը պետք է բոլոր նյութերում և հաղորդակցության մեջ տրամադրի ճշգրիտ, պարզ և դյուրըմբռնելի տեղեկություն:</p> <p>Առևտրի (տեսողական ստուգման) ընթացքում հաստատությունը հյուրերին ներկայացնում է հեծանիվներ վարձելու կամ փոխառելու մոտակա վայրի մասին տեղեկությունը: Ստուգվում է, որ տեղեկությունը լինի ճշգրիտ, պարզ և դյուրըմբռնելի:</p>
12.3	<p>Հյուրերը կարող են հեծանիվներ վարձակալել կամ վերցնել հաստատությունից (G)</p>	<p>Կայուն տրանսպորտի օգտագործումը խրախուսելու նպատակով, հաստատությունը հյուրերին հնարավորություն է տալիս վարձակալել կամ վերցնել հեծանիվներ հենց հաստատությունից:</p> <p>Տեղեկությունը կարելի է ստանալ ընդունարանում/ կոնսիերժի միջոցով, նախասրահի բնապահպանական անկյունից, հասարակական տարածքներում, համաժողովների դահլիճներում կամ հյուրերի սենյակներում տեղադրված հեռուստացույցների էկրաններից կամ հյուրերի/հանդիպումների սենյակներում առկա թղթապանակներից:</p> <p>Եթե հաստատությունը գտնվում է տարածքում, որտեղ հեծանվավազքը անհնար է շատ վտանգավոր երթևեկության, ծայրահեղ եղանակային պայմանների կամ այլ հատուկ հանգամանքների պատճառով, ապա այս չափանիշը կիրառելի չէ:</p> <p>«Green Key» ծրագրին միանալու շրջանակում հաստատությունը պարտավոր է ամբողջ նյութում և հաղորդակցության մեջ տրամադրել ճշգրիտ, հստակ և դյուրըմբռնելի տեղեկություն: Հաստատությունը չի խոստանում ավելին, քան կարող է իրականացնել:</p> <p>Առևտրի ընթացքում ստուգվում է հեծանիվների առկայությունը հաստատությունում:</p>
12.4	<p>Հաստատությունը խթանում է</p>	<p>Տեղական կենսաբազմազանությունը, կենդանիների բարեկեցությունը, մշակույթը և համայնքը պաշտպանելու նպատակով, հաստատությունն իր հյուրերին տրամադրում է տեղեկություն, որը խթանում է պատասխանատու</p>

<p>պատասխանատու զբոսաշրջային վարքագիծը այցելվող վայրում (G)</p>	<p>վարքագիծը այցելվող վայրում:</p> <p>Տեղեկատվությունը, օրինակ, կարող է ներառել հետևյալը.</p> <ul style="list-style-type: none"> <li>• Բնական տարածքներ, տեղի համայնքներ և մշակութային և/կամ պատմականորեն զգայուն վայրեր, այցելությունների համար վարքագծի կանոններ և լավագույն փորձի խորհուրդներ: Սա ներառում է, օրինակ, հագուստի և վարքագծի կանոնները, փակման սեզոնի կամ արգելված տարածքների մասին տեղեկություն և այլն (որտեղ անհրաժեշտ է),</li> <li>• Տեղեկություն Կապույտ դրոշով (Blue Flag) պարգևատրված մոտակա լողափերի կամ նավահանգիստների մասին,</li> <li>• Տեղեկություն պատասխանատու զբոսաշրջային վայրերի և տուրօպերատորների մասին (ներառյալ Կապույտ դրոշով պարգևատրված նավով զբոսաշրջության օպերատորները),</li> <li>• Կենդանիների բարեկեցության իրավունքները հարգող զբոսաշրջային օպերատորների մասին տեղեկություն. <a href="#">ABTA-ի Գլոբալ բարեկեցության ուղեցույց կենդանիների համար զբոսաշրջության մեջ (Global Welfare Guidance for Animals in Tourism)</a> (տե՛ս չափանիշ 11.9), ինչպես նաև ուղղակի կապի բացակայություն գերության մեջ գտնվող վայրի կենդանիների, կենդանիների ներկայացումների, կռիվների և ցեղերի հետ:</li> <li>• Տեղեկություն ազատ տեղաշարժվող/գաղթող վայրի բնության հետ փոխգործակցության մասին, որը ոչ ինվազիվ է և պատասխանատու կերպով խուսափել է համապատասխան կենդանիների վրա բացասական ազդեցություններից, ինչպես նաև վայրի բնության պոպուլյացիաների կենսունակության և վարքագծի վրա,</li> <li>• Հուշանվերների ուղեցույցներ, որոնք բացատրում են, թե որ ապրանքները կարելի է գնել և որոնք՝ ոչ,</li> <li>• Տեղեկություն ռեստորանների մասին, որոնք չեն առաջարկում անհետացող տեսակներ,</li> <li>• Տեղեկություն ռեստորանների, խանութների և շուկաների մասին, որոնք վաճառում են ավանդական և տեղական ուտեստներ և ապրանքներ,</li> <li>• Տեղեկություն այն մասին, թե ինչպես հյուրերը կարող են անհանգստություն չառաջացնել տեղի բնակիչների համար, օրինակ՝ վարքագծի կանոններ խիտ բնակեցված տարածքներում աղմուկային աղտոտումը կանխելու համար և այլն:</li> <li>• Այցելվող վայրում արտադրվող թափոնների քանակը նվազեցնելու նախաձեռնություններ, օրինակ՝ տեղեկություն ջրի շշերի լիցքավորման կայանների կամ հանրային տարածքներում վերամշակման համակարգի, բազմակի օգտագործման ջրի շշերի կամ գնումների պայուսակների տրամադրման և այլնի մասին:</li> </ul> <p>Որպես Green Key ծրագրին միանալու մաս՝ հաստատությունը պետք է բոլոր նյութերում և հաղորդակցության մեջ</p>
---	--

		<p>տրամադրի ճշգրիտ, պարզ և դյուրըմբռնելի տեղեկատվություն:</p> <p>Առևտրի ընթացքում հաստատությունը հյուրերին տրամադրում է տեղեկություն, որը նպաստում է տվյալ վայրում պատասխանատու վարքագծին:</p>
12.5	<p>Հաստատությունն իր հյուրերի համար իրականացնում է իրազեկման բարձրացման միջոցառումներ՝ ուղղված բնության տարածքներում կամ տեղական համայնքում կայուն զարգացմանը և շրջակա միջավայրին: (G)</p>	<p>Հյուրերի կայունության մասին իրազեկվածությունը բարձրացնելու համար հաստատությունը կազմակերպում է իրազեկման միջոցառումներ՝ ուղղված բնության տարածքներում կամ շրջակայքում կայուն զարգացմանը և շրջակա միջավայրին և:</p> <p>Իրազեկման միջոցառումները կարող են ներառել խրախուսում մասնակցելու Երկրի ժամին, Երկրի օրվան, Էներգախնայողության շաբաթին, թափոնների կրճատման շաբաթին, սննդի համաշխարհային օրվան, վեգանների համաշխարհային օրվան, բուսակերների համաշխարհային օրվան, շրջակա միջավայրի համաշխարհային օրվան և այլն: Դրանք կարող են ներառել նաև առանց մեքենաների գործունեության խթանում, էքսկուրսիաներ դեպի կանաչ տարածքներ ձեռնարկության տարածքում կամ մոտակա տարածքներում, մասնակցություն ծառատունկի միջոցառումներին կամ կլիմայի փոփոխության այլ ակցիաներին, փոշոտողների հարմար տեղական կանաչ տարածքների հիմնում կամ, բուսական և կենդանական աշխարհը պաշտպանող այլ միջոցառումներ, բերքահավաք և մթերման միջոցառումներ, լողափերի մաքրման միջոցառումներ, դպրոցների հետ կրթական միջոցառումների մասնակցություն, բարեգործական միջոցառումներ և այլն:</p> <p>Հիմնադրամը հատկապես նպաստում է կենսաբազմազանության պահպանմանը՝ ներառյալ բնական պահպանվող տարածքներին և կենսաբազմազանության բարձր արժեք ունեցող տարածքներին աջակցելը:</p> <p>Պետք է ապահովվի, որ բոլոր գործողությունները (ներառյալ բերքահավաքը և մթերումը) իրականացվեն միայն որպես կանոնակարգված գործունեության մի մաս, որը երաշխավորում է դրանց օգտագործումը կայուն և տեղական, ազգային և միջազգային օրենքներին համապատասխան:</p> <p>Այս չափանիշին համապատասխանելու համար հաստատության հյուրերը պետք է ակտիվորեն ներգրավված լինեն: Խրախուսվում է նաև, որ հաստատությունը նաև անձնակազմին ներգրավի այդ աշխատանքներին:</p> <p>Առևտրի ընթացքում հաստատությունը ներկայացնում է փաստաթղթեր (սկարներ, համաձայնագրեր, մարքեթինգային նյութեր և այլն), որոնք ցույց են տալիս վերջին 12 ամիսների ընթացքում իրականացված և առաջիկա 12 ամիսների համար նախատեսված իրազեկման աշխատանքները:</p>

**13. ՎԱՐՉԱՎԱՐԳ**

<p>13.1</p>	<p>Հաստատության կողմից արտադրված կամ պատվիրված տպագրական թղթի, ծրարների և տպագիր նյութի գնումների առնվազն 75%-ը Էկոպիտակավորված կամ արտադրված է բնապահպանական կառավարման համակարգ ունեցող ընկերության կողմից: (I)</p>	<p>Էներգիայի և թափոնների սպառումը նվազեցնելու (և դրանով իսկ Էկոլոգիական ոտնահետքը կրճատելու) նպատակով տպագրական թղթի, ծրարների և տպագրական նյութերի օգտագործումը պահվում է նվազագույն մակարդակի վրա: Տպագրական թուղթը, ծրարներն ու տպագրական նյութերն ունեն Էկոպիտակ, օրինակ՝ ԵՄ Էկոպիտակ, FSC պիտակ (ցանկայի է FSC Recycled կամ FSC Mix) կամ արտադրված են այնպիսի ընկերության կողմից, որն ունի շրջակա միջավայրի կառավարման համակարգ:</p> <p>Պահանջը վերաբերում է վերջին 12 ամիսների ընթացքում գնված կամ արտադրված տպագրական թղթի, ծրարների և տպագրական նյութերի առնվազն 75%-ին:</p> <p>Վուդփոի ընթացքում հաստատությունը ներկայացնում է փաստաթղթեր, որոնք ցույց են տալիս, որ վերջին 12 ամիսների ընթացքում գնված տպագրական թուղթը, ծրարներն ու տպագրական նյութերը ունեն Էկոպիտակ, վերամշակված են կամ արտադրված են շրջակա միջավայրի կառավարման համակարգ ունեցող ընկերության կողմից: Վուդփոի ընթացքում կատարված դիտարկումները հաստատում են պահանջների համապատասխանությունը:</p>
<p>13.2</p>	<p>Հաստատությունը նախաձեռնում է քայլեր՝ նվազեցնելու թղթի օգտագործումը ընդունարանում, գրասենյակներում և հյուրերի/ հանդիպումների սենյակներում (I)</p>	<p>Էներգիայի սպառումը, ռեսուրսների օգտագործումը և թղթի օգտագործման հետ կապված թափոնների առաջացումը նվազեցնելու միջոցով Էկոլոգիական ոտնահետքը կրճատելու համար, հաստատությունը նախաձեռնում է քայլեր՝ նվազեցնելու թղթի օգտագործումը գրասենյակներում, հյուրասենյակներում և հանդիպումների սենյակներում:</p> <p>Թղթի օգտագործումը նվազեցնելու նախաձեռնությունները կարող են ներառել թղթի սահմանափակ քանակ հյուրերի սենյակներում և հանդիպումների սենյակներում, օրինակ՝ մի քանի թուղթ հասանելի լինի միայն փոքր չափով (A5՝ A4-ի փոխարեն), թուղթը հասանելի լինի միայն ըստ պահանջի, թուղթը հասանելի լինի միայն կենտրոնական սեղանի վրա հանդիպումների սենյակներում, հասանելի լինեն պլանշետներ նշումներ անելու համար (թղթի փոխարեն) և այլն:</p> <p>Գրասենյակներում նախաձեռնությունները կարող են ներառել փաստաթղթերի տպագրության սահմանափակման խրախուսում, երկու կողմերով տպագրություն և/կամ թղթի վերօգտագործում նշումների համար և այլն:</p> <p>Նախաձեռնությունները կարող են ներառել հաշիվ-ապրանքագրեր չտպելը, քանի դեռ չի պահանջվել (կամ ուղարկվել էլեկտրոնային փոստով), տպագիր հաշիվ-ապրանքագրերի համար ծրարներ չօգտագործելը և այլն:</p> <p>Գրասենյակներից և ընդունարանից բացի այլ հատվածներում աշխատող անձնակազմը նույնպես խրախուսվում է հնարավորության դեպքում նվազեցնել թղթի օգտագործումը:</p> <p>Այս չափանիշին համապատասխանելու համար կազմակերպությունը նախաձեռնում է նվազեցնել թղթի օգտագործումը գործունեության առնվազն երկու ոլորտում:</p>

		<p>Աուդիտի ընթացքում հաստատությունը տեղեկություն է ներկայացնում գործունեության առնվազն երկու ոլորտում թղթի օգտագործումը նվազեցնելու իրենց նախաձեռնությունների մասին, և աուդիտի ընթացքում հաստատվում են նախաձեռնությունները:</p>
13.3	<p>Հաստատությունը տեղեկացնում է իր մատակարարներին իր կայունության պարտավորությունների մասին և խստորեն խրախուսում է մատակարարներին հետևել կայունության նույն պարտավորություններին: (I)</p>	<p>Քանի որ հաստատությունը կանոնավոր կապի մեջ է իր արտադրանքի/ ծառայությունների մատակարարների հետ, այն տեղեկացնում է բոլոր մատակարարներին իր բնապահպանական, կլիմայի փոփոխության և կայունության նախաձեռնությունների մասին՝ ներառյալ Green Key-ի մասին: Տեղեկատվությունը ներառում է ռեսուրսների օգտագործման կրճատման, ավելի մաքուր և ռեսուրսային այլընտրանքների (ներառյալ տրանսպորտի) օգտագործման և սոցիալական չափանիշներին հավատարիմ լինելու մասին:</p> <p>Տեղեկությունը տրամադրվում է գրավոր հաղորդակցության կամ համատեղ հանդիպումների միջոցով և այլն:</p> <p>Ավելին, մատակարարներին խստորեն խրախուսվում է կառավարել իրենց գործունեությունը Green Key չափանիշներին համապատասխան՝ նույն ոգով, ինչ Green Key ծրագիրը՝ կապված կայունության կառավարման հետ:</p> <p>Աուդիտի ընթացքում հաստատությունը ներկայացնում է փաստաթղթեր (օրինակ՝ գրավոր տեղեկություն), որը ցույց է տալիս, որ մատակարարները տեղեկացված են ձեռնարկության բնապահպանական և կայունության նախաձեռնությունների մասին և խրախուսվել են կառավարել իրենց գործունեությունը նույն ոգով կամ հետևելով Green Key չափանիշներին:</p>
13.4	<p>Հաստատությունն ապահովում է, որ իր մատակարարների առնվազն 75%-ը ունենա Էկո-սերտիֆիկացում, գրավոր բնապահպանական քաղաքականություն և/կամ հավատարիմ լինի կայուն զարգացմանը: (G)</p>	<p>Քանի որ հաստատությունը կանոնավոր կապի մեջ է իր արտադրանքի/ ծառայության մատակարարների հետ, այն ապահովում է, որ իր մատակարարների առնվազն 75%-ը լինի Էկո-սերտիֆիկացված, ունենա բնապահպանական կառավարման համակարգ, գրավոր բնապահպանական քաղաքականություն և/կամ այլ կերպ ցուցաբերի հավատարմությունը դեպի կայուն զարգացում:</p> <p>Աուդիտի ընթացքում հաստատությունը ներկայացնում է փաստաթղթեր (մատակարարների ցանկ, ներառյալ նրանց Էկո-սերտիֆիկացումը), որը ցույց է տալիս, որ իր մատակարարների առնվազն 75%-ը Էկո-սերտիֆիկացված է, ունի բնապահպանական կառավարման համակարգ, գրավոր բնապահպանական քաղաքականություն և/կամ կայուն զարգացման այլ ուղղվածություն:</p>
13.5	<p>Գնված կամ վարձակալված տեքստիլի առնվազն երեք կատեգորիա Էկոլոգիապես մաքուր են. (G)</p>	<p>Բնապահպանական ոտնահետքը նվազեցնելու համար հաստատությունը երաշխավորում է, որ գնված կամ վարձակալված տեքստիլները Էկոլոգիապես մաքուր են:</p> <p>Այս չափանիշին համապատասխանելու համար տեքստիլ արտադրանքի առնվազն երեք կատեգորիա, օրինակ՝ սրբիչները, անկողնու սավանները, սփռոցները, տեքստիլ անձեռոցիկները, անձնակազմի համազգեստը և այլն, ունեն միջազգային կամ ազգային ճանաչված Էկոպիտակ կամ արդար առևտրի պիտակ: 100% վերամշակված նյութից</p>

		<p>պատրաստված տեքստիլները նույնպես համապատասխանում են այս չափանիշին:</p> <p>Խորհուրդ է տրվում, որ ձեռնարկությունները նաև ընտրեն բնական մանրաթելից պատրաստված տեքստիլ, որն աճեցվում է թունաքիմիկատների ցածր մակարդակով և/կամ հեշտությամբ վերամշակվող նյութերով (օրինակ՝ մեկ մանրաթելից գործվածքներ), ինչպես նաև բարձր որակով տեքստիլ: Բարձրորակ տեքստիլը սովորաբար ավելի դիմակայուն է, ինչը երկարաժամկետ հեռանկարում դառնում է տնտեսապես ավելի առողջ: Այն նաև նվազեցնում է հումքի սպառումը և թափոնների ստեղծումը: Մտածե՛ք նաև օգտագործել կյանքը երկարացնող միջոցներ, ինչպիսիք են՝ ներթափանցիկ և բարձի պաշտպանիչները:</p> <p>Առդիտի ընթացքում հաստատությունը ներկայացնում է փաստաթղթեր, որոնք ցույց են տալիս, որ գնված կամ վարձակալված տեքստիլի ապրանքների առնվազն երեք կատեգորիաներ ունեն միջազգային կամ ազգային Էկոպիտակ, և/կամ արդար առևտրի պիտակ կամ պատրաստված են 100% վերամշակված նյութից:</p>
13.6	<p>Եթե լվացքի ծառայությունը փոխանցվում է արտաքին ընկերությանը, ապա այս ընկերությունը գտնվում է հաստատությունից 100 կմ հեռավորության վրա: (G)</p>	<p>Լվացքի տեղափոխման արդյունքում առաջացած ածխածնային հետքը նվազեցնելու համար կազմակերպությունն ընտրում է լվացքի ծառայություններ, որոնք գտնվում են հաստատությունից ոչ ավելի, քան 100 կմ հեռավորության վրա:</p> <p>Եթե ձեռնարկությունը հոգում է ամբողջ լվացքի ծառայությունը իր հաստատությունում, ապա այս չափանիշը կիրառելի չէ:</p> <p>Առդիտի ընթացքում հաստատությունը ներկայացնում է փաստաթղթեր, որոնք ցույց են տալիս, որ լվացքի ծառայության գտնվելու վայրը 100 կմ-ից պակաս է:</p>
13.7	<p>Նոր գնված երկարակյաց ապրանքների առնվազն 75%-ն ունի Էկոպիտակ կամ արտադրվում է բնապահպանական կառավարման համակարգ ունեցող ընկերության կողմից: (G)</p>	<p>Էկոլոգիապես մաքուր և կայուն ապրանքների արտադրությունն ապահովելու համար վերջին 12 ամսվա ընթացքում գնված երկարակյաց ապրանքներն ունեն Էկոպիտակ կամ արտադրվում են բնապահպանական կառավարման համակարգ ունեցող ընկերության կողմից:</p> <p>Երկարակյաց ապրանքներն այն ապրանքներն են, որոնք պատրաստված են կրկնակի և երկարատև օգտագործման համար և ներառում են կահույք, գորգեր, սպասք և այլն: Էլեկտրոնային սարքերը այս չափանիշի մաս չեն, քանի որ դրանք ներառված են 7-րդ բաժնում:</p> <p>Առդիտի ընթացքում հաստատությունը ներկայացնում է փաստաթղթեր, որոնք ցույց են տալիս, որ վերջին 12 ամիսների ընթացքում գնված երկարաժամկետ ապրանքների առնվազն 75%-ն ունի Էկոպիտակ կամ արտադրված է բնապահպանական կառավարման համակարգ ունեցող ընկերության կողմից:</p>
13.8	<p>Հաստատությունը վերանորոգում կամ</p>	<p>Որպեսզի հաստատությունը նվազեցնի իր բնապահպանական ոտնահետքը նոր արտադրված երկարակյաց ապրանքների կրճատման միջոցով, ձեռնարկությունը վերանորոգում կամ վերամշակում է սեփական երկարակյաց</p>

	<p>վերամշակում է սեփական երկարակյաց ապրանքները կամ գնում է օգտագործված երկարակյաց ապրանքներ: (G)</p>	<p>ապրանքները կամ ձեռք է բերում օգտագործված երկարակյաց ապրանքներ վերջին 12 ամսվա ընթացքում:</p> <p>Երկարակյաց ապրանքներն այն ապրանքներն են, որոնք պատրաստված են կրկնակի և երկարատև օգտագործման համար և ներառում են կահույք, գորգեր, սպասք և այլն: Օգտագործված Էլեկտրոնային սարքեր գնելիս՝ պետք է հաշվի առնել այդ ապրանքների Էներգաարդյունավետությունը:</p> <p>Առողիտի ընթացքում հաստատությունը ներկայացնում է փաստաթղթեր, որոնք ցույց են տալիս, որ վերջին 12 ամիսների ընթացքում նա ակտիվորեն վերամշակել է սեփական երկարակյաց ապրանքները կամ գնել է օգտագործված երկարակյաց ապրանքներ:</p>
13.9	<p>Հաստատություն մտնող մեքենաները երկու թուղթից ավելի պարապուրդի չեն մատնվում: (G)</p>	<p>Օդի աղտոտվածությունը և ռեսուրսների օգտագործումը նվազեցնելու նպատակով հաստատություն մտնող մեքենաները պարապուրդի չեն մատնվում (աշխատող շարժիչներով)՝ մարդկանց կամ ապրանքները վերցնելիս կամ բեռնաթափելիս:</p> <p>Հաստատության մեքենաները կարող են շարժիչը աշխատեցնել առավելագույնը երկու թուղթ: Եթե ազգային կամ տեղական օրենսդրությունն ավելի խիստ է, քան առավելագույն թույլատրելի երկու թուղթ, ապա գերակայում է ազգային/ տեղական օրենսդրությունը:</p> <p>Այս չափանիշին համապատասխանելու համար հաստատությունը պետք է ունենա քաղաքականություն առավելագույնը երկու թուղթ պարապուրդի մեջ գտնվող տրանսպորտային միջոցների համար: Քաղաքականությունը համապատասխանաբար ներկայացվում է հյուրերին և անձնակազմին: Դա կարելի է անել հաստատության մուտքի մոտ գտնվող ցուցանակների միջոցով: Այն կարող է ներառվել նաև տրանսպորտային միջոցներ օգտագործող հաստատության անձնակազմի SOP-ում, ինչպես նաև կոնսիերժի SOP-ում, որը հաստատություն ժամանող հյուրերին տեղեկացնում է հաստատության պարապուրդի չմատնելու քաղաքականության մասին:</p> <p>Առողիտի ընթացքում հաստատությունը ներկայացնում է իր քաղաքականությունը՝ տրանսպորտային միջոցները հաստատությունում առավելագույնը երկու թուղթ անգործության մատնելու վերաբերյալ, ինչպես նաև իր աշխատանքը՝ հյուրերին և անձնակազմին ծանոթացնելու քաղաքականությանը:</p>
13.10	<p>Խրախուսվում է անձնակազմի կողմից Էկոլոգիապես մաքուր տրանսպորտային միջոցների օգտագործումը: (G)</p>	<p>Օդի աղտոտվածությունը նվազեցնելու և առողջությունը բարելավելու նպատակով հաստատության աշխատակիցներն աշխատանքի գնալու համար օգտագործում են Էկոլոգիապես մաքուր տրանսպորտային միջոցներ:</p> <p>Էկոլոգիապես մաքուր փոխադրումները ներառում են հեծանիվներ, հասարակական տրանսպորտ (ավտոբուս, գնացք, տրամվայ, նավ և այլն), Էլեկտրական մեքենաները, ավտոմեքենաների համատեղ օգտագործման ծրագրերը, անձնակազմի համար մաքոբային (shuttle) ավտոբուսների համակարգեր և այլն:</p>

		<p>Հաստատությունը կարող է խրախուսել Էկոլոգիապես մաքուր տրանսպորտի օգտագործումը բանավոր կամ գրավոր հաղորդակցության միջոցով: Հաստատությունը կարող է տրամադրել համապատասխան հարմարություններ (անվտանգ և լավ հեծանիվների կայանատեղ, Էլեկտրական մեքենաների լիցքավորման կայաններ և այլն) և/կամ կարող է առաջարկել ֆինանսական խթաններ (օրինակ՝ տրամադրել հասարակական տրանսպորտից օգտվելու տոմսեր, կայանման/ հոգալ Էլեկտրական մեքենաների լիցքավորման/կայանման ծախսերը, տրամադրել անվճար shuttle ավտոբուս, առաջարկել քարվուլինգ և այլն):</p> <p>Առողջիտի ընթացքում հաստատությունը ներկայացնում է փաստաթղթեր, որոնք ցույց են տալիս, թե ինչպես է հաստատությունը խրախուսում անձնակազմին օգտվել Էկոլոգիապես մաքուր տրանսպորտից: Հնարավորության դեպքում համապատասխանությունը ստուգվում է հաստատություն այցի ժամանակ:</p>
--	--	---